

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ 5

ԳԻՏԱ-ՊՈՊՈԽՅԱՆ ՍԵՐԻԱ

№ 5

Խ. ԳՅՈՒՂԵԿՅԱՆ

Կենսաբանական գիտությունների
թեկնածու

ԴԱԲՎԻ ԻՆԻ ԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940



ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ 5

ԳԻՏԱ-ՊՈՊՈԽՅԱՐ ՍԵՐԻԱ.

№ 5

575.4

9-67

Խ. ԳՅՈՒՂԵՑԿՅԱՆ


Կենսաբանական գիտությունների
բեկածու

ԱՍՈՒԳՎԱՆ Հ. 1961 թ.

ԴԱՐՎԻՆԻ ԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

15992

3330



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940

Յլովիալ Ամողոր Ե—1352, պատկեր 334, տիբաժ 800
Պետամալստրանի Հբատաբակչության ապաբան, Յերևան

ՊԱՅՔԱՐ ԴԱՐՎԻՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ

Դարվինիզմը որդանական աշխարհի պատմական զարգացման (եվլուցցիայի) որինաչափությունների գիտությունն եւ Եվոլուցցիան վորակապես նոր ձևերի առաջացման և զարդացման պրոցեսն եւ, ձևեր, վորոնք սերտ կերպով և հաջորդականորեն կապված են պատմական անցյալի ձևերի հետ և միաժամանակ գտնվում են փոխադարձ աղղակցության մեջ:

Համաձայն Դարվինի տեսության՝ որդանական աշխարհի Եվլուցցիան կատարվում և իրենց ապրած կոնկրետ միջավայրի պայմաններին լավագույն ձեռվ հարմարված որդանիզմների ընտրությամբ:

Ըստրությունը, բազմացման համար պահպանելով ամենաշատ հարմարված որդանիզմներին, դրանով իսկ հանդես եւ գալիս վորպես եվլուցցիայի ստեղծագործող Փակտոր։ Ահա այս եւ դարվինիզմի հիմքը:

Ըստրությանը տալով եվլուցցիայի շարժիչ ուժի խոշոր գեր, Դարվինը միաժամանակ չթերագնահատեց փոփոխականության և ժառանգականության պրոցեսների՝ վորպես եվլուցցիայի մյուս շարժիչ ուժերի գերը՝ նա ընդունեց այդ յերեք Փակտորների՝ վորպես եվլուցցիայի հիմնական շարժիչ ուժերի միասնությունը:

Փափոխականությունը, ժառանգականությունը և ընտրությունը տալիս են որդանական ձևերի հարաբերական նպատակահարմար կառուցվածքների մատերիալիստական բացատրությունը, հետևաբար անհրաժեշտություն չի զգացվում դիմելու միտիվիայի և աստվածային ուժերի ոգնության, վորոնցով իդեալիստները, վիտալիստները և կրոնականները բացատրում են որդանական նպատակահարմարությունը:

Դարվինն ապացուցեց, վոր ընության մեջ գոյություն ունեցող հարաբերական նպատակահարմարությունները, ինչպես և ամբողջ բազմազան բուսական և կենդանական ձևերի ծագումը, — ներառյալ նաև մարդու ծագումը, — զարդացման ընապատմական պրոցեսների արդյունքն են:

Բնության մեջ չկան կայուն, անփոփոխ որդանական ձևեր, կենդանիներ և բույսեր. Նրանց բաղմազանությունը արդյունք է պատմական զարգացման: Հստ Դարվինի ուսմունքի՝ նոր տեսակի կենդանիների ու բույսերի առաջացումը և հների մահացումը պայմանավորված ե վոչ թե աստվածների արարչագործական ակտով, կամ այլ միստիկական ուժերով, այլ արդյունք և բնապատմական պրոցեսների:

Լենինն իր «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները» աշխատության մեջ գրում ե. «Դարվինը վերջ ե դնում կենդանիների և բույսերի տեսակների մասին յեղած այն հայացքին, թե տեսակները վոչնչով կապված չեն միմյանց հետ և պատահականորեն «ստեղծված են աստծու կողմից», և առաջին անգամ դնում ե կենսաբանությունը գիտական հողի վրա՝ հաստատելով տեսակների փոփոխականությունը և նրանց մեջ յեղած ժառանգականությունը...»:

Դարվինն, խկապես, բացարձակ կերպով ապացուցեց բուսական և կենդանական ձևերի փոփոխականությունը՝ վորպես նրանց հիմնական հատկություն: Այդ փոփոխությունները կատարվում են վորոշ ուղղությամբ և բույսերն ու կենդանիները նպատակահարմարություն կատարելագործվում են ընտրության միջոցով, վորով ել պայմանավորվում ե նոր կենդանական և բուսական ձևերի ծագումը: Այսպիսով Դարվինը վերացրեց բնության մասին յեղած մետաֆիզիկական աշխարհայացքը և մահացու հարված հասցրեց թերեղողիային և կրոնին: Վճռականորեն մի կողմ նետելով թերեղողիան և ամեն տեսակի իդեալիստական և միստիկական սկզբունք՝ նա առաջին անգամ եվոլյուցիոն գաղափարին տվեց խիստ կայուն մատերիալիստական բացարձություն: Այսպիսով նա վոչ միայն եվոլյուցիոն ուսմունքը, այլ ամբողջ կենսաբանությունը գրեց գիտական հողի վրա:

Նման հեղաշրջող, ըստ եյության հեղափոխական տեսությունը, իհարկե, չեր կարող իր շուրջը չառաջացնել սուր դասակարգային պայքար: Արդյունաբերական կապիտալիզմի մոնոպոլիստականի վերածվելու և պրոլետարիատի հեղափոխական պայքարի աճման կապակցությամբ այդ պայքարը վոչ միայն չթուլացավ, այլ գնալով ավելի սրվեց, ընդունելով բոլոր տեսակի հսարակոր ձևեր:

Դարվինի «Ծեսակների ծագումը» լույս տեսնելուց հետո,

նրա ուսմունքի շուրջը մեծ աղմուկ բարձրացավ Յեվրոպայում և Ամերիկայում: Դիտնականները բաժանվել ենին յերկու խմբի, վորոնցից մեկը ընդունում ու պաշտպանում եր Դարվինի տեսությունը, մյուսը, ընդհակառակը՝ աշխատում եր ապացուցել, վոր Դարվինն անմիտ է, իսկ նրա ուսմունքը—ցնդաբանություն:

Ամեն տեսակի նախատինք, հայոյանք թափեցին Դարվինի գլխին, իսկ հատկապես հոգեորականները, վորոնք անընդունակ եին ըմբռնելու Դարվինի ուսմունքի եյտությունը և յեխում եյին կրոնական դիրքավորումներից, նրան անվանեցին՝ «անաստված», «հավատ քանդող» և այլն:

Հակառակորդների շարքում կային մեծ հոչակ վայելող բազմաթիվ գիտնականներ, ինչպես որինակ՝ Լուի Ագասիսը, Ֆլուրանսը, Ռենը, Կելլեկերը, Վիրխովը և այլն:

Դարվինիզմի պաշտպաններից հիշատակության արժանի յեն առաջին հերթին Տիմիրյազեվը, Հյոքուլին, Հեկիելը և Ազա-Գրեյը: Այս գիտնականները, վորպես Դարվինի ուսմունքի պաշտպաններ, խոշոր գեր խաղացին նրա ուսմունքը տարածելու, զարգացնելու և հակառակորդների գեմ պայքար կազմակերպելու գործում:

Մուսաստանի պայմաններում, վորպես հեղափոխական գիտնական՝ Դարվինիզմի ուսմունքի պաշտպան հանդես յեկավ Տիմիրյազերը: Հանձին Տիմիրյազեկի և մի շաբք ուրիշ յերիշասարդ տաղանդավոր գիտնականների՝ Դարվինի ուսմունքն ունեցավ իր հավատարիմ ու անվեճեր պաշտպաններն ու պրոպագանդիստները:

«Ճեսակների ծագման» ոռւսական հրատարակության կապակցությամբ լույս տեսան մի շաբք հողվածներ, վորոնց հեղինակները, ինչպես որինակ՝ Անտանովիչը, Պիսարել և ուրիշները, բարյացակամ վերաբերմունք ցույց տվին այդ աշխատանքին: Հողվածներից մեկն ել՝ «Դարվինի գիրքը և նրա քննադատներն ու կոմենտատորները» գրել եր կ. Ա. Տիմիրյազերը: Այդ հոդվածում նա, վորպես մատերիալիստական գիտության մարտիկ, ցույց տվեց Դարվինի յեղակացությունների ճշտությունը: Թեև ուկըզրնական շրջանում Դարվինի ուսմունքին համակրական վերաբերմունք ցույց տրվեց Ռուսաստանում, մանավանդ յերիտասարդ գիտնականների կողմից, բայց հետագայում, յերբ Դարվինի գեմ մղվող պայքարը սրվեց Յեվրոպայում, նման պայքար ստեղծվեց նաև Ռուսաստանում:

Այդ պայքարը ծայր առավ այն ժամանակվանից, յերբ լույս ընծայվեց Դանիլսկու «Դարվինիզմ» խորագրով գիրքը: Հեղի-

նակը այդ գրքում հանդես ե գալիս դարվինիզմի ամենաարժենագործ հիմունքների քննադատությամբ։ Որինակ՝ նա ընական լնարությունը համարում է պատահականություն։ Այդ աշխատությունը գուցե փորեն հետևանք չունենար, յոթե 1887 թվին Դանիլսոնը հետեւորդ մի ուրիշ հակադարվինիստ՝ Ստրախովը իր մի հոգվածում («Դարվինիզմի լրիվ ժխտումը») բարձր գնահատական չտար այդ աշխատությանը։ Ստրախովը փորձ է անում մեկ առ մեկ ժխտելու Դարվինի հիմնական դրույթները և հարձակումներ ե գործում Տիմիրյազեի վրա, վորն արդեն Ռուսաստանում հայտնի յեր վորապես դարվինիստ։

Ստրախովի հոգվածին վորապես պատասխան՝ Տիմիրյազեը հրապարակային մի գեկուցում և կարդում և ուժեղ քննադատության և յենթարկում Դանիլսով գիրքը և Ստրախովի հոգվածը։

Դանիլսոնը գրքի նկատմամբ ծագած պոլեմիկան ուղարկան ինտելիգենցիայի լայն խորպերի ուշադրությունը դրավեց։

Այդ բոլորին վորապես վերջնական պատասխան՝ Տիմիրյազեը գրում է մի հոգված՝ «Հակադարվինիստների անուժ չարանկնդությունը», վորտեղ հեղինակը սքանչելի կերպով կարողանում է ապացուցել Դարվինի ուսմունքի դեմ կատարված հարձակումների հակագիտական լինելը։

Դարվինի ուսմունքի դեմ հանդես յեկալ նաև դարվինիզմի թշնամի և յեկեղեցու ու կրոնի պաշտպան Տիմոմիրովը՝ Տիմիրյազե, դարվինիզմի համար մղած իր պայքարին զուգընթաց, հրատարակեց մի շարք պոպուլյար և գիտական աշխատություններ՝ «Դարվինը և նրա ուսմունքը», «Պատմական մեթոդ կենսաբանության մեջ», «Բույսերի կյանքը», «Դիտություն և գեմոլրատիա» և այլն, վորոնցով վոչ միայն պաշտպանեց Դարվինի դրույթները, այլև կոնկրետ, նոր փաստական տվյալների հիման վրա ապացուցեց նրա տեսության ճշմարտությունը և նրա ուսմունքը զարգացման ավելի բարձր աստիճանի հասցըց։

Ռուսական հակադարվինիստները հաջողություն չունեցան և 19-րդ դարում ուսւ հասարակության դարդացած խավերը ընդհանրապես բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեցին Դարվինի ուսմունքի նկատմամբ։

Ակադեմիկ Մենզբերը Տիմիրյազեի հետ միասին խոշոր ջանքեր թափեց Դարվինի աշխատանքները հրատարակելու և տարածելու գործում։

Սոցիալիստական հեղափոխությունից հետո մեր Ռուսակա-

յին հայրենիքը դարձավ Դարվինի ուսմունքի խնկական որբանը և հաղթական պրոլետարիատը հանդիսացավ առաջափոր հեղափոխական գիտության՝ այդ թվում նաև դարվինիզմի դրոշակակիրը:

Մեր յերկրում Դարվինի հեղափոխական ուսմունքն արդեն դարձել է լայն մասսաների սեփականություն և, շնորհիվ մեր խորհրդային դարվինիստների, այդ ուսմունքը իր դարձացման ավելի բարձր աստիճանին և հասել:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարքսիզմի կլասիկները մեզ սովորեցնում են, թե մարդկային հասարակության սլատմությունը դասակարգերի պայքարի պատմությունն և Բայց քանի վոր ընության պատմությունը և հասարակության պատմությունը անխզելի կերպով իրար հետ կապված են և փոխադարձաբար միմյանց պայմանավորում են, ուստի և դասակարգային պայքարն իր ազդեցությունը թողնում են նաև ընական պատմությունը ուսումնասիրող գիտության և գիտնականների վրա, նրանց տեսությունների վրա:

Գիտությունը ևս կուսակցական և, դասակարգային ե:

Անա գրա համար ել թող դարմանալի չթվա, վոր ինչ պես գիտության բոլոր ընադավառներում, այնպես ել կենսաբանական գիտությունների մեջ մարդկային հասարակության զարդացման տարբեր եպոխաներում գոյություն են ունեցել տարբեր հակադիր տեսակետներ ու տեսություններ, հատկապես փոփոխականության ու ժառանգականության և ընդհանրապես եպուցիչն ուսմունքի նկատմամբ:

Կենսաբանության բոլոր ընադավառներն ել այս կամ այն չափով գործ ունեն փոփոխականության ու ժառանգականության յերեսութների հետ: Ուրիշ կերպ չեր ել կարող լինել քանի վոր փոփոխականությունը և ժառանգականությունը, ընտրության հետ միասին, եվոլյուցիայի շարժիչ ուժերն են Դարվինի ուսմունքի մեջ, վորը միակ ճիշտ հետեղական մատերիալիստական եվոլյուցիոն ուսմունքն ե: Այդ ֆակտորներից վորեւ մեկի բացակայության դեպքում եվոլյուցիոն զարգացումը հնարավոր չե ինչպես ընական, նույնպես և կուլտուրական պայմաններում՝ մեր սելեկցիոն պրակտիկայում: Այդ ֆակտորները գործում են միասնաբար: Այստեղից ել յերեսում ե, վոր փոփոխակա-

նությունը և ժառանգականությունը ընդհանուր բիոլոգիական խնդիրներ են:

Քանի վոր փոփոխականությունն ու ժառանգականությունը եվլուցիայի շարժիչ ուժերն են, պարզ ե, վոր եվլուցիոն զարդացման պրոցեսից դուրս, ընտրությունից անկախ հնարավոր չեռաւումնասիրել և հասկանալ այդ բարդ յերկույթներն ու նրանց որինաչափությունները: Այդ պրոցեսներն ընտրությունից և զարգացման պրոցեսի որինաչափություններից կտրված ուսումնասիրելու ամեն փորձ հանդել ե և հանգելու յե հակադարձինիստական, վիտալիստական և միտաֆիզիկական տեսակետների:

«Դիալեկտիկան բնությունը դիտում ե վոչ թե վորպես միմյանցից կտրված, միմյանցից մեկուսացած և միմյանցից կախում չունեցող առարկաների, յերկույթների պատսհական կուտակում,—այլ վորպես կապակցված, միամական ամբողջություն, վորտեղ առարկաները, յերկույթներն որպանապես կապված են միմյանց հետ, կախում ունեն միմյանցից և պայմանավորում են միմյանց:

Ուստի դիալեկտիկական մեթոդը գտնում է, վոր բնության մեջ վոչ մի յերեւյթ չի կարող հասկացվել, յեթե այն վերցնենք մեկուսացած ձևով, շրջապատող յերեւյթների կապակցությունից դուրս, վորովհետև բնության ամեն մի բնագավառում ամեն մի յերեւյթ կարող ե վերածվել անհեթեթության, յեթե այն դիտենք շրջապատող պայմանների կապակցությունից դուրս, նըանցից կտրված ձևով, և, ընդհակառակ՝ ամեն մի յերեւլույթ կարող ե ըմբռնվել ու հիմնավորվել, յեթե այն դիտվում ե շրջապատող յերեւյթների հետ իր ունեցած անխնելի կապակցության մեջ, իր պայմանագրվածությամբ՝ իրեն շրջապատող յերեւյթներով»¹:

Ֆորմալ գենետիկները, ավտոպենետիկները գենետիկան համարում են այն միակ դիտությունը, վորը ուսումնասիրում և ուսումնասիրելու յե փոփոխականության ու ժառանգականության յերեւյթները, այսինքն, նըանք հավակնություն ունեն այդ բարդ ընդհանուր բիոլոգիական, եվլուցիայի շարժիչ ուժեր հանդիսացող յերեւյթներն ուսումնասիրել մոնոպոլ ձևով՝ միայն գենետիկայի ոգնությամբ ու գենետիկական սեթոդիներով և անալիգներով (այն ել սխալ), անկախ զարգացումից, Փիզիոլոգիայից,

¹ ՀամեԿ (բ) Կ պատմության համառոտ դասընթաց, 1938 թ., հջ 142

ընտրությունից, բիոքիմիայից և, վերջապես, անկախ եվոլուցիոն պրոցեսից:

Այսպիսով նրանք, անտեսելով՝ դիալեկտիկայի վերոհիշյալ տարրական պահանջները, շեղվել են դարվինիզմից, միրճվել անհեթեթության մեջ, գնացել հակադարվինիստական մետաֆիզիկական, վիտալիստական և մեխանիստական ուղղություններով:

Ահա այս տեսակետից մոտենալով փոփոխականության և ժառանգականության յերկույթներն ուսումնասիրելու և ըմբռնելու խնդրին, պետք է ասել վոր բիոլոգիայի, գյուղատնտեսության և զոտեխնիկայի բնագավառում յեղել են և կան հիմնականում յերկու հակադիր մոտեցումներ՝ դարվինիստական և հակադարվինիստական:

Մեր այսորվա սոցիալիստական պրակտիկայի տեսակետից յեներով, մեզ համար ամենակարենոր և վճռական նշանակություն ունի Դարվինի եվոլուցիոն ուսմունքի այն խնդիրը, թե արդյոք մեր սելեկցիոն պրակտիկայում հնարավներ են, ըստ մեր տնտեսության պահանջների, բույսերի և կենդանիների եվոլուցիային կանխամըտածված, ծրագրված ձևով ուղղություն տալի Այլ կերպ ասած՝ հնարավներ են բույսերի և կենդանիների ժառանգական հիմքը, ընույթը, գենոտիպը փոխել:

Այս հարցը մեզ համար վոչ միայն տեսական խոշոր, այլև վերին աստիճանի գործնական նշանակություն ունի:

Կյանքը, պրակտիկան, մեր խորհրդագյին արտադրողական ուժերի հետագա զարգացումը, վոր նախատեսված ե 18-րդ համագումարի կողմից հաստատված 3-րդ հնգամյա պլանում, նախկինում գոյություն ունեցող հին տրադիցիաների, նորմաների սահմանականության մեջ մեր լուսաբանության մեջ առաջարկված է առաջարկական խնդիր և զրել՝ ուժեղ կերպով բարձրացնել մեր զաշտերի բերքատվությունը, անառնապահության մթերատվությունը և ապահովել մեր ժողովրդի ու արդյունաբերության աճող բազմակողմանի պահանջները: Այդ առաջարկությունները հաջող կերպով կատարելու և գերակատարելու համար անհրաժեշտ ե վոչ միայն բարելավել գաշտավարության ու անասնապահության կազմակերպումը, տեխնիկան, աղբուսեխնիկան և զոտեխնիկական ձեռնարկումները, այլև ստանալ բույսերի և կենդանիների նոր, ավելի բերքատու և մթերատու սորտեր և ցեղեր, վորոնք հարմարված են մեր Միության տարբեր շրջաններին, վորոնք իրենց կլիմայական, հողային, ջրային պայմաններով իրարից խիստ տարբերվում են, ստանալ

այնպիսի սորտեր, վորոնք հարմարված լինեն մեր մեքենայացված պայմաններին, ցրտին, տաքին, չորությանն ու խոնավությանը, դիմանան զանազան հիմանդրություններին և այլն:

Դարպինը և մեր խորհրդային դարվինիստները, վորոնց հետևում են մեր բիոլոգների, ազրոնների ու զոտեխնիկների մեծ մասը, գտնում են, վոր այդ հնարավոր և Սակայն դժբախտաբար դեռևս կան գիտնականներ, վորոնք գտնում են, թե այդ կամ ընալ հնարավոր չե, կամ, լավագույն դեպքում, հնարավոր և միայն վերին աստիճանի սահմանափակ շրջաններում:

Այս վերջինները կարծում են, թե ևվոլուցիոն պրոցեսը բնության մեջ անորոշ բնույթ ունի, ուստի նրանք պնդում են, թե վոչ սի կերպ հնարավոր չե մեղ ցանկալի ծրագրված ուղղությամբ փոխել որդանիդմների ժառանգական բնույթը, նրանց գենոտիպը:

Նրանք գտնում են, վոր բույսերի նոր սորտեր և կենդանիների նոր ցեղեր հնարավոր և ստեղծել միայն յերկու ծնողների դուգավորմամբ կամ նրանց մեջ արդեն յեղած ժառանգական հատկությունները տրամախաչմամբ միացնելով:

Ահա, ըստ եյության, այս հիմնական հարցի շուրջն և, վոր հատկապես վերջին տարիները մեղ մոտ, Խորհրդային Միության դիտական շրջաններում, դիսկուսիա յե գնում: Այդ յերկու հակադիր տեսակետներն իրենց արտահայտությունը գտնում են ինչպես հետազոտական աշխատանքներում, նույնպես և պրակտիկայում:

Զարգացման, փոփոխականության և ժառանգականության խնդիրները հին դարերից սկսած միշտ ել հետաքրքել են մարդկությանը: Տարբեր ժամանակներում տարբեր ձևով գիտնականները աշխատել են լուծել բիոլոգիայի այդ հիմնական խնդիրները՝ համաձայն տիրող հասարակական կառուցվածքի, իրենց ձեռքբ տակ յեղած նյութերի, կատարված գիտողությունների և այլն:

Դեռ հին Հունաստանում զարգացման խնդրի նկատմամբ դրսերվեցին յերկու հակադիր ուղղություններ, վորոնք միայն 17—18-րդ դարերում վերջնականապես ձևակերպվեցին վորպես ուրույն տեսություններ՝ պրեֆորմիստական և եպիգենետիկական: Զարգացման այդ յերկու հակադիր տեսակետների համաձայն պարզաբանվեցին նաև ժառանգականության և փոփոխականության խնդիրները:

Բժշկության հիմնագիր հույն փիլիսոփա Հիպատոկրատը շատ
պարզ ձեռվ արտահայտեց պղբեֆորմացիայի տեսակետը, վորի
համաձայն սեռական բջիջներում պարունակվում են բոլոր որո-
գանների և մարմնի մասերի սաղմերը (zacataki): Ժառանդակա-
նությունն այն է, վոր ծնողներից զավակներին են փոխանցվում
նրանց մարմնի առանձին մասերի սաղմերը: Այստեղից ել ծնունդ
և առնում ձեռք բերովի հատկանիշների ժառանգելիությունը:
Հիպատոկրատը վորպես բժիշկ կարծում եր, թե առողջ մասերից
առողջ սաղմեր են ժառանգվում, իսկ հիվանդ մասերից՝ հիվանդ:
Ինչպես տեսնում ենք՝ այստեղ զարգացման պրոցեսն անտեսվում
է և զարգացումը նույնացվում է աճման հետ: Ամեն ինչ մինիա-
տուր ձեռվ արգեն կա բազմացման որգաններում, անհրաժեշտ է
միայն, վոր նրանք աճեն, մեծանան:

Հետազայում յերկար ժամանակ այդ տեսակետն ունեցավ
իր բաղմաթիվ հետեւրդները:

Մյուս ծայրահեղ տեսակետը տվեց Արիստոտելը, ըստ վորի
զարգացումը կատարվում է, վորովինետև չվերամշակված, հում,
կոշտ նյութը, վորը գալիս և մորից՝ շնչավորվում է հոր սերմի
միջոցով: Ուրեմն հոր սերմի մեջ պարունակվում է վորոյ տիպի
զարգացման որինաչափություն: Նա, զարգացման իր այդ
հասկացողության հետ հաշտեցրեց նաև ժառանգականության իր
հասկացողությունը, ըստ վորի սերմը առաջ և գալիս միայն
սերմից, վորը անջատվում է զարգացման ժամանակ: Նա այդ
խնդրում ուժեղ քննազատության յենթարկեց Հիպատոկրատին,
վորը ասում եր՝ սերմը գալիս և մարմնի մասերից:

Ուրեմն, համաձայն Արիստոտելի, զարգացման յուրահատ-
կությունների պատճառը վոչ թե նյութական սուբստրատի
յուրահատկությունն է, այլ հոր կողմից ստացված, ինչ վոր մէ
վոչ նյութական, կերպարանափոխող, շնչավորող մի սկզբունք:

Հետազայում զարգացման և ժառանգականության այս տե-
սակետը ոգտագործեցին վիտալիստներն ու տվեցին կյանքի
ուժի ենտելիխիայի հասկացողությունները: Այսպիսով Արիստո-
տելի այս տեսակետը նախատիպն է եպիգենեզի տեսության:
Եպիգենեզիսն ունեցավ իր բազմաթիվ հետեւրդները՝ հանձին Վոլ-
ֆի, Դրիշի, Բլյումենբախի և ուրիշների: Արիստոտելի ժառան-
գականության սկզբունքն ել ունեցավ իր հետեւրդները՝ հանձին
Կալդոնի, Վայսմանի, Յոհաննսոնի, Նասբաումի, Մորգանի և ներ-
կայիս Փորմալ գենետիկների:

Յեթե Հիպոկրատը զարգացման պրոցեսը պատկերացնում
եր մատերիալիստորեն, բայց մեխանիստորեն, ապա Արիս-
տոտելը, ընդհակառակը՝ վոչ մատերիալիստորեն:

Մինչև 17-րդ դարը զարգացման խնդրում տիրապետում եր
պրեֆորմիստական տեսակետը, այսինքն՝ զարգացման խնդիրը
վորպես այդպիսին չկար, կար արդեն յեղածի, աճման, մեծաց-
ման խնդիր, այսինքն՝ զարգացումը հավասար և աճման: Այս
տեսակետը պաշտպանեցին Մալիկին, Լեվինհուկը, Կալեն, Պո-
նեն, Սվամերդամը և ուրիշները:

17-րդ դարի սկզբներից սկսվում և վորոշ եքսպերիմենտալ
աշխատանք, վորի հիման վրա սկսեցին քննազատել պրեֆորմիս-
տական տեսակետը և զարգացվեց եպիկենետիկ տեսությունը,
վորը վերջնականապես ձևակերպվեց 1764 թ. Վոլֆի կողմից,
ըստ վորի միատարր նյութից ստացվում են որգանիզմի տարրեր
մասերը և որգանները (դիֆերենցիալիան): Ուրեմն, ինչ վոր մի
ներքին ուժ գոյություն ունի: Սաղմի մեջ վոչ մի ստրուկտորա
չկա, նու հոմոգեն մի նյութ և, վորը սկսում և զարգանալ ներ-
քին ինչ վոր սպեցիֆիկ մի ուժի աղջեցության տակ:

Ինչպես Արիստոտելը, նույնպես և Վոլֆը առաջ քաշեցին
զարգացման խնդիրը վորպես այդպիսին, բայց չունենալով փորձ-
նական տվյալներ՝ բնականաբար չկարողացան լուծել:

Զարգացման եյությունը, ըստ Նրանց, վոչ նյութական մի
ուժի մեջ և, վորը գտնվում և զարգացումից դուրս: Զարգացման
եյությունը չի յենթարկվում պատճառականության որենքին:
Այստեղ եյությունը անջատվում և յերեսոյթից:

19-րդ դարի սկզբում, չորհիվ սաղմնաբանության, հիստո-
րոգիայի, քիմիայի, նորից սկսեց զարգանալ պրեֆորմիստական
տեսությունը, բայց այս անգամ տարրեր սկզբունքի վրա:

Համաձայն այդ պրեֆորմիստական ձևափոխված տեսու-
թյան՝ ձուն և սերմը չեն պարունակում որգանիզմի մասերի և
որգանների սաղմերը—մինիատորիան, բայց և այսպիս նրանցից
պատացվում և վորոշ տիպի զարգացում. և ժառանգում, ուրեմն
նրանք ինչ վոր բաներ են պարունակում, վորոնք սկզբնական
շրջանում իրարից քիչ են տարրերվում:

Գենետիկները չկարողանալով ուսումնասիրել սեռական բջիջ-
ների բարդ կազմությունը, չտեսնելով ֆիլոգենեզի և ոնտոգենեզի
կապը, վորոնք եվոլուցիոն պրոցեսի հիմունքներն են և պատճառ
են դառնում որգանիզմների զարգացման, սկսեցին սպեկուլատիվ

ձեռվ պատկերացնել այդ սաղմնաբջիջների հիպոթետիկ կառուցվածքը: Այս ինդրում նրանք որինակ վերցրին այն ժամանակշաբացող քիմիայից և փնտուցին կյանքի, զարգացման, ժառանգականության և փոփոխականության հիպոթետիկ միավորները, ինչպես, որինակ, Սպենսերի Փիզիոլոգիական միավորները՝ Նեկելիի «իդիոպլազման» և «միցելլան», Հեկկելի «ալլասանետուլլը», Վայսմանի «պիոֆորը», Հերդվիկի «իդիոպլաստը», Դեֆրեզի «պանդենը», Պիլի «ըփոպլաստը», Վեյզների «պլազման», Ենդելմանի «ինոդական», Մորդանի ու Յոհանսոնի «գենը» և այլն:

Մինչև 19-րդ դարի կեսերը, այսինքն մինչև Դարվինի եվոլուցիոն ուսմունքի հանդես գալը, փոփոխականության մասին տիրող տեսակետը մետաֆիզիկականն եր, ըստ վորի բոլոր որդանական ձևերն անփոփոխ են. նրանք դոյլություն ունեն այնպես, ինչպես յեղել են կյանքի սկզբից՝ աստծո ձեռքով ստեղծված (Լինեյ, Կյուվիկ և ուրիշները):

Դարվինն իր եվոլուցիոն ուսմունքով վերջ տվեց զարգացման փոփոխականության և ժառանգականության մետաֆիզիկական տեսակետներին և առաջադրեց որգանական աշխարհի զարգացման մատերիալիստական տեսակետը. փոփոխականությունը և ժառանգականությունը համարեց զարգացման ֆակտորները, նրա յերեսույթները, և այդպիսով նա ցույց տվեց ինչպես զարգացման, նույնպես և փոփոխականության ու ժառանգականության ուսումունքի հետագա զարգացման ճիշտ ճանապարհները:

Մարքսիզմի կլասիկները շատ բարձր են գնահատել Դարվինի աշխատանքները:

«Բնությունը, — ասում ե Ենգելսը, — դիալեկտիկայի փորձաքարն ե, և արդի բնագիտությունը, վոր այդ փորձի համար ներկայացրել ե չափազանց հարուստ, որեցոր ավելացող նյութ, դրանով իսկ ապացուցել ե, վոր բնության մեջ, վերջիվերջո, ամեն ինչ կատարվում է դիալեկտիկորեն, և վհաջ թե մետաֆիզիկորեն, վոր նա շարժվում է վոչ թե հավերժ միատեսակ, միշտ նորից կրկնվող շրջագծում, այլ ապրում է իրական պատմություն: Այստեղ ամենից առաջ հարկավոր ե մատնանշել Դարվինին, վորն ամենաուժեղ հարվածը հասցրեց բնության նկատմամբ յեղած մետաֆիզիկիկ հայացքին՝ ապացուցելով, վոր ժամանակակից ամբողջ որդանական աշխարհը՝ բույսերն ու կենդանիները, հետեւաբար նույնպես և մարդը, միլիոնավոր տարիներ տևած զարգացման պրոցեսի արդյունք ե»:¹

¹ Համեկ(ը)Կ պատմության համառու դասընթաց, 1938 թ., էջ 143—144:

Դիալեկտիկան, — ասում ե Ենգելսը, — «իրերը և նրանց մտավոր արտացոլումները վերցնում ե գլխավորապես նրանց փոխազարձ կապակցության մեջ, նրանց շաղկապման մեջ, նրանց շարժման մեջ, նրանց ծագման ու անհետացման մեջ»:¹

«Ի հակադրություն մետաֆիզիկային, դիալեկտիկան զարգացման պրոցեսը դիտում ե վնչ թե վորպես աճման պարզ պրոցես, վորտեղ քանակական փոփոխությունները չեն տանում գեպի վորակական փոփոխություններ, — այլ վորպես այնպիսի զարգացում, վորն աննշան և թագնված քանակական փոփոխությունների, արմատական փոփոխությունների, վորակական փոփոխությունների, վորտեղ վորակական փոփոխությունները վրա յեն հասնում վնչ թե աստիճանաբար, այլ արագորեն, անակնկալ կերպով, մեկ կացությունից ուրիշ կացության թռիչքաձև անցնելու ձեռվ, վրա յեն հասնում վնչ թե պատահաբար, այլ որինաչափորեն, վրա յեն համար վորպես աննկատելի ու աստիճանական քանտիկական փոփոխությունների կուտակման արդյունք:

Ուստի, դիալեկտիկական մեթոդը գտնում ե, վոր զարգացման պրոցեսը հարկավոր և ըմբռնել վնչ թե վորպես արջազի մեջ կատարվող շարժում, վնչ թե վորպես անցածի պարզ կրկնություն, այլ վորպես առաջընթաց շարժում, վորպես վերընթաց գծով կատարվող շարժում, վորպես անցում հեն վորակական կացությունից գեպի նոր վորակական կացությունը, վորպես զարգացում պարզից գեպի բարդը, ստորինից գեպի բարձրագույնը»²:

«Ի հակադրություն մետաֆիզիկային, դիալեկտիկան մեկնում ե այն բանից, վոր ընության առարկաներին, ընության յերեվույթներին հատուկ են ներքին հակասություններ, վորովհետեւ նրանք բոլորն ել ունեն իրենց բացասական և դրական կողմը, իրենց անցյալը և ապագան, իրենց մահացողն ու զարգացողը, վոր այդ հակադրությունների պայքարը, նոր և նորի, մահացողի և ծնվողի, իր դարն անցնողի և զարդացողի միջև մղվող պայքարը կաղմում ե զարգացման պրոցեսի ներքին բովանդակությունը, քանակական փոփոխությունների վորակականների վերածվելու ներքին բովանդակությունը:

Ուստի դիալեկտիկական մեթոդը գտնում ե, վոր ստորինից գեպի բարձրագույնը տեղի ունեցող զարգացման պրոցեսն ըն-

¹ Համելիք պատմության համառառ դասընթաց, 1938 թ., էջ 143.

² Նույն աել:

թանում և յերեսույթների վոչ թե ներդաշնակ ծավալման կարգով, այլ առարկաներին, յերեսույթներին հատուկ բացահայտման կարգով, այդ հակասությունների հիման վրա գործող հակադիր տեսնդենցների «պայքարի» կարգով¹:

«Հսկական իմաստով՝ զիալեկտիկան,—ասում ե Լենինը,— ուուրկաների բուն ելուրյան մեջ յեղած հակասության ուսումնասիրումն են: «Զարգացումը հակադրությունների «պայքարն» ե»².

Դիալեկտիկայի այդ հիմնական սկզբունքներից յենելով, պետք ե քննենք փոփոխականության ու ժառանգականության յերեսույթները: Փոփոխականությունը և ժառանգականությունը զարգացման նույն, ընդհանուր պրոցեսի յերկու կողմերն են, ուստի նրանք վիճակներ չեն, այլ պրոցեսներ: Ինչպես վոր չկա նմանություն առանց տարբերության, այնպես ել չկա ժառանգականություն առանց փոփոխության: Ուրեմն, չկա անփոփոխ ժառանգականություն, այլ կա միայն փոփոխվող ժառանգականություն: Ուրեմն, չկա նաև չժառանգվող հարմարողական փոփոխականություն:

Բիոլոգիական փոփոխականությունը նյութի շարժման ձևի արտահայտությունն ե, վորը տիրող ե հանդիսանում որպահական աշխարհում: Կյանքը վորպես սպիտակուցային մարմինների գոյության ձև՝ միաժամանակ շարժման փոփոխման պրոցեսն ե: Ենդեւսն ասում ե, թե շարժումը բառիս ընդհանուր իմաստով զիտելիս, այսինքն՝ նյութի գոյության ձեւը ընդունելիս վորպես մատերիային հատուկ ներքին ատրիբուտ, ընդգրկում ե տիեզերքում տեղի ունեցող բոլոր փոփոխությունները և պրոցեսները՝ սկսած պարզ տեղադրումներից, վերջացրած մատածողությամբ: Հարմարողականությունը հանդիսանում ե ոգտակար փոփոխություններ առաջ բերող ֆակտոր: Զարգացումը տեղի յե ունենում շնորհիվ ժառանգականության և փոփոխականության մշտական պայքարի: Այդ զարգացման պրոցեսում անհրաժեշտ ե ի հայտ բերել հակասությունները փոփոխականության և ժառանգականության որյեկտիվ միամնության մեջ, և վոչ թե իրար հակադրելով և իրարից անջատելով, ինչպես այդ անում են շատերը, ասելով թե ժառանգականությունը ուրիշ բան չե, յեթե վոչ ծագումով ազդակից որգանիզմների նմանության դրսերում կամ արտահայտություն, իսկ փոփոխականությու-

¹ Համեկ(բ)կ պտտառության համառոտ գտալնթաց, 1938 թ., եջ 145—146.

² Նույն տեղ, եջ 146:

նը նրանց տարբերության դրսկորումն և կամ նրանց արտահայտման յերևույթը: Ժառանգականությունը միայն նմանության մեջ տեսնելը իր ճիմքերն ունի անփոփոխելիության, տեսակների կայունության մետափիզիկական հասկացողությունների մեջ:

Նման հասկացողության պատճառ դառնում է նաև այն, վորշատ գեղքերում արտաքին ցայտուն մորֆոլոգիական տարբերություններ չեն նկատվում ծնողների և սերունդների միջև, բայց այդ դեռ չի նշանակում, թե այստեղ չկան նաև ֆիզիոլոգիական, բիոքիմիական և անդամ վորոշ աննկատելի մորֆոլոգիական փոփոխություններ:

Նույն սխալ մոտեցումն և նաև պատճառը, վորշատ գեղքերում գենետիկներն իրենց ուշադրությունը դարձնելով վորակական արտաքին մորֆոլոգիական հատկանիշների վրա, առանց ուսումնասիրելու ֆիզիոլոգիական և այլ փոփոխություններ, պնդում են, թե որգանիզմները կարող են ֆիզոտիպով նույնը լինել բայց գենետիպով՝ տարբեր:

Ենդելով խոսելով ֆիզիոլոգիայի զարգացման մասին, շեշտում են, վորշաքան նա զարգանում են, այնքան նրա համար ավելի ու ավելի անհրաժեշտ և դառնում տարբերությունները դիտել նմանության մեջ, և նմանության հին, արստրական, ֆորմալ տեսակետը, ըստ վորի որգանական եցակները դիտվում են վորպես կայուն պարզ նմանություններ, արդեն հնացել են:

Ժառանգականության բնորոշումը վորպես ծնողների և սերունդների նմանություն՝ ճիշտ չի կարելի համարել նաև նրա համար, վոր այդ դեպքում խոսքը ժառանգականության արդյունքի մասին և վոչ թե նրա եյության մասին, այնտեղ զարգացման պրոցեսը դուրս և մնում: Յերբեմն ժառանգականությունն ասելով հասկանում են ծնողների հատկանիշները իրենց սերնդին փոխանցելը: Այստեղ ավելի մեծ սխալ և կատարվում, վորովհետեւ հատկանիշը չի փոխանցվում պատրաստի դրությամբ, այլ նաղարգանում եւ:

Ֆիլիպչենկոն, վորի դասագիրքը բոլոր տեղերում ոգտագործում եւ, հետեւյալ բնորոշումն և տալիս. ժառանգականություն ասելով հասկացվում է ծնողների և սերնդների նմանության փաստը:

Բառը հետեւյալ կերպ և բնորոշում. ժառանգականությունը կենսաբանական լայն հասկացողությամբ մենք հասկանում ենք այնպիսի յերևույթ, յերբ մի ծնողի սերունդները կամ,

սեռական բազմացման ժամանակ — յերկու ծնողների սերունդները նման են մի կամ յերկու ծնողներին, այսինքն՝ ունեն նման եղիողազմա: Պրոֆեսոր Ժեգալովը ասում է. ժառանգականություն ասելով հասկանում ենք սերունդների ներկայացուցիչների ընդունակությունը՝ բացարձակորեն նույն ձևով ուսակցել տվյալ միջավայրի ներգործության, ինչպես ուսակցեց նրանց վրա նաև մայր բույսը:

Դորժանսկին ասում է. յերեխաների նմանությունը ծնողներին՝ ընության որենքն են, և այն պատճառը, վորի շնորհիվ իրականացվում է այդ նմանությունը, անվանվում է ժառանգականություն:

Կոնկլինը գրում է. ժառանգական նմանությունը և տարբերությունը չի հանդիսանում հակադիր պատճառների հետեւանքը: Մեկը և մյուսը հանդիսանում են սաղմնային կազմակերպման արդյունքը և ժառանգականության դրսկորումը: Ուրիշն ժառանգականությունը կարելի յե ընորոշել վորպես սաղմային պլազմայի վորոշ ելեմենտների անընդհատականություն սերնդից սերունդ:

Հարստամանն ասում է. հատկանիշների մի սերնդից մյուս սերունդ անցնելը կոչվում է ժառանգականություն:

Դարինկոտոնը հետեւյալ կերպ է բնորոշում. ժառանգականությունը հանդիսանում է որգանիզմների յուրահատկությունը իրենց նմանները վերաբարեկու:

Նման տիպի մենդելիստական, մորգանիստական, մետաֆիզիկական, վիտալիստական բնորոշումների շարքը կարելի յե բաղմապատկել:

Վերոհիշյալ բոլոր հեղինակների համար ամենից առաջ ժառանգականությունը յերեւյթ է և վոչ թե պրոցես. նրանք այդ տեսնում են զարգացումից դուրս, ուրիշն և նրան անջատում են փոփոխականությունից:

Ուսումնասիրում են հատկանիշը, վորը, ինչպես գիտենք, չի ժառանգվում, այլ զարգանում է: Նրանց մոտեցումը փորմալ է, նրանք մոռանում են ժառանգականության բազմակողմանիությունը, հակասությունները: Նրանք փաստերը վերցնում են սետափիզիկորեն: Դրանով ստացվում է այն, վոր նրանք հավատում են ինչ վոր մի գաղտնի, անձանաչելի ուժի: Այդ հասկացողությունն ավելի բացահայտորեն հանդես է գալիս Յոհանսոնի մաքուր գծերում: Նույնը կարելի յե ասել ինքնափոշոտման և արյունակցական զուգավորման ժամանակ, վորտեղ իբր թե սերունդներն ամբողջությամբ նման են ծնողներին: Այստեղ իհարկե

Գոփոխությունը, շնորհիվ հերթիդացիայի բացակայության, քիչ ե. բայց աճման, զարգացման ժամանակ տարբեր միջավայրերում առաջանում են գոփոխություններ. նույնը և սեռական և սոսատիկ բջիջների բաժանման ժամանակ, հայելու նման նմանություն չի ստացվի բոլոր մասերում ու որդաններում:

Այսպես ուրեմն, այն կենսաբաններին, վորոնք պատկանում են հակադարվինիստական լագերին, չհաջողվեց ժառանգականության հարցը լուծել, տիրապեսել նրան, ուղղություն տալ ու ոգտագործել պրակտիկայում: Յեվ այդ այն պատճառով, վոր նրանք ժառանգականությունն անջատեցին ինչպես գոփոխականությունից, նույնպես և զարգացման պրոցեսից:

Մարդուն ասում ե, թե յիթե իրերի եյությունը, բովանդակությունը և նրանց արտահայտման դրսերման ձևը համընկնելին, այն ժամանակականություն ամեն մի զիտություն ավելորդ կլիներ:

Յեթե վերցնելու լինենք գոփոխականությունը, մենք կտեսնենք նույն պատկերը:

Գոփոխականության տակ մեկը հասկանում և երարից տարբեր անհատների տարբերություն, վորոնք մոտիկ ազգակցական կապերի մեջ են. ուրիշները հասկանում են լինելուն տեսակի սահմաններում պոլիմորֆիզմ. յերրորդը հասկանում և սերնդների ուժեղ տարբերություն՝ վորոշ զուգավորման կամ տրամախչման սահմաններում. չորրորդը հասկանում և մողիփիկացիան: կամ ֆլուկտուացիան:

Որինակ՝ նույն Ֆիլիպչենկոն հասկանում և տեսակի մեջ գտնվող տարբեր անհատների կամ մի խումբ անհատների հայտնի տարբերության յերևույթը: Նա վորպես գենետիկ գոտնում ե, վոր գենետիկան ուսումնասիրում և այն պրոցեսները, վորոնք տեղի ունեն միայն տեսակի սահմաններում, գրանից վեր՝ սիստեմատիկների գործն ե: Այստեղ դարձյալ գոփոխությունը համարվում և յերևույթ և վոչ թե պրոցես: Նա վերցնում ե միայն արտաքինը և հաշվի չի առնում այն պրոցեսները, վորոնց շնորհիվ ստացվում են այդ տարբերությունները:

Դարվինը շեշտում ե, վոր կենդանի եյակներն իրենց ապահանքին զարգացման պայմանների ազդեցության տակ շարունակ գոփոխվում են բազմաթիվ ուղղություններով: Դա նրանց հիմնական հատկությունն ե: Հենց այդ հանգամանքը, ըստ Դարվինի, հիմնական պատճառներից մեկն ե, վոր տեսակը եվոլուցիայի յև յենթարկվում: Ուրեմն, Դարվինը գոփոխականու-

թյունը համարում ե պրոցես՝ լայն պատմական հասկացողությամբ:

Տիմիրյազել «Պատմական մեթոդը բիոլոգիայում» գրքում ասում է. «Փոփոխականություն ասելով պետք ե հասկանալ որ գանական եյակների փոփոխման կամ փոխակերպման յերևույթը, վորը հանդես ե գալիս ժամանակի ընթացքում։ Այդ դիտողությունն անհրաժեշտ է, քանի վոր հաճախ շփոթում են փոփոխականությունը պարզ տարբերության գոյության փաստի հետ։ Ֆորմալ գենետիկները, վորոնց թվում ֆիլիպչնկոն, փոփոխականությունը դիտում են «ինքն իր մեջ» անկախ նոր ձևերի առաջացման եվլուցիոն պրոցեսից։

Պրագեն հետեւյալ ընորոշումն ե տալիս. փոփոխականություն ասելով հասկանում ենք անորինաչափ առաջացող, վճռ մշտական և վճռ ամենուրեք գոյություն ունեցող շեղումներ տիպիկ տեսակից։ Նախ՝ նա անտեսում է, վոր փոփոխականությունը պրոցես ե. յերկրորդ՝ հակադրում ե այն՝ փոփոխականության «որինաչափ գոյություն ունեցող տարբերությանը» (յենթատեսակային, սեռական սովորմորֆիզմ և այլն)։ Զե՞ վոր այս վերջիններն ել արդյունք են նույն փոփոխության. ապա նա ի՞նչ կասեր գարու և ցորենի հիբրիդի կամ ջորու մասին, վոր առաջանում են փոփոխականությամբ, բայց արգեն բոլորով վին նոր ձևեր են—լիսենկոյի գարնան ցորենը աշնանայինի վերածելը և այլն։ Այս բոլորն որինաչափ են. ֆիլիպչնկոյի կոնցեպցիաների հիմքը այն ե, վոր տեսակի սահմաններում հատկանիշները (վորոնց մեջ շատ խոշոր տարբերություն չկա) պայմանավորվում են գեներով, իսկ տեսակի բարձր խմբավորումներում գոյություն ունի ինչ վոր ուրիշ պատճառ, գուցե՛ պլազմա։ Հստ նրանց՝ եվլուցիան տեղի յեւ ունենում ներքին ավտոգենետիկ ուժերի միջոցով։

Այսուղի կարելի յեւ նշել նաև Լոդսիի, Դեֆրիզի և Բետոնի հասկացողությունները փոփոխականության մասին (ավտոգենետ)։ Բետոնը եվլուցիան հանգեցնում ե գեների ընկնելուն, ուրեմն սկզբնական ձևերը ավելի հարուստ են յեղեւ գնալով բարձր ձևերը նրանցով աղքատանում են։ Այս բոլոր գեղքերում ընտրությունը պասսիվ գերաւմն ե. Այսուղի պետք ե նշել նաև Վավիլովի ծագման կենտրոնները և հոմոլոգիական շարքերը։

Հետո փոփոխականությունները բաժանում են անհատական-խմբային, մորֆոլոգիական-ֆիզիոլոգիական, ավտոգեն-եղտոգեն,

քանակական-վորակակական, գենոտիպային-գենոտիպային, սեռական, տարիքային, աշխարհագրական և այլն:

Ֆորմալ գենետիկների մոտ որդանիզմը մոռացության արվեց վորպես ամբողջություն, նա վերածվեց հատկանիշների մողաբիկի: Ուսումնականիրելով՝ այդ առանձին հատկանիշները տրամախաչումից հետո, ձեղքման պրոցեսում՝ նրանց թվում ե, վոր ճանաչում են ձեւ՝ որդանիզմը: Որդանիզմը դիտում են վորպես իրենք իրենց չփոփոխվող (վորովճեաև գեները չեն փոխվում, վորոնք պայմանավորում են նրան) հատկանիշների հավաքույթը՝ մոռանալով, վոր որդանիզմը զարգացման պրոցեսում փոփոխվում ե: Զարգացման պրոցեսում կարող են հանդես գալ այնպիսի հատկանիշներ, վորոնք ծնողների մոտ բոլորովին չեն յեղեւ որինակ՝ հիաներողիսը, հավը աքաղաղ դարձնելը: Մի պայմանում կովը կաթնատու յե, մյուսում վոչ, մի պայմանում ցորենը իմմուն և ժանդին, մի ուշիշում վոչ: Այստեղ ինչ խոսք կարող ե լինել միայն հմանության մասին:

Ինչպես Դարվինը, նույնպես և Տիմիրյանը ժառանգականությունը համարեցին որդանիզմի այն բոլոր հատկությունները, վորի միջոցով փոփոխականությունը ռեալիզացիայի յև յենթարկվում որդանիզմի ձևերում, վորով և պայմանավորվում ե նրանց պատմական զարգացումը բնության մեջ: Դարվինը գտնում էր, վոր անգամ ամենափոքր վարիացիաները վորպես որենք ժառանգվում են. այդ բացարելու համար նա տվեց իր ժառանգակավոր պանդենեղի հիմութեղը:

Դարվինի մոտ ժառանգականությունը վոչ միայն տարերություն եր (ծնողների և սերունդների), այլ նաև պրոցես: Փոփոխականությունը վոչ միայն պայմանավորվում և ժառանգականությամբ, այլ նաև պայմանավորվում ե նրան: Այդ յերկու պրոցեսները նա դիտում ե միասնության մեջ՝ վորպես զարգացման պրոցեսի յերկու կողմեր: Դարվինը ապացուցեց, վոր տարերակը սկսվող տեսակ ե, իսկ տեսակը լավ տարբերակ: Դարվինը ասում ե, պարզ ե, վոր վարիացիան, վորը ժառանգարար չի անցնում, լույս չի սփռում տեսակի առաջացման վրա, նոր հատկանիշն առաջանալիս ինչպիսի բնույթ ել ունենա, նրան հատուկ և ժառանգարար անցնելը՝ յերբեմն ժառանգակավոր կերպով և յերբեմն ել շատ համառ կերպով: Ենթե որդանիզմը յուրահատուկ հակում չունենա փոփոխվելու, այդ գեպօւմ մարդը վոչինչ չեր կարող անել: Այդ փոփոխությունները առաջանում են

միջավայրի աղղեցությամբ. մարդը ընտանեցման պայմաններում նրանց յենթարկում և զանազան պայմանների, և սրա հիմնական արդյունքն այն և լինում, վոր որդանիղմներն այդ պայմաններում փոփոխվում են, և այդ փոփոխությունները ժառանգվում: Նա վոչ թե հորինվածքի բարդացումը, այլ հարմարանքը համարեց պրոգրեսի հիմքը: Դարվինը շատ խոշոր տեղ տվեց արտաքին միջավայրին, բայց նա պրիմատը տվեց որդանիղմին իրեն (պատմական մոտեցում):

Պետք ե ասել, վոր փոփոխականության և ժառանգականության փաստն եր միայն անհրաժեշտ Դարվինին, վորպեսզի կառուցեր իր եվլուցիոն ուսմունքը. և բոլորովին նրա նպատակը չեր մանրամասն ու բազմակողմանի կերպով ուսումնասիրել այդ յերևույթները և նրանց եյությունը, մանավանդ վոր գիտության մակարդակը այդ հնարավորությունը չեր տալիս նրան: Բայց նա տվեց առաջին խթանը և հիմնական դրույթները՝ այդ խնդիրները հետագայում ճիշտ ուսումնասիրելու համար, վոր յերկար ժամանակ չհաջողվեց գիտնականներին: Միայն մեր խորհրդային գիտությունը վերցրեց Դարվինի թողած հարուստ ժառանգությունը և զարգացրեց հանձին մեր խորհրդային դարվինիստների՝ Տիմիրյազեի, Միջուրինի, Լիսենկոյի և այլն: Ժառանգականությունն այն պրոցեսն ե, վորի միջոցով պահպանվում և որդանիղմի անհատական կյանքի և նրա ծնողների պատմական անցյալի կապը: Ժառանգականության եյությունն այն ե, վոր ծնողները և նրանց տված սերունդները այս կամ այն չափով թեակոխում են զարգացման նման ուղիներ: Ուրեմն, գրա համար ել ժառանգականությունը հանդիսանում և զարգացման այս կամ այն ստադիայի պայմանների, պահանջների նմանությունը: Նայած թե ինչպիսի կոնկրետ ձևերով այդ պահանջները բավարարելու յեն և ինչ ձևով ե ընթանալու որդանիղմի զարգացումը, ըստ այնու ել պայմանավորվելու յեն զարգացող հատկանիշների նմանությունն ու նմանության աստիճանը: Բայց վորովհետև զարգացման պայմանները ամբողջությամբ նույնը լինել չեն կարող, ուստի և նմանության հետ միասին անպայման կտանանք և տարբերությունները: Սրանումն և արտահայտվում փիլտրենեղի և ոնտոգենեզի կապը, նրանց փոխպայմանավորվածությունը: Ծնողների և սերունդների այդ ժառանգական կապն իրականացվում և ինչպես վեգետատիվ, նույնպես և սեռական բազմացման միջոցով, վոր մի սերունդ կապում և մյուսի հետ: Բայց ժառանգականության

այդ մատերիալ հիմքերը կազմում են ամբողջ որգանիզմի անբաժանելի մասը, հետևաբար նա որգանիզմի զարգացման արդյունք և կոնկրետ պայմաններում: Ժառանգական մատերիալ հիմքը որգանիզմի մեջ հիմնավորված չե ժառանգակիր սպեցիֆիկ մասնիկների՝ քրոմողոմների և գեների ձևով, ինչպես յենթագրում են Փորմալ գենետիկները (Եյությունը, բովանդակությունը չե կարող հավասարվել որգանիզմի մի մասին), այլ նա առաջանում է որգանիզմի անհատական զարգացման պրոցեսում, մի պրոցես, վոր պայմանավորված և պատմական եվլուցիոն զարգացումով: Անհատական զարգացման պրոցեսում որգանիզմը փոփոխվում է գոյության պայմանների շնորհիվ, ուրեմն և նոր հարմարանքներ և ձեռք բերում, բայց այդ դեպքում նա իր զարգացումը սկսում է այստեղից, ինչով վերջացրել եյին իր ծնողները: Սեռական կամ վեգետատիվ բջիջներն իրենց մեջ կենարոնացնում են այս բոլոր փոփոխությունները, վորոնք առաջացել եյին ծնողների՝ իրենց ապրած միջավայրին հարմարվելու պրոցեսում. այսինքն՝ նրանք իրենցից ներկայացնում են մի տեսակ եվլուցիայի խտացումը: Վերոհիշյալ հնարավոր փոփոխությունները և հարմարանքները տեղի յեն ունենում միայն վորոշ սահմաններում, իսկ այդ սահմանները պայմանավորված են Փիլոգենեզով: Ուրեմն, որգանիզմի վերակառուցումը տեղի յե ունենում միայն կոնկրետ պայմաններում զարգանելու միջոցով, իսկ այդ պայմանները սահմանափակ են: Այդ բանին որինակ կարող են ծառայել լիսենկոյի փորձերը—աշնան ցորենը զարնան ցորենի վերածելը:

Լիսենկոն Միջուրինի աշխատությունների նախարանում գրում է հետևյալը. «Միջուրինը կոնկրետ կերպով ցույց տվեց, վոր որգանիզմի այս կամ այն անհատական զարգացումը անհետեանք չի մնում որգանիզմի ժառանգական հատկությունները փոխելու տեսակետից: Նա ցույց տվեց նաև, վոր որգանիզմների անհատական զարգացման վորոշ ուղղությամբ ընթանալն ապահովելով՝ մենք կարող ենք գիտակցորեն ուղղություն տալ եվլուցիային, այսինքն՝ որգանիզմների ժառանգական հատկությունների փոփոխմանը»:

Ֆորմալ գենետիկայի կողմանակիցները չեն ըմբռնում արտաքին միջավայրի նման ստեղծագործող գերը գենոտիպի փոփոխման գործում և այդ իսկ պատճառով հեռանում են դարվինիզմից, ընկնում ավտոգենեզի գիրկը ու մեղաղբում լամարկիզմի մեջ՝ Ենդելսին, Միջուրինին, Լիսենկոյին, Բերբանկին:

Իսկ լամարկիստները չեն տեսնում այդ պատմականորեն ձևակերպված որդանիզմի հարմարանքը: Միջավայրի ազդեցության սահմանները նրանք անտեսում են և միաժամանակ չեն տեսնում, վոր փոփոխումը տեղի յե ունենում զարգացման ընթացքում: Հստ նրանց՝ որդանիզմը սկզբում վորեւ միջավայրի ազդեցությամբ փոփոխվում ե (վերակառուցվում ե): Իսկ դրանից հետո նոր զարգանում ե, և առաջացած այդ նոր փոփոխությունները ժառանգաբար տալիս ե սերունդներին: Սա հակապատմական տեսակետ ե, վորովհետև փոփոխականությունն անշատվում է որդանիզմի հարմարվողականությունից և նրա զարգացումից: Այդ տեսակետը վոչ մի կապ չունի զարգինիզմի հետ, Միջուրինի, Լիսենկոյի տեսակետների հետ:

Զարգացման տարբեր պայմաններում դրսեորվող հատկանիշների ընտրության և այդ զարգացման գոյության պայմանների ընտրությամբ՝ ընտրվում են նաև տարբեր գինուտիպեր: Ժառանգական փոփոխականության ֆենոտիպական սպեցիֆիկությունը կապված լինելով զարգացման պայմանների սպեցիֆիկության հետ՝ ընտրության միջոցով վերածվում ե գենուտիպական սպեցիֆիկության: Ուրիշն, սերնդից սերունդ զարգացման պայմանների ընտրության և սելեկցիայի միջոցով համապատասխան ձևով փոփոխված ձևերից կարելի յե ստանալ նոր սորտեր ու ցեղեր՝ նոր հարմարանքներով, ավելի բարձր բերքատվությամբ ու արտադրողականությամբ: Որինակ, Լիսենկոյի փորձերը ցույց տվեցին, վոր որդանիզմը փոփոխվում և գոյության պայմանների փոփոխման շնորհիվ, բայց այդ փոփոխումը գնում ե վորոշ պայմաններում, վորի սահմանները պետք ե լինի սահմանափակ (Փեղուղիքիական հարմարվողություն): Որինակ՝ ցորենի մի սորտի յարովիզացիան գնում ե 0-ից մինչև 16 աստիճան տաքության ներքո, դրանից ցածր կամ բարձր ջերմաստիճանի պայմաններում յարովիզացիա չի կատարվում. ուրիշն, որդանիզմը չի զարգանա (սա յե պատճառը, վոր չ ճառագայթներով և այլ ստիպողականության տակ առաջացած փոփոխությունները լեզալ են և հարմարվողականություն չունեն: Այդ տեսակետից փորմալ գենետիկները միանում են լամարկիստներին):

Տեսնենք, թե ինչպես լիսենկոն աշնան ցորենի սորտը՝ կոռպերատորկան զարնանացանի վերածեց: Փորձը կատարվեց Ողեսայում, վորը շատ կարելոր և մատնանշել, վորովհետև միայն ԽՍՀՄ-ի հարավային պայմաններում կոռպերատորկան աշնանացան սորտ ե. ամեն մի սորտ իր միջավայրի պահանջի, իր

զարգացման համար ունի պահանջի վորոշ տատանում կամ հար-
 մարվելու սահման. այդ տեսակետից կոռպերատորկան յարովի-
 զացիայի յենթարկելու համար պահանջվում է 0° -ից մինչև $15^{\circ} - 20^{\circ}$
 տաքություն: $15 - 20$ աստիճան C կոռպերատորկան թեև անցնում
 ե յարովիզացիան, բայց շատ դանդաղ. այսպես, յեթե 0° -ից 20°
 ծելսիուսի պահանջվում ե 40 որ, $15 - 20^{\circ}$ -ին պահանջվում ե 100 -
 150 որ, այստեղ այդ յերկուսի տարբերությունը պետք ե լինի
 վոչ միայն ժամանակի տեսակետից, այլ նաև վորակապես: Բույսի
 հաջորդ սերունդները, վորոնք ստացվել ենին բարձր ջերմության
 ($15 - 20^{\circ}$ -ի) տակ, յարովիզացիայի յենթարկած բույսերի սերմերից
 ավելի հեշտ և արագ անցնելու յենի իրենց յարովիզացիայի ստա-
 դիան նույն ջերմության տակ: Մի շարք սերունդներ բույսին
 ստիպելով անցնել իր յարովիզացիան $15^{\circ} - 20^{\circ}$ ջերմության տակ՝
 լիսենկոյին հաջողվեց փոխել սորտի հարմարանքը վորոշ ծրա-
 գված ուղղությամբ — սորտը զառապի գարնանացան: Այդ ուղղված
 փոփոխությունը առաջացավ շնորհիվ միջավայրի պայմանների
 վորոշ ուղղությամբ փոխվելուն: Լիսենկոն ասում ե. վոչ ամեն
 տեսակի բարձր ջերմություն և պիտքական աշխանացանը գար-
 նանացանի վերածելուն, այլ միայն վորոշ սահմանների ջերմու-
 թյուն, վորոշում՝ $15 - 20^{\circ}$:

Որգանիզմի նման փոփոխությունները, վորոնք ինչպես տե-
 սանք առաջանում են միջավայրից, սատերիալ են հանդիսանում
 ընտրության համար:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱՐՎԻՆԻԶՄԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑԻ

Ակադեմիկ Լիսենկոյի զարգացման ստադիալի տեսությունը

Զարգացման մեխանիստական և իդեալիստական հասկացո-
 ղությունների գեմ վճռականապես ու հետեղականորեն դուրս յե-
 կավ լիսենկոն, վորը մշակեց բույսերի զարգացման ստագիտական
 տեսությունը՝ հիմնվելով Դարվինի, Տիմերյաղեվի և Միչուրինի
 աշխատանքների ու տեսության վրա:

Բիոլոգները բույսերի աճման և զարգացման կապը հասկա-
 նում եյն մեխանիկորեն, նրանք այդ պրոցեսները կապում եյն

բույսի կամ միայն ներքին հատկությունների, կամ միայն արագություն պայմանների հետ:

Աճման և զարգացման փոխհարաբերությունները հասկացվում եր մեխանիկորեն՝ մեկը մյուսին հաջորդող, իրարից անկախ, առանց փոխապարձ պայմանավորվածության, այն ինչ այդ պրոցեսները միասնության մեջ են, իրար հետ կապված փոխադարձ ներթափանցմամբ և փոխադարձ պայմանավորվածությամբ:

Լիսենկոյի ստագիական ուսմունքը ընդհանուր կենսաբանական ուսմունք է, վորի հիմքում դրված են յերկու հիմնական ինդիքներ:

ա) Զարգացում ասելով Լիսենկոն հասկանում ե անհրաժեշտ վորակական փոփոխությունների այն ձանապարհը, վորն անցնում է ամեն մի բույս իր անհատական կյանքի ընթացքում (ոնտոգենեզում): այսինքն ակրմից մինչև նոր սերմ դառնալը:

Աճում ասելով նա հասկանում է բույսերի մասսայի ավելացումը, քանակական փոփոխությունը՝ վորպես բույսի զարգացման ամենակարենը հատկություններից մեկը:

Զարգացման տեմպը ուղղակի և անմիջապես կապված չետան տեմպի հետ, այլ արտաքին պայմանների հետ:

Սրտաքին պայմանները կարող են բարենպաստ լինել աճան համար, բայց անբարենպաստ՝ զարգացման համար և ընդհակառակը: Աճման ու զարգացման փոխհարաբերությունը սէեմատիկ կերպով կարելի յե պատկերացնել հետևյալ կերպ՝

- 1) Սրագ աճ—դանդաղ զարգացում:
- 2) Դանդաղ աճ—արագ զարգացում:
- 3) Սրագ աճ—» »
- 4) Դանդաղ աճ—դանդաղ »

բ) Միջավայրի պայմանները յեկ գոյության պայմանները: Անհրաժեշտ և տարբերել գոյության պայմանները ինչպես «միջավայրի պայմաններից», նույնպես և «ներգործող արտաքին ֆակտորներից»: Վոչ բոլոր «միջավայրի պայմանները» հանդիսանում են այն ֆակտորները, վորոնք իսկապես աղդում են որդգանիքի զարգացման ընթացքի վրա: Վոչ բոլոր «ներգործող արտաքին ֆակտորները» հանդիսանում են որդանիզմի զարգացման գոյության պայմանները:

Բույսի զարգացման համար պահանջվում է վորոշ կոմպլեքս ֆակտորներ—սնունդ, ջերմություն, լույս, խոնավություն և այլն: Յեթե այդ բոլոր պայմանները կամ սրանց մի մասը չեն. համա-

պատասխանում բույսի զարգացման պահանջին (գոյության պայմաններին), նա չի կարող լավ բերք տալ: Ահա թե ինչու շատ հաճախ լինում են դեպքեր, յերբ վորոշ բույսեր բավական լավ աճում են, բայց շատ ուշ են սկսում ծաղկել և պտուղ տալ: յերբ են ել նույնիսկ վնչ ծաղկում են, վնչ ել պտուղ տալիս: Այդ նրա համար ե, վոր նման բույսերի ապրած միջավայրի պայմանները չեն համապատասխանում կառ չեն համընկնում նրանց գոյության պայմաններին (պահանջմած պայմաններին):

Սրանից կարելի յե հետեւնել վոր տարբեր բույսեր իրենց զարգացման համար պահանջում են տարբեր պայմաններ, այս սինքն՝ այն կլիմայական պայմանները, վորոնք անհրաժեշտ են աշնանացան ցորենի համար, անպետք են բամբակի կամ նման բույսերի համար: Բացի դրանից՝ բույսերի մեծ մասն իրենց ոնտոգենեզի ընթացքում, սերմից սինչեւ նոր սերմ ստացվելը, պահանջում են վոչ միատեսակ միջավայրի պայմաններ: Որինակ, աշնան ցորենն իր զարգացման սկզբնական շրջանում պահանջում ե ցած ջերմաստիճան, իսկ յերբ նա այդ շրջանում վորոշ վորակական փոփոխությունների յե յենթարկվում, վորը հետագայում անվանվեց յարովիզացիայի ստադիա—մինչեւ իր զարգացման վերջը, արդեն պահանջում ե բարձր ջերմաստիճան:

Արոտաքին միջավայրի պայմանների հանգեց զարգացող բույս սերի ցուցարերած պահանջների փոփոխումը ցույց ե տալիս, վոր միամյա սերմնային բույսերի զարգացումը՝ սերմի աճումից մինչեւ նոր սերմ հասցնելը՝ միատիպ և միավորակ չեն:

Այս բոլոր դիտողությունները հասրավորություն տվին և սենկոյին յեզրակացնելու, վոր բույսերի զարգացումը բաղկացած ե առանձին տարբեր վորակական ետապներից—ստադիաներից: Բոլոր այդ առանձին ստադիաները անցնելու համար բույսը պահանջում է տարբեր պայմաններ: Ստադիան, ամեն մի բույսի զարգացման անհրաժեշտ ետապն ե: Վորոշ ստադիաներում միայն կարող են զարգանալ այս կամ այն որգանները և հատկանիշները: Զպետք ե պատկերացնել այնպիս, թե ստադիան բույսի տարբեր մասերի և որգանների առաջացումն ե: Ստադիան բույսի զարգացման վրակական շրջադարձային մոմենտն ե, առանց վորի առանձին որգանները, մասերը և հատկանիշները կազմվել չեն կարող:

«Գոյության պայմանները» արդյունք են բույսի հազարավոր տարիների զարգացման պատմության, վոր ձեռք են բերված

բնական ընարության միջոցով, վորպես հարմարանքներ: Որդաւնիզմի գոյության պայմանները պայմանափորված են նրա ֆիլոգենեզով, վորի ընթացքում որգանիզմը ձեռք և բերել վորոշ հարաբերական հարմարանքներ: Ահա դրա համար ել ամեն մի բույս իր ոնտոգենեզի ընթացքում նորմալ զարգացման համար պահանջում ե իր անցյալի եվլուցիոն զարգացման ընթացքում ձեռք բերած հարմարանքներին համապատասխանող միջավայրի պայմաններ, վորոնց անվանում են գոյության պայմաններ:

Ստաղիական փոփոխությունները միշտ տեղի յեն ունենում բույսի ցողունի աճման կետերում՝ բջիջների բաժանման միջոցով: Այդ վորակական փոփոխություններն անցնում են նաև դուստր բջիջներին, վորոնք իրենց հերթին նույնպես փոփոխվում են: Հետևաբար բույսն իր ցողունի յերկարությամբ նույնավորակ չեն բջիջների մասը ստաղիական տեսակետից ամենայերիտասարդն ե, վերևի մասը թեև հասակի տեսակետից ամենայերիտասարդն ե, բայց ստաղիական տեսակետից ամենաածերն ե: Այդ բանն ապացուցելու համար կարելի յե վերցնել վորեն պտղատու բույսի ներքեւի մասից վերցրած կտրոնն իր զարգացման և պտղակալման համար մոտավորապես նույնքան ժամանակ և պահանջում, վորքան անհրաժեշտ եր այն բույսի համար, վորի սերմն եր տնկված. իսկ այն կտրոնը, վոր վերցված եր զարգաթի մասից, անհամեմատ ավելի շուտ կզարդանա և կպտղակալի, վորովհետեւ ստաղիապես արդեն ծեր ե:

Ինչպես վոր զարգացումն անհետաղաբար ե, նույնպես և ստաղիան և անհետաղաբար. բույսն անցնում է ստաղիաները խիստ հաջորդականությամբ. բույսը մինչև նախորդ ստաղիան չանցնի, չի կարող հաջորդն անցնել:

Կուլտուրական միամյա բույսերի զարգացման ստաղիաները մի քանիմն են (Լիսենկոն յենքաղը ու 4—5 ստաղիա). բայց մինչև որս ուսումնասիրված ե 2 ստաղիա. 1) յարովիզացիայի ստաղիա, 2) լույսային ստաղիա. Յարովիզացիայի ստաղիան անցնելու համար հացահատիկային կուլտուրաները պահանջում են ցած ջերմաստիճան՝ մնացած կոմպլեքս պայմանների հետ զուգընթաց, բայց այստեղ վճռական գերը պատկանում է ջերմաստիճանին, առանց վորի բույսն իր այդ վորակական փոփոխման յարօվիզացիայի ստաղիան չի կարող անցնել: Այդ ստաղիան անցնելու համար լույսն անհրաժեշտ չե: Փորձերը ցույց են տվել,

վոր բույսը կարող է անցնել յարովիզացիայի ստաղիան նաև մթության մեջ։ Յերկրորդ, կամ լույսի ստաղիան անցնելու համար անհրաժեշտ է լույս, առանց վորի այդ ստաղիան բույսն անցնել չի կարող։

Յեթե սովորական դաշտային պայմաններում գարնանը գարնացան և աշնանացան հացահատիկները ցանենք, դարնանացան կուլտուրան կանցնի զարգացման իր բոլոր ստաղիաները, կհասունանա ու սերմ կտա, իսկ աշնանացանը՝ ուժեղ կաճի, լավ կթփակալի, բայց չափազանց գանդաղ և մինչև անգամ կմնաթփակալած վիճակում, ցողուն և հասկ չի տա։ Այս յերկույթը նկատված եր շատ վաղուց, բայց պատճառուն անհասկանալի մնաց մինչև 1929 թիվը, յերբ լիսենկոն զարգացման ստաղիական տեսության հիման վրա բացատրեց այդ յերկույթի պատճառը։ Նա պարզեց, վոր գարնանացան և աշնանացան կուլտուրաներն իրենց զարգացման ստաղիաներն անցկացնելու համար պահանջում են տարբեր պայմաններ։ Գարնանը դաշտային պայմանները համապատասխանում են զարնանացանի պահանջներին, բայց չեն համապատասխանում աշնանացանին։ Այդ պատճառով ել գարնանացանը կատարում ե իր զարգացման լրից ցիկլ (անցնում է իր բոլոր ստաղիաները—վորակական փոփոխությունները), իսկ աշնանացանը մնում է զարգացման առաջին ստաղիայում։ Աշնանացան կուլտուրաներն իրենց յարովիզացիայի ստաղիան անցնելու համար պահանջում են ավելի ցած չնըմաստիմնի։ Յան պարնամացան կուլտուրաները։ Առաջնահերթ պահանջում են սովորված $0^{\circ}\text{C} - 2^{\circ}\text{C}$, իսկ գարնանացանները $10^{\circ}\text{C} - 12^{\circ}\text{C}$, յերեմի պվելի ցածը։

Այս յերկույթները պարզելուց հետո հնարավորություն ստեղծվեց արհեստականորեն կարգավորել բույսերի զարգացումը և նրանց համապատասխան ստաղիաներն անցնելու խնդիրը։ Քանի վոր հնարավոր չեր զաշտի չերմությունը փոխել մոտածվեց յարովիզացիայի ազրոտեխնիկական ձեռնարկումը, ըստ վորի (Չերմություն և խոնավություն), վոր նրանք իրենց զարգացման առաջին՝ կամ յարովիզացիայի ստաղիան անցնեն շտեմարաններում, վորտեղ հնարավոր և յարովիզացիայի համար պահանջների մեջ առաջին՝ կամ յարովիզացիայի ստաղիան անցնեն շտեմարաններում, վորտեղ հնարավոր և յարովիզացիայի համար պահանջներն ստեղծել։ Յեթե յեթե դրանից հետո սերմերը ցանվում են դաշտում, նրանք արդեն զարգացման առաջին ստաղիան մասամբ անցած

լինելով՝ կարողանում են ավելի լավ ոգտագործել արտաքին պայմանները, ավելի շուտ հասունանալ և ավելի բարձր բերք տալ: Այդ ազգութեանիկական ձեռնարկումը մշակելուց հետո՝ Լիսենկոյին հաջողվեց 1929 թվին, գյուղատնտեսության պատմության մեջ առաջին անգամ, «ուկրաինկա» աշխանացան ցորենը գարնանը ցանելով հեկտարից ստանալ մոտ 24 ցենտներ ուղարկությունը բացատրվում է նրանով, վոր «ուկրաինկայի» սերմերը արհեստական պայմաններում լիսենկոյի կողմից նախորոք յենթարկվել են յարովիզացիայի, այսինքն՝ անցել են իրենց յարովիզացիայի աստիճանը:

Սկզբում յարովիզացիա (գարնանացում) ասելով հասկանում ենին այն ներգործությունը (ազգութեանիկական ձեռնարկումը), վորի ազգեցության տակ բույսերն զգալի չափով կրծատում են իրենց վեգետացիոն շրջանը, որինակ՝ չնորհիվ յարովիզացիայի յենթարկվելուն աշխան ցորենը գառնում է գարնանացան, ներկայումս յարովիզացիա անելով հասկացվում ե վոչ միայն աշխանացանի գարնանացումը, այլև տարբեր բույսերի սերմերի վրա կատարվող այն ներգործողությունը, վորի ազգեցության տակ բույսերը կրծատում են իրենց վեգետացիոն շրջանը, այսինքն՝ կարողանում են կատարել լրիվ վեգետացիան պվելի կարճ ժամանակում՝ չնորհիվ այն բանի, վոր արհեստական պայմաններում նըանց սերմերն անցնում են զարգացման առաջին յարովիզացիայի աստաղիան (զարգացման առաջին վորակական փոխականությունը):

Յուրաքանչյուր կուլտուրայի ու սերմեր համար կումբնական ձանապարհով պարզվում է յարովիզացիայի նպատակահարմար ջերմաստիճանը, խոնավության 0—10% և տեղողությունը:

Սովորաբար աշխան կուլտուրաների յարովիզացիան կատարվում է 0°C—3°C-ի տակ, 35—50 օրվա ընթացքում, իսկ գարնանացանները 5°C—12°C, 10—15 օրվա ընթացքում, բամբակի յարովիզացիան 25°C—30°C տակ և այլն:

Լույսի ստաղիան անցնելու համար անհրաժեշտ է լույսի վորոշ տեղություն:

Յեթե միևնույն պայմաններում ցանենք ցորեն և կորեկ, ապա այդ բույսերի մի մասը դնենք անընդհատ լույսի պայմաններում, իսկ մյուս մասը՝ կարճ օրվա պայմաններում (այսինքն 8—10 ժամ լույսի տակ, իսկ հետո՝ մթության մեջ), կստանանք հետեւյալ արդյունքը: Անընդհատ լույսի տակ գտնվող բույսերից

ցորենը կանցնի զարգացման լրիվ ցիկլը, կտա նորմալ հասկ և կհասունանա, իսկ կորեկը յերկար ժամանակ տարիների ընթացքում լավ աճելով հանդերձ կմնա զարգացման առաջին ստադիայում, կտա վեղետատիվ որդաններ, իսկ գեներատիվ որդաններ տալ չի կարող: Կարծ որվա պայմաններում դրված բույսերը կներկայացնեն հակառակ պատկերը.—կորեկը կտա նորմալ գեներատիվ որդաններ, իսկ ցորենը կմնա թփակալած վիճակում: Յեթե փորձարկվող այդ յերկու բույսերը տեղավորենք հակառակ պայմաններում, այսինքն անընդհատ լույսի տակ գտնվող կորեկը տեղավորենք կարծ որվա պայմանների մեջ, և կարծ որվա պայմաններում աճեցրած ցորենը փոխադրենք անընդհատ լույսի տակ կամ նորմալ որվա պայմանների մեջ, ապա դրանք՝ յերկուսնել կտան նորմալ գեներատիվ որդաններ, քանի վոր նրանցից յուրաքանչյուրի համար այդ արտաքին պայմանները նպաստավոր են լույսի կամ յերկորդ ստադիան անցնելու համար:

Այս փորձը ցույց ե տալիս, վոր ցորենը լույսի ստադիան անցնելու համար կարիք ե զգում անընդհատ լույսի պայմանների կամ նորմալ որվա պայմանների, իսկ կորեկը կարիք ունի կարծ ավելի քիչ լույսի: Նույն արդյունքը կտացվի յեթե կորեկի փոխարեն վերցնենք սոյա:

Բույսի զարգացման վերոհիշյալ յերկու ստադիաների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց զարգացման պրոցեսի ճիշտ ըմբոնման և այդ որինաչափությունների լայն ոգտագործման՝ սոցիալիստական դաշտերի բերքատվությունը բարձրացնելու և սելեկցիոն աշխատանքների թափն արագացնելու համար:

Միջուրինի և Լիսենկոյի աշխատանքները բղխում են Դարվինի ուսմունքից—որդանական աշխարհի զարգացումից և բիոգենետիկական ուրենքից, ոնտոպենեզի և ֆիլոգենեզի փոխադրձ կապից: Լիսենկոն այդ որինաչափությունների հիման վրա մշակեց և ուսումնասիրեց բույսերի ստադիական զարգացման տեսությունը: Առանց նախորոք ծանոթ լինելու զարգացման ստադիական տեսության հիմունքներին՝ հնարավոր չեր լինի հանկանալ Միջուրինի ու Լիսենկոյի ուսմունքը ժառանգականության և փոփոխականության մասին:

ԲԵՐԲԱՆԿԸ, ՄԻԶՈՒՐԻՆԸ, ԼԻՍԵՆԿՈՆ ՎՈՐՊԵՍ ԴԱՐՎԻՆԻԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

Համառոտ կենսագրական տեղեկաւրյաւններ Բերբանկի մտածին

I. Բերբանկը ծնվել է Բոստոնի մոտ գտնվող Լանկեստր քաղաքում 1847 թ.: Մանուկ հասակում ստացել է բավական լավ դաստիարակություն—հոր կողմից (շոտլանդացի) կարգալու սեր, մոր կողմից (անգլիացի) սեր գեղի ծաղիկները և ընդհանրապես եսթետիկական զարգացում: Դպրոցն ավարտելուց հետո Բերբանկին վիճակվում է բանվորի ծանր աշխատանքային կյանքը: Ֆարբիկայից ստացած աշխատավարձը հաղիվ բավարարում եր շաբաթվա միայն 6 որը, նա մտածում եր, թե ինչ անի, վոր 7-րդ որը ևս ապահովի իր ապրուստի միջոցը Վերջապես մտածեց կատարելագործել այն մեքենան, վորի վրա ինքն աշխատում եր: Նա ավելացնելով մեքենայի արտադրողականությունը՝ կարողացավ բարձրացնել տալ իր աշխատավարձը: Նա վորպես գյուտարար թեև մեծ ապագա յեր խոստանում, բայց բոլորովին այլ ուղղությամ զնաց: Նրան գրավում է կենդանի բնությունը: Նա սկսեց զբաղվել բանջարաբուծությամբ, հենց իր աշխատանքի սկզբնական շրջանում նրան հաջողվեց ստանալ կարտոֆիլի կատարելագործված մի նոր սորտ, վոր նա անվանեց իր անունով: Հստ մոտավոր հաշվարկումների՝ այդ սորտով նա իր յերկիրը հարստացրեց 20 մետրո՞ն գոլպարով: Յերկիրը հարըստացնելով՝ նա ինքը վոչ մի ոգուտ չստացավ, և իր նյութական զրությունը շատ հեռու յեր բավարար լինելուց: Ինքն ել փողի հետեւ չեր վաղում, նա ավելի մեծ նպատակ ուներ—ամրող մարդկության բարորությունը: Մի կողմից իր վատ առողջությունը, մյուս կողմից իր ծրագրած փորձերը ավելի նպաստավոր պայմաններում կատարելու ցանկությունը պատճառ դարձան, վոր նա թողնի իր ծննդավայրը և անդավոխմի կալիքորնիա:

Կալիքորնիայում Բերբանկն աշխատանք եր վինտոռում, բայց չեր ճարում: Վերջիվերջո նա մուրացկանության ապահմանին հասավ: Վորոշ ժամանակից հետո նա աշխատանք գտավ՝ հավանոցի պահապան: Գիշերելու տեղ չունենալու պատճառով քնում եր հավերի հետ միասին հավանոցում: Այդ ժամանակ նա 20 տարեկան եր, վերին աստիճանի աղքատ կյանք եր վարում,

վորի հետևանքով հիվանդացավ։ Շնորհիվ իր յեկաթյա կամքի ու իր բարձր նպատակների վորոշակիությանը, նրան հաջողվեց վերջիվերջո ունենալ մի փոքր հողամաս և իրազործել իր յերազները—ստեղծել բուսական նոր ձեեր՝ մարդկության բարությունը բարձրացնելու համար։

1893 թվին սկսվում են ամերիկացի ականավոր գիտնականի սելեկցիոն աշխատանքները։ Կարճ ժամանակից հետո նրա փոքր ֆերման համաշխարհային համբավ հանցից Բերբանկին հաջողվեց ստանալ հաղարսավոր նոր ձեերի որիգինալ բույսեր—պտղատու ծառեր, հատապտղողներ, ծաղիկներ, բանջարեղին, կարտոֆիլ արևածաղիկ, յեղիպտացորեն և այլն։

Բերբանկի հոչակը և հաջողությունը հետևանք և այն բանի, վոր հենց աշխատանքի սկզբից նա կուրորեն չեր դնում հարթ ձանապարհով, կուրորեն չեր ընդունում իր ժամանակի գիտության վերջին տվյալները, այլ փնտում ու դնում նոր ուղիներ, խոր կերպով ուսումնասիրում բնությունը և սովորում նրանից։ Նրա ստեղծած նոր ձեերից առաջին պլանում պետք է դնել հետևյալ բուսական նոր ձեերը՝ անփուշ կակտուսը, վորը ծառայում և թե վորպես պտուղ (մըցելով նարինջի հետ) և թե վորպես սքանչելի կերարույս (ձիերի և կովերի համար)։ Այս հայտնի բույսը աճում և չոր վայրերում, վորանդ հնարավոր չե ուրիշ բույս աճեցնել։ Յերկու տեսակի հունական ընկույզներից ստացած հիբրիդը, վորը իր լրիվ մեծության հասնում եր 14 տարվա ընթացքում՝ ծածկելով հակայական անտառային մասսիվներ, ոդտագործվում և վորպես շինափայտ։

Նա առաջացրել և առանց կորիզի սալորի հիբրիդներ, խոշոր հատապտուղով «պարատոքս»[»] մորենի՝ մորենու և մոշու խառնուրդից, սերկել՝ անանասի բույրով, մի շաբաթ հոտավետ նոր ծաղիկների սորտեր և այլն։

Այս հաջողությունները լյուգեր Բերբանկը ձեռք և բերել պայքարով։ Նրա դեմ դուրս յեկան կեղծ գիտնականներ, վորոնք հայտարարեցին, թե նրա մեթոդները հիմնավորված չեն, թե նրա փորձերն աստծո կամքին դեմ հն դնում։ Յեթե բույսերի նոր սորտեր հարկավոր լիներ,—ասում եյին կրօնականնորեն տրամադրված գիտնականները,—ապա արարիչն այդ մասին ինքը կմտածեր։

Բերբանկի հիբրիդիզիոն փորձերն այնքան հեռու եյին գնում ընդունված ուղիներից, վոր նրա թշնամիները չկարողաւ

նալով ժխտել դրական արդյունքները՝ դիմում ելին պայքարի ամենազգվելի մեթոդին՝ ծաղրանքին, չհասկանալով, վոր հենց այդ ծաղրանքով ապացուցում ելին իրենց թուլությունը հանձարեղ սելեկցիոների ուժի դեմ:

Բերբանկն իր բոլոր աշխատանքները կատարել եւ իր սեփական միջոցներով և ոխակով՝ առանց վորեն մեկի կամ պետական ոգնության: Միայն 1905 թ. Կարնեկի ինստիտուտը, գնահատելով նրա հաջողությունների տեսական և գործնական նշանակությունը, նրան տրամադրել եւ 100 հազար դոլար (տարեկան 10 հազար դոլար) իր փորձերը մանրամանությամբ գրանցելու համար: Բերբանկի աշխատանքի հիմնական ուղիները հետևյալներն են:

1. Յելանյութի լայն ոգտագործումը, վոչ միայն Ամերիկայի, այլև Չինաստանի, Ճապոնիայի, Սիբիրայի, Հիմալայի բուսականության:

2. Վեգետատիվ ճանապարհով բազմացող բույսերի գեներատիվ բազմացում, և ստացված նոր բույսերի մեջ լայն չափերով խիստ ընտրության կատարում:

3. Լայն միջտեսակային հիբրիդիզացիա՝ փոփոխակների, տեսակների և անգամ սեռերի սահմաններում և ստացած հիբրիդներից լավագույնների խիստ ընտրություն:

Բերբանկի կատարած արհեստական ընտրությունն այնքան խիստ եր, վոր նա մոտենում եր բնական ընտրությանը: Բերբանկի աշխատանքները գիտական տեսակետից կարևոր են, վորովհետև ապացուցեցին գեֆրիզի մուտացիոն տեսության սխալը: Յերբ Դեֆրիզը գնաց Բերբանկի մոտ, ինքը ստիպված յեղավ հրաժարվելու իր տեսակետից և ընդունեց, վոր մուտացիան դրեթե վոչչով չի տարբերվում մնացած ձևերի փոփոխականություններից, մասնավանդ յեթե հաշվի առնենք Բերբանկի կատարած արհեստական ընտրության մասշտաբը, յերբ նա հարյուր հազարով որգանիզմներ վոչնչացնում եւ ընտրելով միայն մի քանից: Թեև Բերբանկը հանձարեղ սելեկցիոներ եր, բայց դժբախտաբար չի տվել վոչ մի լուրջ տեսական աշխատանք, վորտեղ գիտականորեն հիմնավորված և լուսաբանված լինելին իր աշխատանքի մեթոդները: Նրա աշխատանքները նկարագրված են տասներկու հատորից բաղկացած մի գրքում, բայց այստեղ կարելի յե գոնել նոր ձևերի առաջացման նկարագրությունները միայն: Բերբանկն իր կյանքի վերջին տարիներում հրատարակել

և մի փոքրիկ աշխատություն՝ «Կյանքի հունձ» խորագրով, վորտեղ, բացի իր կենսագրությունից, տալիս է նաև իր աշխատանքի լուսաբանությունը։ Այս գրքում Բերբանկը ասում է. «Ծանր աշխատանքը, ջանքը, դպրոցը, սերը գեղի աշխատանքը, իմ փորձի կիրառման ասպարեզի լայնացման ցանկությունը, քնությունից սովորելու ընդունակությունը, յերկութապես միատեսակ բույսերից իսկապես լավերի ընտրությունը՝ հիմք են ծառայել իմ վողջ աշխատանքների համար»։ Այս բոլոր աշխատանքների համար իրավացիորեն հանձարեղ ամերիկացի սելեկցիոները դասվել են համաշխարհայիշն համբավ ունեցող դրվիճայությունում սելեկցիոնիստների շարքում։ Բերբանկը մահացել է 1926 թվին։

Միշուրինի կյանքն ու գործունեյաւրյունը.

Միշուրինը ծնվել է 1855 թվին, նախկին Ռյազանի նահանգի Յումաշեվ գյուղում։ Նրան չի հաջողվում ստանալ նույնիսկ միջնակարգ կրթություն։ Առանց մասնագիտության, դրամի և ոգնության՝ յերիտասարդ Միշուրինն աշխատանքի յև մտնում Ռյազան-Ռյազալ յերկաթգծի Կողլով կայարանում, 12 ռ. 50 կոպ. աշխատավարձով։

Միշուրինը մանկությունից սիրում էր պտղաբուծությունը։ Այդ սերը նրա մեջ այնքան ուժեղ էր, վոր նա իր չնչին աշխատավարձի մի մասը զոհաբերում էր իր պտղաբուծական աշխատանքներին։ Նախկին Կողլովում մի փոքրիկ հողակտոր վերցնելով, իր ծառայությանը զուգընթաց նա սկսում է իրագործել իր կյանքի ամենամեծ ձգուումը—աղնվացնել պտղատու ծառերը՝ ստեղծելով նոր տիպի ու ձեր բույսեր։ 1875 թվից նա իրեն ամրողացությամբ նվիրում է գիտական աշխատանքի։ 1888 թվին նրան հաջողվում է նախկին Կողլովում կազմակերպել Ռուսաստանի առաջին սելեկցիոն տնկարանը։

Միշուրինի աշխատանքներն այնքան հաջող եյին ընթառում, վոր 1907 թվին Ամերիկայի Միացյալ Նահանգներից առաջարկում էն Միշուրինին մեծ գումար և նրան հրավիրում Ամերիկա մշտական աշխատանքի՝ խոստանալով տալ նրան բոլոր հնարավոր լավագույն պայմանները։ Միշուրինն ամերիկացիների առաջարկությունը մերժում է. Զնայած վոր Միշուրինի հռչակն այդքան մեծ եր, սակայն ցարական կառավարությունը նրան վոչ մի ոժանդակություն չեր ցույց տալիս։ 1905 թվին Միշուրինն իր աշխատանքների մասին զեկուցագիր և գրում հողագործու-

թյան մինիստրությանը՝ խնդրելով, վոր իր տնկարանի բաղայի վրա բաց անեն պտղաբուծական տարրական դպրոց։ Մինիստրության չինովնիկները բարեհաճում են Միջուրինին պատասխանել միայն 3 տարուց հետո, այն ել ասելով, թե դպրոցի խնդիրը կարող ե լուծվել միայն այն դեպքում, յերբ Միջուրինը համաձայնվի աշխատել մինիստրության թերապքանքով։ Միջուրինը մերժում և կառավարության այդ «բարերարությունը» և մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը աշխատում և մենակ՝ առանց վորեե ոգնության։

Պարբերական մասնագիտական ժուռնալների եջերում Միջուրինը քննազատության և յենթարկում ակլիմատիզատորների, մենդելիստների հակադարվինիստական դրույթները և լուսաբանում և իր գիտական ու պրակտիկ հաջողությունները։ Միայն 1917 թվից հետո սոցիալիստական հեղափոխության մեծագույն առաջնորդներ՝ Լենինի և ՍՏԱԼԻՆԻ կողմէց Միջուրինն արժանանում ե պատշաճ ուշադրության և հոգատարության։ 1922 թվին վ. ի. Լենինի առաջարկությամբ Միջուրինին արվում և բոլոր անհրաժեշտ միջոցները՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու և իր նվաճումները կիրառելու արտադրության մեջ։ Միջուրինի նախկին փոքրիկ վարձով վեցըրած հողամասի փոխարեն այժմ կազմակերպված են գիտական-արդյունաբերական խոշոր հիմնարկություններ։

Կազմակերպված և հյուսիսային պտղաբուծական միութենական գիտահետազոտական ինստիտուտ, պտղաբուծական սելիկցիայի բարձրագույն դպրոց, պտղաբուծական տեխնիկում և պտղաբուծական խոշոր տնտեսություն։ Ծրագրված ե կոմբինատիբագան հասցնել միշե 16 հազար հեկտարի, այդ աշխատանքի համար նախատեսնաված և ծախսել 40—50 միլիոն ռուբլի։ ի. վ. Միջուրինն իր բեղմնավոր տեսական ու գործնական բազմաթիվ աշխատանքների համար պարզելարկվեց լենինի և Աշխատանքի Կարմիր Դրոշի շքանշաններով, արժանացել և գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչի, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ու լենինի անվան գյուղատնտեսական ակադեմիաների խոկական անդամի պատվավոր բարձր կոչումներին։ Նա միաժամանակ ուներ կենսաբանական գիտությունների գոկտորի գիտական աստիճան։

Միջուրինն իր 60-ամյա գործունեյության հորելյանին ընկեր ՍՏԱԼԻՆԻ 8 ստանում և հետեւյալ հեռագիրը.

ԸՆԿԵՐ ԻՎԱՆ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻՉ ՄԻԶՈՒՐԻԿԻՆ

Հոգուս խորքից շնորհավորում եմ ձեզ, իվան Վլատիմիրովիչ, Ձեր 60-ամյա բեղուն աշխատանքների կապակցությամբ, վոր գնացել ե հոգուս մեր մեծ հայրենիքի:

Ցանկանում եմ Ձեզ առողջություն և նոր հաջողություններ պաղաբուծությունը վերակաղմակերպելու գործում: Ամուլս սեղմում եմ Ձեր ձեռքը: Ի. ՍՏԱԼԻՆ:

Խորհրդային կառավարության վորոշմամբ նախկին կողլով քաղաքը վերանվանվում է Միջուրինսկ, և նրա 60-ամյա գործունեցության հանրագումարը ճոխ հրատարակությամբ ապադրվում եր:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Միջուրինի համար լայն հորիզոն և բացվում՝ իրադորձելու իր վողջ կյանքի ընթացքում ունեցած յերազները, այն ե՝ առաջացնել մի շարք նոր պաղատու բույսեր, վոր լինեն վորակով բարձր, այնքան դիմացկուն, վոր աղաս կերպով հնարավոր լինի մշակել մեր հայրենիքի բոլոր այն վայրերում, վորտեղ առաջներում պաղաբուծություն բոլորովին չկար. իսկ այն վայրերում, վորտեղ կար, բայց ցած վորակի և վերին աստիճանի աղքատ ասորտիմենտով, բարձրացնել վորակը, տալ ձմռան դիմացկուն սորտեր և հարըստացնել ասորտիմենտն ի հաշիվ հարավային կուլտուրաների ինչպիսին են ծիրանը, վեղձը, խաղողը, սերկեվիլը և այլն:

Միջուրինն ստեղծել ե 300-ից ավելի նոր տիպի ու ձեկի պաղատու բույսեր: Նա ստեղծել ե այնպիսի խաղողի ու ծիրանի տեսակներ, վորոնք կենտրոնական սևահող մարզում, Միջուրինսկում ցրտին դիմանում են և ձմեռում են առանց ծածկոցի: Միջուրինի ստեղծած տանձի, խնձորի, կեռասի, բալի, սալորի տեսակները և սորտերը իրենց շատ լավ են զգում Մուկվայի, Իվանովի, Լենինգրադի, Ռուբալի, Սիբիրի մարզերում: Նրա խնձորենին համում ե նույնիսկ մինչև կրամառյարսկ, վորտեղ ձմեռը ջերմությունն իջնում ե մինչև -50°C :

Ներկայիս պաղաբուծության մեջ լայն տարածում են ստացել Միջուրինյան պատրների հետեւյալ քանակությամբ նոր տեսակներ՝ խնձոր՝ 50, բալ՝ 29, տանձ՝ 13, սալոր՝ 14՝ ծիրան՝ 9, սերկել՝ 1, հատապտուղներ՝ 4, ակտինիդիա՝ 5, խաղող՝ 4, կեռաս՝ 4 և այլն:

Միջուրինի այս հաջողությունները բացարկվում են վոչ միայն նրա տաղանդով, աշխատասիրությամբ, աշխատանքի մեծ ընդունակությամբ, այլև նրա մտքի հարցասիրությամբ, քննաւ-

սերությամբ, նրանով, վոր նա մետաֆիզիկ չեր, չեր ընդունում գիտության բոլոր տվյալները վորպես մշտնջնական անփոփխ տվյալներ, այլ ընդհակառակը փնտում եր և գտնում հարուստ ընության մեջ նոր յերեվույթներ ու փոխարարերություններ։ Գիտության մեջ ընդունված եր՝ թէ հեռավոր հիբրիդիզացիան վոչինչ տալ չի կարող, թէ պատվաստակալը պատվաստացվե վրա նոր ազգեցություն չի թողնի, թէ ձեռք բերով հարժարական հատկանիշները ժառանգարար չեն անցնում, թէ հիբրիդի առաջին սերունդը միշտ լինում ե գոմինանու կամ միատեսակ և այլն։ Միչուրինը դոգմա չեր ընդունում, այլ փնտում ու գտնում եր այդ յերեւույթների, պրոցեսների որինաչափությունները, նրա գրսևորման մեթոդները, ձեվերը և այլն։

Միչուրինը չբավարարվեց միայն նրանով, վոր իր աշխատանքների հիմքում դրեց Դարվինի ուսմունքը, այլ խորացրեց այն, զարգացման ավելի բարձր աստիճանի հասցըեց։

Միչուրինը վոչ միայն պրակտիկ սելեկցիոն եր, այլ նաև խոշոր գիտնական, վորը տվել ե մի շարք որիզինալ գիտողություններ ու մեթոդներ, վորոնք խոշոր նշանակություն են ունեցել սելեկցիայի տեսական հիմունքները լուսաբանելու գործում։ Նա խոշոր հեղաշրջում ե առաջացրել պատղաբուծության սելեկցիայի տեսության մեջ։

Այժմ ծանոթանանք Միչուրինի աշխատանքի մեթոդներին և ձեռք բերած նվաճումներին։

1. Համաշխառմային բաւստիլն աղբյաւների սգտագործումը վարպես յելանյութ։ Միչուրինն իր սելեկցիոն աշխատանքներում պատուղների և հատապտուղների նոր սորտեր ստեղծելու համար լայն չափով ոգտագործեց տարբեր յերկրների ինչպես կուլտուրական տեսակները, նույնպես և վայրի ձևերը։ Նրա տնկարանում կան բույսեր, վորոնք բերված են Սիբիրից, Հեռավոր Արևելքից, Կովկասից, Մոնղոլիայից, Արևմտյան Յեվրոպայից, Հյուսիսային Ամերիկայից, Չինաստանից, Մանջուրիայից և այլն։ Միչուրինը վաղուց խնդիր եր դրեւ սելեկցիոն աշխատանքներում ոգտագործել նորանոր տեսակներ և սորտեր։ Նա հանձնարարում եր բույսերի նոր տեսակների մասսայական վորոնումներ կազմակերպել՝ կուլտուրայի մեջ մտցնելու համար, վորը հսարավորություն կտա հեղտացնելու նոր սորտերի առաջացումը մեր ժողովրդական տնտեսության պահանջների բավարարման համար։ Միչուրինը վոչ միայն առաջին անգամ մեծ հաջողությամբ հյու-

սիս տեղափոխեց հարավային մի շարք կուլտուրական սորտեր, ինչպես որինակ, ծիրան, խաղող և այլն, այլև խնդիր դրեց կուլտուրայի մեջ մտցնել մի շարք նոր՝ միջև որս անծանոթ բույսեր. նա, որինակ՝ կուլտուրայի մեջ մտցրեց Հեռավոր Արևելքում վայրի դրությամբ աճող մի թուփ՝ ակտինիդիան: Այդ թուփը տալիս ե յերկար հատապտուղներ՝ գեղնականաչափուն զույնի և շատ հաճելի համով: Այդ պտուղը պարունակում ե բարձր տոկոսի «C» վիտամին, տասն անգամ ավելի շատ՝ քան լիմոնի մեջ: Միջուրինը խոշոր չափերով ոգտագործեց յերկրագնդի տարբեր մասերից բերած կուլտուրաները վորակես յելանյութ հեռավոր հիբրիդիկացիայի փորձերում (արամախաչվող ծնողներ):

2. Նոր սորտերի առաջացումը միայն ընթարքամբ՝ տռանց արհեստական հիբրիդիզայիլ: Միջուրինն այս մեթոդն ոգտագործեց վորակես ոժանդակ միջոց՝ բուսական նոր սորտեր առաջացնելու գործում ավելի խոր զիտական հիբրիդիկացիայի մեթոդի համար: Միջուրինն այդ մեթոդը համարում եր ավելի պրիմիտիվ, հին և պարզունակ, և քանի վոր չեր կախված մարդու ակտիվ ներգործությունից, ուրեմն և հիմնական լինել չեր կարող, այլ պետք ե ոգտագործվեր միայն վորակես զուգահեռ, ոժանդակ միջոց, զիսավորապես սկսնակ սկիլեցիոներների համար: Այդ մեթոդի եյությունն այն է, վոր Միջուրինը ցանում եր բնական փոշոտման միջոցով առաջացած սերմերը և ստացված բույսերից ընտրում եր այն անհատներին, վորոնք ունեցին ամենաարժեքավոր հատկանիշները: Շատ հաճախ վրոշ ուղղությամբ կատարված ընտրությունը շարունակվում եր մի շարք սերունդներ: «Կլարա Ցետկին» ակտինիդիան Միջուրինն ստացել ե 4 սերունդ ընտրություն կատարելով, ուշագրություն դարձնելով հատապտուղների մեծության և չթափվելու հատկությանը: Ծիրանի յերկուսորտերը՝ «Միջուրինյան լավագույն №1»-ը և «տովարիչչը»-ը, վորոնք դիմանում են ցրտին Միջուրինսկում և լավ պտղականում, Միջուրինն ստացել ե 1925թ. սիրիրական ծիրանի սերմերը ցանելով և նրանցից աճած տնկիներից լավագույնն ընտրելու միջոցով:

Հիբրիդիզայիլ ժամանակ արտադրակների (ծնողների) լինթարյունը և հեռավոր հիբրիդիկացիալի մերսով: Այս մեթոդը Միջուրինի հիմնական մեթոդն ե. նա իր սորտերի մեծագույն մասն ստացել ե այս մեթոդով: Հեռավոր հիբրիդիկացիա ասելով Միջուրինը հասկանում եր վոչ միայն յերկու ծնողների արամա-

խաչումը (հիբրիպիզացիա), վորոնք սիստեմատիկական կամ բուտանիկական (աղջակցական) տեսակետից իրարից հեռու յեն կանգնած, այլ նույն սեփին, տեսակին, սորտին պատկանող, բայց աշխարհագրական ծագումով միմյանցից հեռու դժուվող ծնողների տրամախաչումը: Այս մեթոդի կիրառման գործում Միչուրինի հիմնական նպատակն է յեղել առաջացնել սլաուդների այնպիսի սորտեր, վորոնք դիմացկուն լինելին թուսաստանի կլիմայական խիստ պայմաններին և միաժամանակ ունենային բարձր վորակ: Յերկար տարիների փորձերի հիման վրա նա յեկալ այն յեղակացության, վոր այդ նպատակին հասնելու հիմնական ճանապարհը պտղատու ծառերի դիմացկուն ներկայացուցիչների տրամախաչումն և բարձր վորակի նուրբ կուտուրական սորտերի հետ:

Մինչև արտադրող ծնողների ընտրության գիտական հիմքերի միջուրինյան լուսաբանումը, սելեկցիոնները ծնողների ընտրությունը կատարում էին պատահական, եմպիրիկ ձևով, հետևարար ստացվելիք արդյունքի մասին նըանք վոչինչ ասել չեին կարող: Ծնողների ընտրությունը սելեկցիայի ամենակարենը բայց միաժամանակ ամենադժվար խնդիրն է: Միչուրինը տրամախաչման համար արտադրող բույսեր ընտրելիս հաշվի յեր առնում նրանց ծագման պատմությունը, զարգացման պայմանները և տնտեսական նշանակություն ունեցող հատկանիշները, վորպեսզի հնարավոր լինի հիբրիդներում ստանալ մեր ցանկացած կոմբինացիան, վորակը և հատկությունները:

Աշխատանքի սկզբնական շրջանում նա մի քանի փորձ կատարեց ակլիմատիզացիայի ուղղությամբ: Միչուրինսկ և բերում հարավային յեղուպական ու ամերիկյան լավագույն պտուղների սորտերը և փորձ անում մշակել այնտեղ, բայց միշտ անհաջողության և հանդիպում: Դրանից հետո նա թողեց այդ սխալ մեթոդը՝ հակառակ սելեկցիոններ ակլիմատիզատորների պնդումներին, թե հնարավոր և անմիջական և ուղղակի ակլիմատիզացիա: Միչուրինը մի շարք հոդվածներում շատ խիստ քննադատության յենթարկեց նման սխալ տեսակետները, վորոնք իրենց հիմքերն ունեյին լամարկի և Սենդ-Իլերի տեսությունների մեջ: Համաձայն այս վերջինների՝ նոր միջավայր տեղափոխվելիս որգանիզմները անմիջապես կլերակառուցվեն ու կհարմարվեն նոր միջավայրին: Այս տեսակետը հակապատճական և և հակադարվինիտական, քանի վոր աչքաթող և արգում որգանիզմի հարմարվելու հնարա-

վորությունները և վորոշ սահմանները, վոր պայմանավորված են որդանիզմի ֆիլոգենետիկ զարգացումով։ Դրանից հետո Միջուրինը փորձեց տրամախաչել դրսից բերված կուլտուրական սորտերը Միջուրինսկի սահմաններում գտնված տեղական դիմացկուն, բայց ցածր վորակի սորտերով, այն հույսով, վոր կհաջողվի որգանապես մի բույսի հիբրիդի մեջ միացնել ինչպես տեղական դիմացկունության հատկությունը, այնպես ել կուլտուրական հարավային սորտերի վորակական հատկանիշները։ Բայց, յերբ Միջուրինն այդ հիբրիդներն աճեցնում եր Միջուրինսկի սովորական պայմաններում, այդ դեպքում նրանք ավելի շատ նմանվում ենին տեղական դիմացկուն ծնողին, այսինքն՝ լինում ենին դիմացկուն, բայց ցածր վորակի պտուղներով։ Խակ յերբ նա հիբրիդն աճեցնում եր լավ պայմաններում, այդ դեպքում նրանց մոտ գոմինանտ ենին հանդիսանում կուլտուրական սորտի հատկանիշները, այսինքն նրանք լինում ենին նույը, բարձր վորակի պտուղներով, բայց շատ թույլ դիմացկունությամբ և հեշտությամբ ցրտահարվում ենին։

Այս յերկու մեթոդներից և վոչ մեկով Միջուրինն իր նպատակին համանել չկարողացավ։ Նրան չհաջողվեց ստանալ այնպիսի բույսեր, վորոնք լինելին թե բարձրորակ և թե դիմացկուն։ Միջուրինն այդ յերկույթը բացատրում եր այսպես։ Հիբրիդի մոտ գոմինանտ են այն ծնողների հատկանիշները, վորոնց զարգացման համար միջավայրի պայմաններն են նպաստավոր, քանի վոր դա համապատասխանում է նրանց եվոլուցիոն զարգացման պրոցեսում ձեռք բերած հարմարողականությանը։ Դրանից հետո Միջուրինը մշակեց և լայն չափերով կիրառեց հեռավոր հիբրիդիզացիայի մեթոդը, այսինքն տրամախաչեց աշխարհագրական տեսակետից իրարից հեռու գտնվող ձևերը և նրանց ծնողների ընտրությունը կատարելիս հիմք ընդունեց հետեւյալ սկզբունքը։ Ինչքան տրամախաչվող արտադրող բույսերն իրենց ծննդավայրով և միջավայրի պայմանների տեսակետից իրարից հեռու լինեն, հիբրիդներն այնքան հեշտությամբ կհարմարվեն իրենց նոր տեղի զարգացման պայմաններին։

Հեռավոր վայրերից վերցրած յերկու ծնողների հատկանիշները, Միջուրինսկում իրենց համար անսովոր ոտար պայմաններ գտնելով, չերին կարող լրիվ չափով գոմինանտ ձևով զարգանալ։ Յենելով մի շարք նման ուսումնասիրություններից՝ Միջուրինը յեկավ այն յեզրակացության, թե դոմինանտությունը արտուրա յերեսույթ չե և շատ ուժեղ չափով կախված է հիբրիդների աճեց-

ճան պայմաններից: Յեկ վորպես դրա հետևանք՝ նա մշակեց ու կիրառեց հիբրիդների դաստիարակման իր հատուկ մեթոդը:

Միջուրինը նման տրամախաչումից ստացած հիբրիդները համապատասխան ձևով դաստիարակելով և ընտրելով՝ առաջացրեց իր ամենաարժեքավոր ինձնագորների, տանձերի, բալերի, սալորների և ուրիշ կուլտուրաների նոր սորտեր: Այդ մեթոդի կիրառմամբ Միջուրինն ստացել է իր նշանավոր «բերբ» տեսակի սորտը: Այդ սորտը ստանալու համար նա վորպես մայր արտազրող վերցրել է յերիտասարդ, առաջին անգամ ծաղկող ուսասուրիխական վայրի տանձը (վոր աճում և Ասիայի հյուսիսարևելքում, հյուսիսային Չինաստանում, Կորեայում) և բեղմանավորել է բերի-ույյալ (ամերիկյան սորտ) կուլտուրական սորտի բեղմանավորիներով: Վորպես արդյունք նման հեռավոր հիբրիդի պացիայի ստացվել եւ Միջուրինի ձմեռային բերի տանձի սորտը, վորը ցրտադիմացկուն եւ, պտուղը պահպում և ամբողջ ձմռան ընթացքում թարմ վիճակում, պտղի վորակը բարձր եւ, իմժուն և դեպի հիվանդությունները:

Նույն ձևով Միջուրինը ստացել է իր հայտնի «բելֆոր կիտայկա» կոչվող ինձնարի սորտը: Այդ սորտը ստացվել եւ ամերիկյան դեղին բելֆորը՝ տրամախաչելով «չինական ինձորենու փոշիով»:

ԽՍՀՄ-ի միջին և հյուսիսային ցուրտ պայմաններին համապատասխան ցրտադիմացկուն խաղողի սորտեր ստանալու նպատակով Միջուրինը տրամախաչել և հեռավոր արևելքի և Հյուսիսային Ամերիկյան խաղողի վայրի տեսակները Արևմտյան Յեկրոպայի կուլտուրական սորտերի հետ: Որինակ՝ «ռուսական կոնկորդ» սորտն ստացվել եւ ամերիկյան խաղողը տրամախաչելով ուսասուրիխական վայրի խաղողի հետ: Նման ճանապարհով Միջուրինն ստացել է նաև «հյուսիսային սպիտակը», «Միջուրինյան կորնիկան» և այլն:

Միջուրինի կրկնակի տրամախաչման և կամպլեքսային նիրդիքիզայի մերագները: Իր վաթսունամյա աշխատանքների արդյունքներն ամփոփելիս Միջուրինը ասում է. պտուղների նոր սորտեր ստանալու գործում ամենակարենոր և եյական միջոցը հիբրիդների կրկնակի տրամախաչման և լավագույն կուլտուրական սորտերի հետ: Այդ մեթոդով Միջուրինը ստացել է պեղպին շաքրանական խնձորի սորտը նա այդ սորտը ստանալու համար շաքրանական խնձորի սորտը նա այդ սորտը ստանալու համար պկբում տրամախաչել եւ չինական խնձորը «գլոգերովկի» հետ և նրանից ստացած հիբրիդի առենքներով կրկնի տրամախաչել եւ

«ուանետ որլեանական» հարավային խնձորի սորտով: Նույն մեթոդով ստացել ե կարմիր բելֆլորը:

Կոմպլեքսային հիբրիդիզացիայի որինակ կարող ե ծառայել Միջուրինի «տաեժնոյե» խնձորի սորտը, վոր փոքր պտուղներ ունի, բայց վերին աստիճանի ցրտադիմացկուն եւ և աճում է նույնիսկ Սիրիրի ցուրտ պայմաններում: Այդ սորտը ստանալու համար նա սկզբում չինական խնձորը տրամախաչել ե Ղրիմի «կանդիլ սինապ» սորտի առեջներով և ստացել ե «չինական կանդիլը», վորը թեև բարձր վորակի պտուղներ ունիր, բայց ցրտադիմացկուն չեր:

Հիբրիդների դասիարակման մերոդը: Միջուրինի նպատակն այն չեր, վոր յերկու ծնողների հատկանիշներն ել հանդես չգտն, այլ այն, վոր յերկու արտադրողների դրական կողմերը միաժամանակ գերակշռող ձևով հանդես գան և զարգանան: Միջուրինն այս հակասությունը լուծեց՝ կիրառելով իր հիբրիդների դաստիարակման մեթոդը:

Այս առթիվ Միջուրինը ասում է.

1) Յերկու արտադրողների տրամախաչումից ստացված պտղի սերմից աճեցրած հիբրիդի վորակը ամենից առաջ կաղմած ված և արտադրող բույսերի, այսինքն հոր, մոր և նրանց նախահայրերի ժառանգաբար անցած հատկանիշների այն մասի կոմքինացիայից, վորի զարգացման համար հենց սկզբից նպաստվոր են յեղել արտաքին միջավայրի պայմանները, այսինքն շրջապատի ողը, հողը, ջերմությունը, խոնավության աստիճանը, հողի կազմը, քամիների ուժը և այլն:

2) Մեր տեղական կլիմայական պայմաններում յեվրոպական կուլտուրական նուրբ սորտերի և դիմացկուն կամ վայրի տեսակների տրամախաչումից ստացված սերմերից նոր սորտեր առաջնելու ժամանակ հարկավոր չե սերմից դուրս յեկած բույսերին պարարտ հող տալ: Մանավանդ պիտի խուսափել վորս և պարարտանյութ տալուց, վոր արագացնում և բույսի աճի դարպացումը, հակառակ դեպքում որգանիզմի կառուցվածքի մեջ ուժեղ չափով դոմինանտ կհանդիսանան կուլտուրական սորտերի ժամանակաբար անցած հատկությունները: Դրանից բույսերը կլինեն նոսր և փիրուն փայտանյութերով, վորի հետևանքով համարյա բոլորն ել կցըտահարվեն:

3) Մի քանի տարիների ընթացքում համատարած ցրտահարության հետևանքով նա կորցնում եր հարյուրավոր հիբր-

բիրդներ, մինչև վոր ցանքի և պեկիրովկայի համար սկսեց ողագործել մարգեր, վորոնք դիտմամբ կազմված եյին աղքատ ավազային հողից:

4. Նա սկսում եր կիրառել հիբրիդների պարարտացումը աճի և զարգացման այն ստագիայից, յերբ բույսն ինքն իրեն սկսում և սեռական բազմացման որգանները, այսինքն՝ պտղատու բողբոջները կազմակերպել: Այդ ժամանակ պարարտացումն անհրաժեշտություն ե՝ ինչպես պտղատու բողբոջների ավելացման և նրանց ավելի լրիվ կազմակերպման, այնպես ել ավելի խոշոր պտղուների զարգացման համար: Անման այդ ստագիայում պարարտացումը չի կարող բույսին վնաս բերել, քանի վոր բույսն արդեն ձեռք է բերել հարաբերական կայունություն իր մասերի փոփոխման գեմ: Պարարտացումը նպաստում է բույսի համար դեռ նոր առաջացող պտղուների սերմերի և պտղատերեկիների կազմակերպմանը:

Ինչպես տեսնում ենք՝ Միջուրինը խոր ըմբռնում եր բույսերի զարգացման որինաչափությունները և նրանց արհեստական կերպով ուղղություն եր տալիս:

Նա սկզբում յերիտասարդ բույսին (սկսած սերմից) տալիս եր այնպիսի պայմաններ, վորոնք համապատասխան եյին ցրտադիմացկուն վայրի կամ կիսավայրի սորտի պայմաններին, վորպեսզի նրա դիմացկունության հատկանիշները (փայտի ամրությունը) զոմինանտ հանդես գային և ծառն ինքը վներ դիմացկուն: Իսկ յերբ համում եր պտղակալության շրջանը, յերբ զարգանալու եյին կուլտուրական սորտի վորակյալ պտղուների հատկանիշները, նա զարգացման պայմանները փոխում եր և մոտեցնում կուլտուրականի զարգացման պայմաններին (պարարտացում և այլն), վորպեսզի կուլտուրականի հատկությունները, համապատասխան պայմաններ գտնելով, զոմինանտ հանդես գային: Այդպիսով Միջուրինը համապատասխան դաստիարակման մեթոդը կիրառելով՝ հնարավորություն եր ստեղծում, վոր յերկու ծնողների ցանկալի հատկանիշներն ել զարգանային և զոմինանտ հանդես գային, բայց վոչ թե մեկը մյուսի հաշվին, այլ հավասար չափով:

Հիբրիդների դաստիարակման մեթոդի հետ սերտ կապված ե նաև Միջուրինի այսպես կոչված մենտորի մեթոդը (Հիբրիդ կրթելու մեթոդը): Այս մեթոդը Միջուրինին հնարավորություն կրթելու մեթոդը):

հատկություններ, վորոնք սովորական պայմաններում չելին
արտահայտվում: Ինչպես հիբրիդների գաստիւրակման մեթոդի,
նույնպես և նրա անբաժանելի մենտորի մեթոդի հիբրիդը կազմում
է այն յերևույթը, վոր հիբրիդի ղարգացման և ձևավորման
վրա խոշոր ազդեցություն են թողնում արտաքին միջավայրի
պայմանները:

Մենտորի մեթոդի կիրառումը հիմնված է պատվաստացվի
կամ պատվաստակալի ազդեցությամբ՝ յերիտասարդ հիբրիդների
ղարգացման ընթացքում ուղղված փոփոխությունները ստանալու
վրա:

Այդ առթիվ Միջուրինն ասում են, մեկ կամ յերկու տարե-
կան հիբրիդ տունկը, վոր նոր և ձևակերպվում, շատ մեծ
չափով յենթարկվում և պատվաստակալի ազդեցությանը, և նրա-
նում առաջացած փոփոխությունները հետագայում ժառանգարար
անցնում են հաջորդ սերունդներին:

Միջուրինը մենտորի մեթոդը կիրառեց ձմեռադիմացկունու-
թյունը ուժեղացնելու, հասունացման ժամկետները փոխելու և
պտուղների վորակը լավացնելու համար:

Մենտորի մեթոդի կիրառման լավագույն որինակ և Միջու-
րինի բելֆլոր չինական սորտի առաջացումը:

Ինչպես վերևում տեսանք, «բելֆլոր կիտայկան» առաջա-
ցել և այսպես: «ամերիկյան գեղին բելֆլորը» տրամախաչել են
«չինական խնձորենու» փոշիով, վորից առաջացել և «բելֆլոր
կիտայկա» սորտը, վորի պտուղները փոքր ելին (միջինը 154
գրամ) և շուտ ելին հասունանում (ոգոստոսի 17-ից 25-ը): Այս
յերկու հատկություններն ել ցանկալի չելին, և Միջուրինն առա-
ջագրեց վերացնել նրանց:

Այդ նոր սորտի պտուղները մեծացնելու և ձմռանն ավելի
յերկար ժամանակ պահելու, ավելի ուշահաս դարձնելու նպատա-
կով՝ այդ հիբրիդի զագաթին, վորպես մենտոր, ամերիկյան «գե-
ղին բելֆլորի» կտրոններ պատվաստեց: Այդ մենտորի (զաս-
տիարակողի) ազդեցության տակ 2 տարուց հետո «բելֆլոր
կիտայկան» տալիս եր 222 գրամ մեծության պտուղ և հասու-
նանում եր ոգոստոսի փոխարեն հոկտեմբերին:

Հեռավոր հիբրիդիզացիայի դժվարությունները (ամլուրյան)
վերացնելու միջաւրինյան մերօդները (վեգետատիվ հիբրիդիզացիա,
միջնորդ՝ փուշ խառնուրդ): ա) Միջնորդի մերօդը.—Յերբ ընտը-
լած յերկու հեռավոր տեսակներ՝ վորպես արտադրողներ (ծնող-

Պատվաստակալի (տանձի) աղղեցության տակ այդ կտրոնները (իմնձորի) այնքան են փոփոխում իրենց հատկությունները, վործագիման ժամանակ հեշտությամբ տրամախաչվում են տանձենու հետ:

Այդ մեթոդով Միջուրինն ստացել ե ինձորի մի նոր սորտ «ռենետ բերզամուսնիյ», վորը միջին տեղն ե բանում տանձի և խնձորի մեջ:

Պատվաստակալի և պատվաստացվի խոր աղղեցության որինակներից մեկն ել տանձի և կիտրոնի պատվաստն ե: Միջանց հետ պատվաստված են մեկ տարեկան յերիտասարդ կիտրոնը և տանձը (յերբեմն նույնպես յերիտասարդ): Տանձը կիտրոնի աղղեցության տակ այնքան ե փոխվել վոր դարձել ե մշտագալար և տերեւաթափ չի լինում:

Վորպես Հիբրիդիզացիայի դժվարությունները հարթելու մի ուրիշ մեթոդ՝ Միջուրինը կիրառեց փոշու խառնուրդը: Այդ մեթոդի եյությունն այն ե, վոր խառնում են միջանց հետ մի շարք սորտերի հայրական բույսերի բեղմնափոշիները և այդ խառնուրդով կատարում են փոշուում: Այդ զեղքում վարսանդների ընտրողականության ընդունակության ավելի լայն պայմաններ են ստեղծվում. այդ նպաստում ե ընդմնավորության ակտի նորմալ ձևով կատարվելուն, այսինքն՝ եղ ծնողն ընտրում ե այն փոշին, վոր ավելի շատ ե համապատասխանում իր հարմարողականությանը:

Միջուրինն այս բոլոր մեթոդներին զուգընթաց կատարում եր միշտ խիստ ընտրություն՝ ինչպես ծնողների, նույնպես և ստացված սերնդի մեջ, քանի վոր փոփոխականության որինքն ընդհանուր ե և շեղումները միշտ անխուսափելի յն: Նա ընտրությունը կատարում ե վոչ միայն մի հատկանիշով, այլ կոմպլեքս հատկանիշներով — տերեւների, ցողունների, պառագների հայտնի հատկություններով, բոլոր տարիքներում:

Ակտովմիկ Լիսենկոյի կյանքն ու գրծութեալքալիքը: Լիսենկոն խորհրդացին գիտնականի տիպար ե: Նա խորհրդացին լավագույն դարվենիստ միջուրինիստն ե, վոր հեղափոխական դեր կատարեց բիոլոգիայի և ագրորիոլոգիական գիտությունների տեսական և գործնական ինդիքների պարզաբանման, լուծման ու կիրառման գործում:

Լիսենկոն ծնվել ե 1898 թ. Կարլովկա գյուղում (Խարկովի մարզ): Յերկասոյան դպրոցը վերջացնելուց հետո 1913 թ.

վոր և գիտակցութեն ուղղված փոփոխություններ առաջացնել և այն:

Մենք արդեն ծանոթացանք Լիսենկոյի՝ զարգացման ստադիական տեսությանը: Այժմ ծանոթանանք նրա մյուս մեթոդներին, վորոնք անմիջապես բղիում են զարգացման ստադիական տեսություններ:

Մերդների ընտրությաւնը: Մինչև վերջերս տրամախաչվելիք դույգերի ընտրության դործը հիմնավորված եր Մենդելի սխեմայի: Վերցնում եյին յերկու պատահական ծնողներ այս կամ այն սորտից, ցեղից, տեսակից և այլն, և տրամախաչելով ստանում եյին առաջին սերունդը (հիբրիդը), առաջին սերունդը տրամախաչում եյին և յերկրորդ սերնդի մեջ ուսումնասիրում եյին, թե արդյոք չկմն ցանկալի կոմբինացիաներ ըստ Մենդելի ճեղքման որենքի: Յեթե կոմբինացիաներ չկային, փորձը կրկնում եյին ուրիշ ծնողների վրա, եմպիրիկ ճանապարհով նորից ուսումնասիրում: Այսպիսով տասնյակ տարիներ եյին անցնում, բայց նոր հիբրիդացիոն սորտ չեր ստացվում: Ծնողների ընտրության գործում չկար իսկական ընտրության տեսություն:

Լիսենկոն յեխելով զարգացման ստադիական տեսությունից այդ հարցին մոտեցավ այլ կերպ: Նա նախորոք ուսումնասիրեց ծնողների զարգացման ստադիաները, նրանց պատմությունը միջավայրի տարրեր պայմաններում: Յեկ յեթե այդ ուսումնասիրության հետևանքով պարզվեց, վոր տվյալ ծնողն ունի մեզ հիվ զարգացման ներքին ֆիզիոլոգիական կամ արտաքին անհամապատասխան պայմանների այդ հատկանիշները չեյին կարող արտահայտվել ապա այդ ծնողը վերցվում եր տրամախաչման համար: Լիսենկոն պարզել է, վոր շատ գեպքերում բույսերը յերկար վեգետացիոն շրջան են ունենում, այսինք, ուշահաս են, վորովհետև տվյալ միջավայրում (վայրում) բույսի զարգացման առաջին կամ յերկրորդ ստադիան անցնելու համար պայմանները անհամապատասխան են: Յեթե տրամախաչվելիք ծնողներից մեկը, վորը տնտեսական բույր կարեռ հատկանիշներով ոժտված է, բայց յերկար վեգետացիոն շրջան ունի, վորովհետև արտաքին պայմանները չեն համապատասխանում յարովիզացիայի ստադիան արագացնելուն, իսկ յերկրորդ ծնողը նույնպես լավ հատկանիշներ ունի, բայց նույնպես ուշահաս է, վորովհետև արտաքին պայմանները նպաստավոր չեն լույսի ստադիան անցնելու:

համար, ապա այդ յերկու ուշահաս (յերկար վեղետացիոն շըջան ունեցող) բույսերը արամախաչվելով՝ ստացվում են այնպիսի հիբռիդներ, վորոնք շատ վաղահաս են, հենց առաջին սերնդում դրանց մոտ թե լրւյսի ստագիան և թե յարովիզացիայի ստագիան շատ արագ եր անցնում, քանի վոր հիբռիդի մոտ այդ յերկու զարգացման հնարավորությունը կար:

Յեթե պատահում եյին առանձին ուշահաս բույսեր, կիսենկոն նրանց խոտանում եր և թողնում եր միայն վաղահամները: Այս ձեռվ կիսենկոն և նրա աշխատակիցները մեկ և կեսից յերկու և կես տարում մի շարք վաղահաս գարնան ցորենի սորտեր առաջացրին:

Այստեղ հանդես ե գալիս հիտերողիսի յերեվույթը, այսինքն՝ հիբռիդն իր մեկ կամ մի քանի տնտեսական հատկանիշներով գերազանցում և թե մեկ և թե մյուս ծնողին:

Հիտերողիսի յերևույթը շատ տարածված և ինչպես բուսական, այնպես ել կենդանական աշխարհում: Բայց նրա իսկական պատճառները, ուրեմն և նրան ուղղություն տալու խնդիրը, յերկար ժամանակ անլուծելի ննաց ֆորմալ գենետիկների համար:

Նման փորձ կատարել ե նաև անդիմացի գիտնական Հեմմոնդը ճագարների վրա, Նա նեղ ազգակցական բուժման մեթոդը յերկար տարիներ կիրառելով՝ մի ցեղի ճագարից տարբեր աստիվածանի արգասավորություն ունեցող մի շարք գծեր առանձնացնեց: Նա ընտրեց այդ գծերից յերկուսը, վորոնք ամենացածրեց: Նա ընտրեց այդ գծերից յերկուսը, վորոնք ամենացածրեց: Յիշար հետ զուգավորեց և ստարգասավորությունն ունեյին, իրար հետ զուգավորեց և ստացավ մի հիբռիդ, վորն ուներ յերկու անդամավելի բարձր արգացացված մի հիբռիդ, վորն ուներ յերկու անդամավելի շատ ձագեր եր տալիս, սավորություն (յերկու անդամ ավելի շատ ձագեր եր տալիս, քան ծնողները):

Յերբ նա գրա պատճառը ուսումնասիրեց, տեսավ, վոր ցածր արգասավորության պատճառների մոտ տարբեր են, մեկի մոտ պատճառն այն ե, վոր քիչ քանակությամբ ձվեր են, և արտազրում, իսկ մյուսի մոտ թեև ձվերի քանակը շատ ե, բայց շատ մեծ տոկոսի տարոփեխա յե տալիս, այսինքն բեղմնաբայց շատ պոկան պատճառը պատճառ 85% արգանդում փշանում ե կամ վիզորված սաղմերի մոտ 85% արգանդում փշանում են, մեկի թերությունը մյուծում ե: Յերբ նրանք զուգավորվում են, մեկի թերությունը մյուծում ե: Յերբ նա գուգավորվության միջոցով կոմպենսացիայի մի համապատասխան առավելության միջոցով կոմպենսացիայի յե յենթարկվում, այսինքն առաջանում է հիտերողիսի յերեկութը:

Այս փորձերը նոր սկզբունք են մտցնում ծնողների ընտ-

ըռության գործում, վոր հիմնված և ծնողների նախնական մաս-
բակրկիտ բիոլոգիական ռւսումնասիրության անհրաժեշտության
վրա:

Պալատայտառությունը և հատկապես կարստիլի այլասերման.
պատճառները և նրանց դեմ պայքարելու մերսդները: Վաղուց ի
վեր նկատված եր, վոր հարավային չոր և շոգ շրջաններում
նույնիսկ մշակության լավագույն պայմաններում կարտոֆիլը
տալիս և ցածր բերք: Բացի դրանից, պալարները փոքրանում
եյին: Նկատել եյին նաև, վոր այդ շրջաններում կարտոֆիլի վա-
ղահաս սորտերը ավելի բարձր բերք եյին տալիս, քան ուշահաս
սորտերը: Այդ յերկույթի դեմ պայքարում եյին սիստեմատիկա-
բար, 3—4 տարին մեկ անգամ կատարելով կարտոֆիլի սերմնա-
փոխություն, այսինքն՝ սերմացուն բերում եյին հյուսիսային
ցուրտ շրջաններից, և մշակության մեջ եյին մտցնում վաղահաս
սորտերը: Բայց ուշահաս սորտերն ավելի բերքատու յին, քան
վաղահասները, իսկ հաճախ դրսից սերմացու բերելը կապված եր
մեծ գժվարությունների և ծախսերի հետ: Հիմնվելով ստագիա-
կան զարգացման տեսության վրա՝ Լիսենկոն մի շարք փորձե-
րով պարզեց, վոր հարավային չոր ու տաք շրջաններում կար-
տոֆիլի այլասերման պատճառը պալարների զարգացման և
հասունացման ժամանակ գոյություն ունեցող բարձր ջերմաստի-
ճանն եր, այսինքն՝ բարձր ջերմության շնորհիվ պալարներն
արագ են անցնում իրենց ստագիանները և շուտ ծերանում են:
Յերբ այդ կարտոֆիլը հաջորդ տարին ցանվում է և սկսում է
ծիլ տալ, նրանից դուրս յեկած ծիլերը ծերացած են լինում, վո-
րովհետև նրանք արդեն անցած են լինում զարգացման վորոշ
ստագիաններ: Իսկ ծերացած բույսերը յերիտասարդների համե-
մատությամբ շատ ավելի թույլ են, նրանց կենսունակությունը
պակաս է և դիմացկուն չեն: Պարզ է, վոր նման պալարները տա-
լու յեն իրենց նման թույլ այլասերված ժառանգներ, և այլա-
սերումը քանի գնում, այնքան խորանում է:

Լիսենկոն այդ այլասերման դեմ վորպես պայքարի միջոց
առաջարկեց հետեւյալը. սերմացու կարտոֆիլը տնկել վոչ թե
ցանքի նորմալ ժամկետներում, այսինքն ապրելին, այլ հունիսի
վերջին կամ հուլիսի սկզբներին: Այսպիսի ցանքի համար հողը
պետք է լինի նախապես լավ մշակված, պարարտ և խոնավ: Այս
ժամանակ ցանված կարտոֆիլը պալարները կազմվելու ժամա-
նակը չի զուգադիպում չոր և շոգ շրջանին (հունիս ամսին), այլ

ավելի հով շրջանին (սեպտեմբերին), և կարտոֆիլը զարգանում է նորմալ (չի ծերանում՝ ստադիաները ավելի արագ անցնելու հետևանքով) ու այլասերման յերևոյթներն անհետանում են: Այս մեթոդով բարձրանում է նաև կարտոֆիլի բերքը:

Այս մեթոդն արդեն կիրառվում է մասսայական կերպով:

ԻՆՔՆԱՓՈՇՈՏՎՈՂ ԲՈՒՅՍԵՐԻ ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ՏՐԱՄԱԽՁՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Դեռ Զ. Դարվինը ուսումնասիրելով կուլտուրական ու վայրի բույսերի բազմաթիվ ձեռքը՝ հիմնվելով նաև գյուղատնտեսական պրակտիկայի հարուստ տվյալների վրա, յեկավ այն յեղրակացության, թե որգանական աշխարհում կա մի ընդհանուր որենք, այն եւ ինքնափոշոտումը բիոլոգիապես վասակար ե, իսկ խաչաձև փոշոտումը՝ ոգտակար, նույն բանն ապացուցեցին նաև Տիմիրյադեը և Միջուրինը՝ հիմնվելով բազմաթիվ փորձերի վրա:

Խաչաձև փոշոտվող բույսերն ավելի յեն հարմարված, քան թե ինքնափոշոտվողները, վորովիետե խաչաձև փոշոտվող բույսը հոր և մոր կողմից ստանում է հարմարվելու և փոփոխվելու ավելացած հատկություններ ու ավելի լայն հնարավորություններ, քան թե ինքնափոշոտվողը, վորը հոր և մոր կողմից ստանում է զարգանալու (հարմարվելու և փոփոխվելու) միատեսակ, միակողմանի, ավելի աղքատ հնարավորություններ:

Հիմնվելով Զ. Դարվինի և Միջուրինի աշխատանքների և արտադրությունից վերցրած բազմաթիվ փաստերի վրա, Լիսենկոն ապացուցեց, վոր ինքնափոշոտվող բույսերի սորտերի մաքուր գծերը տարեց տարի մշակվելու ընթացքում այլասերվում են, իջնում և նրանց ընդհանուր կենսունակությունը, թուլանում ե դիմացկունությունը արտաքին պայմանների հանդեպ, ուրեմն, իջնում և նաև նրանց բերքատվությունը:

Այդ ինքնափոշոտվող բույսերի մերմացուն թարմացնելու և նրանց ընդհանուր կենսունակությունը, հետևաբար և բերքատվությունը, բարձրացնելու համար լիսենկոն առաջարկեց՝ ժամանակվությունը, բարձրացնելու համար լիսենկոն առաջարկեց՝ ժամանակամանակ կատարել ներսորտային տրամախաչումներ: Այդ մեթոդի եյությունն այն ե, վոր ինքնափոշոտվող բույսի այլասերված կամ այլասերման ճանապարհին գտնվող սորտի լավագույն անհատները տրամախաչվում են մեկը մյուսի հետ: Վագույն գաշտը, վորտեղ կատարվելու յե ներսորտային տրա-

մախաչում, պետք և առնվազն 100 մետր հեռու լինի տվյալ կուլտուրայի (ասենք՝ ցորենի) ուրիշ սորտի ցանքերից՝ տարբեր սորտերի խաչաձև փողոտումը կանխելու համար:

Նոր սորտի սահմաններում ինքնափոշոտումն արդելելու, բայց տարբեր անհատների (նույն սորտի) խաչաձև փոշոտումը ապահովելու նպատակով՝ կատարվում և լավագույն զաշտերից լավագույն բույսերի ընտրություն և այդ ընտրված բույսերը ներքինացնում են, այսինքն՝ նախքան հասկավարւմը հեռացնում են նրանց առեջները, քանի դեռ ինքնափոշոտումը կատարված չեն: Այդ առեջները հետացված բույսերը բեղմնափորում են նույն սորտի ու ցանքի բույսերի փոշով, վոր քամին ազատորեն ցրում են: Այս ձևով մեկ ժամում կարելի յեն նախապատրաստել մոտ 20 հասկը, վորոնցից կստացվի 200—400 հաստիկ:

Հացահատիկների ներսորտային տրամախաչումից ստացած 10—15 կիլոգրամ սերմը մեկ տարվա ընթացքում կարելի յեն բազմացնել այնքան, վոր յերկրորդ տարին այն ապահովի 100-ից 150 հեկտար տնտեսական ցանք:

Ներսորտային տրամախաչումից ստացված սերմերով ցանք կատարելիս բերքատվությունը բարձրանում է 1—5—5 ցենտներ ամեն մի հեկտարից: Բացի բերքատվության բարձրացումից, ներսորտային տրամախաչումը նպաստում է նաև սորտի ցրտադիմացկությանը, չորագիմացկունությանը և կենսունակությունը բարձրացնելուն: Լավանում և նաև հացահատիկների վորակը—բարձրացնում է սոսնձանյութի պարունակությունը և հատիկների քաշը:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԾԵՐԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Լիսենկոն 1935 թ. բամբակի նոր սորտ (*Ուկրաինայի պայմանների համար*) ստանալու աշխատանքի պրոցեսում նկատել են, վոր ինչպես ջերմոցային, նույնպես և դաշտային պայմաններում բոլոր բամբակի բույսերից մեծ չափով թափվում են նրանց բողբոջներն ու կնդուղները և փոխանակ 20—30-ի՝ մեռած են 1—2 հատ:

Ուսումնասիրելով բամբակի բույսի աճման և զարգացման պայմանները և որինաչափությունները՝ Լիսենկոյին հաջողվեց պարզել այդ յերկույթի պատճառները:

Բամբակի կենտրոնական ցողունի վրա զարգանում են անընդունակ հյուղեր (*մոնոպոտիա*) և բերբի հյուղեր (*սեմպոտիա*): Ան-

բերը ճյուղերը գուրս են գալիս ցածի 3—4 տերևների ծոցից, իսկ ավելի վերեւում թերբիները:

Թեև այդ բերը ճյուղերը բամբակի բույսի կենտրոնական ցողունի վերեւ մասում են առաջանում և կարծես թե կնգուղներ են տարու, բայց վորեւ արժեք չունեն, քանի վոր թափվում են, հետեւաբար խլում են սննդի այն բաժինը, վորը գնալու յեր կնգուղների կազմելուն, վորոնք գտնվում են իսկական բերը ճյուղերի վրա:

Հետեւաբար բողբոջների և կնգուղների թափվելու պատճառն այն է, վոր նրանք սովածահ են լինում, վորովհետև մննդի մեծ մասը կլանվում է անբերը ճյուղերի և վերեւ մասում յեղած բերը ճյուղերի կողմից (վորոնք չեն կարողանում հասունության հասցնել կնգուղները):

Իսենկրն տեսնելով, վոր հարցը սննդանյութի անհավասար բաշխման հետ և կապված, առաջարկեց ազրոտեխնիկական համապատասխան ձեռնարկում, այն եւ ծերհատումը: Այս մեթոդի եյությունն այն է, վոր անհրաժեշտ և արհեստականորեն հեռացնել ներքի անբերը ճյուղերը և կենտրոնական ցողունների վերեւ մասը, վորը կնգուղները հասունության չի հասցնում:

Այդ ձեռնարկումը հնարավորություն է տալիս բույսի վրա պահելու վորոշ քանակությամբ բողբոջներ և սննդանյութը կենտրոնացնելու այդ բողբոջներում, վորավեսգի նրանք ուժեղ կերպով զարգանան, շուտ հասունության հասնեն (մինչև ցրտերի վրա հասնելը), կնգուղները լինեն խոշոր և այդպիսով բերքատվությունը բարձրանա:

Այդ մեթոդի կիրառման շնորհիվ հնարավոր և բամբակի բերքը բարձրացնել հեկտարից 1—4 ցենտոներ և ավելի: Այդ մեթոդն արգեն կիրառվում է մեր բամբակի դաշտերում 1936 թվից սկսած:

Այսպիսով տեսնում ենք, վոր լիսենկոյի աշխատանքները Դարվինի, Տիմիրյագիկի և Միջուրինի աշխատանքների շարունակությունն ու զարգացումն են: Նա գիտության բնագավառում կությունն ու զարգացումն են: Նա գիտության բնագավառում գեն շարտեց հինը—հակադարվինիստական ֆորմալ գենետիկայի փուլ շարտեց հինը—հակադարվինիստական վոչինչ չեցին ատլիս:

Դրույթները, վորոնք պրակտիկային վոչինչ չեցին ատլիս: Ներկայում Դարվինի, Տիմիրյագիկի, Միջուրինի և լիսենկոյի տեսական ու գործնական նվաճումները 100-ավոր յերիտասարդ գիտնականների, հազարավոր խեցիթ-լաբորատորիաների և տասն-յակ հազարավոր կոլտնտեսականների սեփականություն են գարձել:

Այդ բանին փայլուն որինակ կարող և ծառայել ակադեմիկ

Յիցինի բաղմամյա ցորեն ստանալու փորձերը, վորոնք մեծ ապագա
յին խոստանում: Նա սովորական չայիր խոտը տրամախաչելով
ցորենի հետ և մի շարք սերունդներ համապատասխան ընտրու-
թյուն կատարելով, ստացել ե բաղմամյա ցորենի նոր սորտ: Դա
գյուղատնտեսության պատմության մեջ առաջին դեպքն է:

ՍԵԼԵԿՑԻԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Անասունների բուժման գործում սելեկցիայի և ծնողների
ընտրության մեթոդները յուրացնելու համար անհրաժեշտ ե ծա-
նոթանալ մեր խորհրդային դարվինիստ, գիտնական, անասնա-
բույժ ակադեմիկ Իվանովի մեթոդներին:

Պատահական չե, վոր անասնապահության մեջ այն աշխա-
տանքները, վորոնք պրակտիկայի տեսակետից ամենից արդյու-
նավետն են յեղել, կատարվել են Թարվինի և նրա եվոլուցիոն
ուսմունքի հիմնական դրույթների ուղղությամբ: Կուլեշովի և
Իվանովի աշխատանքների հաջողությունները ընտանի անասուն-
ների նոր ցեղեր առաջացնելու գործում հիմնականում բացարզվում
են ընտրության խոր հասկացողությամբ և տեղին ու ժամանա-
կին կիրառելով:

Ակադեմիկ Իվանովը մեր յերկրին տվել ե յերկու բոլորովին
նոր ցեղեր՝ արտադրողական բարձր ցուցանիշներով՝ «ասկանիա-
կան ռամբուլյե» վոչխարի ցեղը և ուկրաինական տափաստանա-
յին սպիտակ խոզի ցեղը:

Այդ նոր ցեղերի ստացման հիմնական մեթոդները հետևյալն
են. մտածված, սիստեմատիկ, անհատական ընտրություն՝ ինչպես
ծնողների (ուժօր), նույնագես և նրանցից ստացված սերունդնե-
րի (ուժօր), խիստ անխնա խոտանում, բուժման և սելեկցիայի
տարրեր մեթոդների ու ձևերի (կոմպլեքսային) տեղին ու ժամա-
նակին կիրառելու հմտություն, գծային սելեկցիայի խելացի
կիրառում, տնտեսական հատկանիշների ճիշտ հաշվառում, անդամ
ամենափոքր շեղումների ողտագործում, յիթե նրանք բավարա-
րում եյին այն պահանջներին, վորոնց ուղղությամբ կատարվում
եր սելեկցիան, վերջապես զարգացման արտաքին ֆակտորների
ճիշտ ըմբռնում, նրանց մանրամասն հաշվառում և ոգտագործում՝
զարգացման ցանկալի արդյունքների հասնելու համար:

Ուկրաինական տափաստանային սպիտակ խողը նա ստացավ

միջնադաշտին հիբրիդիզացիայի (մետիզացիա) միջոցով, այսինքն միայն յերկու խողի ցեղեր զուգավորելով:

Ուկրաինայի տափաստանային շրջաններում խողաբուծությամբ չեյին զբաղվում պատճառաբանելով, թե վորովհետև այդ շրջանները գերազանցապես հացահատիկային են, ուստի հսարավոր չեանսանապահությամբ զբաղվելու:

Մինչդեռ իվանովը գտնում է, վոր հսարավոր և և պետք ե այդ շրջաններում զարգացնել խողաբուծությունը, քանի վոր այնտեղ կա անհրաժեշտ կերի բազա (հացահատիկների ավելցուկներ, յեղիպտացորեն, արևածաղիկների ընտանիքին պատկանող լյուցերն, կերի դդում, սիլոս և այլն):

Տեղական խողերը, վորոնք քիչ քանակությամբ են պահպան գյուղական տնտեսություններում, մի կողմից՝ շատ մանր եյին՝ 100—115 կլո. քաշով, ուշահաս, ունեցին վատ վորակի միս և ճարպ, այն ել քիչ քանակությամբ, չեյին հանում իրենց ստացած կերի ծախսը, գժվար եր նրանց գիրացնել և այլն. մյուս կողմից, սակայն շատ զիմացկուն եյին, մեծ հարմարանք ունեցին տեղի կլիմայական ու տնտեսական պայմաններին, բոլորովին խստապահանջ չեյին և բավական արգանակությամբ ապահովությամբ:

Ցեղական խողերից Ուկրաինայում կային միայն անդիմական սպիտակ ցեղերը, վորոնք Միության համար ընդունված են վորպես ազնվացնող ցեղ, Բայց այդ կուլտուրական ցեղերը տափաստանային միջավայրում իրենց լավ չեյին զգում, նրանց բուծումը շատ գժվար եր, նրանք կորցնում եյին իրենց բարձր վորակական ցուցանիշները, չեյին հարմարվում այդ պայմաններին, վորը խիստ տարբերվում եր Յորկշիրի (նրանց հայրենիքը) պայմաններից, և վերջապես նրանք այլասերվում եյին ու մաքուր գրությամբ ակլիմատիզացիայի չեյին յենթարկվում:

Այս բոլորից յենելով՝ իվանովը խնդիր դրեց ստանալ խողի սոր ցեղ, վորը իր մեջ կենտրոնացներ թե Յորկշիրի և թե տեղականի լավագույն ցուցանիշները:

Ասկանիա-Նովայում տեղական մայր խողը նա դուգավորեց անդիմական Յորկշիրի խողի կերպն կոչված արտադրողով: Առաջին սերնդի խողերը նորից զուգավորեց անդիմական սպիտակ ցեղի արտադրողով, բայց այս անդամ վոչ թե կերպնով, այլ բարոնով: Այդ արվեց յերկու նապատակով, նախ խուսափելու համար նեղ աղդական զուգավորումից, յերկրորդ՝ կերպնի տված սերունդաղդական զուգավորումից:

Ները չբավարարեցին Իվանովի պահանջներին: Յերկրորդ գուգավոռումից ստացած սերունդների մեջ կար մի արու արտազըրող՝ «ասկանիա», վորն ուներ 379 կիլոգրամ կենդանի քաշ՝ լավագույն վորակական ցուցանիշներով:

Այդ արտադրողը նա հետագայում գուգավորեց նրա քույրերի հետ, հետո նաև նրա աղջիկների և թոռների հետ: Հիտագա զուգավորման մեջ Իվանովն ողտագործեց նաև «ասկանիայի» տղաներից № 1 արտադրողը, վորին զուգավորեց նրա քույրերի հետ, բայց այդ զուգավորումը հաջողություն չունեցավ:

Հինգներորդ սերնդից հետո Իվանովն արդեն ստացավ նոր ցեղը, վորը արդեն կոնստանտ եր, ճեղքումներ չեւ տալիս և ուներ հետևյալ առավելությունները՝ համեմատած անդիւականի հետ.

1. Տարվա ընթացքում մայր արտադրողն ավելի շատ եր ծննդարերում:

2. Մտերջ մայրերի քանակն անհամեմատ ավելի քիչ եր:

3. Ամեն մի մորից միջին հաշվով ավելի շատ կենդանի գոջի յեր ստացվում՝ ավելի քան 15% :

4. Գոջիները ավելի լավ եյին աճում ու զարգանում:

5. Հասուն խողերի կենդանի քաշն ավելի բարձր եր:

6. Գոջիների կորուստը մինչև կաթից կերելը ավելի քիչ եր:

7. Գոջիներն անհամեմատ ավելի դիմացկուն եյին և լավ հարմարված տեղական պայմաններին:

Ինչպես տեսնում ենք՝ միջցեղային (տեղականի ու ցեղականի) զուգավորումից ստացած սերունդների միջից հայտարերված լավագույն հայր արտադրող ասկանիան զուգավորվեց իր աղջիկների և թոռների հետ, ուրեմն և կատարվեց 2—3 սերունդների ընթացքում ինքը իդինք, այսինքն նոր ազգակցական զուգավորում՝ առանց վատ հետևանքներ ստանալու: Իսկ մենք վերեւում ասացինք, վոր Դարվինը, Միչուրինը և Լիսենկոն բազմիցս շեշտել են, թե նոր ազգակցական բուծումը ինչպես բույսերի, նույնպես և անասունների մոտ, վատ հետևանքների յե հասցնում և ցեղը, սորտը այլասերում ե:

Ապա ինչո՞վ բացատրել Իվանովի այդ հաջողությունները, վորը վոչ թե վատ հետևանքներ, այլ շատ բարձր ցուցանիշներ ստացավ այդ մեթոդի կիրառումով:

Նախ և առաջ Իվանովն այդ կիրառեց վոչ թե ընդհանրապես վորպես առանձին բուծման ձե, այլ վորոշ նպատակի համար, քանի վոր նա շատ քիչ քանակությամբ կենդանիների՝ միայն մի

քանի խողերի հետ գործ ուներ, ուստի պարզ ե, վոր հաջողությունները ամրացնելու և հարաբերականորեն տեսական դարձնելու համար եր, որինակ, ասկանիա հայր արտադրողի լավագույն ցուցանիշները սերունդներում ամրացնելու համար: Անա այդ եր պատճառը, վոր նա ինքը իդինդ կատարեց գեղի լավագույն հայր արտադրողի կողմը:

Յերկրորդ՝ իվանովը կատարելով ինքը իդինդ, անխնա խոտանում եր կատարում, այսինքն մեծ քանակությամբ կենդանիներ, վորոնք առողջ և ուժեղ կաղմվածք չունեցին, կամ ունեցին այս կամ այն պակասությունը ու չեցին բավարարում իվանովի պահանջներին, սելեկցիայից գուրս եցին թողնվում, ուրեմն կատարվում եր խիստ մտածված ընտրություն ու դաժան խոտանում:

Յերրորդ՝ իվանովը ինքը իդինդ կատարեց միայն 2—3 սերունդ և վոչ թե սիստեմատիկաբար:

Իսկ Դարվինը, Միչուրինը և Լիսենկոն ասում ենին, թե ինքը իդինդը կամ ինցուիտը (բույսերի մոտ) վատ հետևանքներ ե տալիս, յեթե այն կատարվի տարեց տարի սիստեմատիկաբար:

Չորրորդ՝ իվանովը ստանալով մի ամրողջ խուճը իրար հետ աղքակցական կապերով կապված մի խոշոր ընտանիք (խողերի հոտ), շատ լավ գիտակցում եր, վոր այլևս չի կարելի այդ գրությունը հանդուրժել և շարունակել բուժման աշխատանքները ինքը իդինդի համար մեթոդով՝ քանի վոր այդ կիսումներ վատ հետևանքների, ուստի նա ձեռնարկեց նույն ձեռվ նաև մի շարք ուրիշ ընտանիքներ ստանալուն, բայց այդ ընտանիքներն իրար հետ աղքակցական կատարած վայրէ այդ ընտանիքներն իրար հետ աղքակցական կապերով կապված չպետք ել լինելին, և բուժումը պետք ե շարունակվեր առանց աղքակցական բուժման մեթոդի, այլ պետք ե նական գործառքը յեղը, վորն աչքի յի ընկում էր կերպայացուցիչներին, վոր գործառքը յեղը տարբեր ընտանիքների ներկայացուցիչներին, վոր գործ վոչ մի աղքակցական կապերով իրար հետ կապված չելին, այսինքն՝ նա սկսեց կիրառել գծային սելեկցիա:

Ակադեմիկ Իվանովը ստացավ նաև ասկանիական ռամբուլյե վոչխարի ցեղը, վորն աչքի յի ընկում էր կենդանի քաշով և նուրբ վորակի ու մեծ քանակությամբ բրդով:

Այդ ցեղի առաջացման աշխատանքներին նա ձեռնարկել է 1923 թ. նույնպես Ասկանիա-Նովվայում: 12 տարվա ընթացքում իվանովին հաջողվեց ստանալ այդ ցեղը, վորի վորակական ցուցանիշները դդալի չափով ավելացան: Առանձին խոյերը կշռում ելին մինչև 133 կիլոգրամ, բրդի յերկարությունը հասավ մինչև 13 սմ. և բրդի քանակը 14,5 կտ.:

Այդ ցեղի առաջացման համար իվանովս ոգտագործեց ծնողների և սերունդների ընտրության բոլոր մեթոդները, ծնողների ստուգումն ըստ նրանց տված սերնդի, անհատական ընտրության մեթոդը, ինքը իդինդ, գծային սելեկցիա, անխնա խոտանում, զարգացման պայմանների խիստ հաշվառում ընտրության բոլոր հասկաներում, կոնստիտուցիոնալ տիպի հաշվառում և այլն:

Ուրեմն իվանովը տոհմային գործում կիրառեց սելեկցիայի կոմպլեքս մեթոդը, վորով և հասավ մեծ արդյունքների:

ՄԵՆԴԵԼ, ՄԵՆԴԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՅԵՎ ՄԵՆԴԵԼԻ ԶԱՐ

Մենդել (1822—1884) ծնվել և Ավստրիական Սիլեզիայի Գեյցենդորֆ գյուղում: 1855—1869 թ. թ. նախկատարեց իր հայտնի հիբրիդիզացիոն փորձերը բույսերի վրա, հատկապես վոլոոի և բաղեխոտի վրա:

«Բուսական հիբրիդների վրա կատարված փորձեր» աշխատությունում Մենդելը նկարագրում է գեղին և կանաչ վոլոոնի սորտերի, ինչպես և բազեի խոտի վրա կատարած հիբրիդիզացիոն փորձերի 8 տարվա արդյունքները:

Մենդելն իր համառոտ ներածության մեջ խոսում է բույսերի վրա կատարված հիբրիդիզացիոն փորձերի արդյունքների մասին: Դրանից հետո իրավացիորեն հարց եւ տալիս. ի՞նչ է այժմ հարկավոր, անհրաժեշտ են մանրակրկիտ փորձեր, քանի վոր գոյություն ունեցած հետազոտություններից վոչ մեկը չի կատարված այսպես, վոր հաշվեյին արամախաչման հետևանքով ստացված ձևերի անբաժանելիների թիվը, վոր այդ ձևերը խմբավորվեյին հետազա սերունդներում, և փորձ կատարվեր ու հայտաբերվեր նրանց փոխադարձ թվական հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ Մենդելն առաջինն եր, վոր գրեց հիբրիդիզացիոն փորձերում ստատիստիկական մեթոդը կիրառելու անհրաժեշտության հարցը: Այդ անկասկած հանդիսանում է նրա հիմնական ծառայությունը:

Մենդելը արամախաչեց գեղին սերմեր ունեցող վոլոոնի բույսերը կանաչ սերմ ունեցողների բեղմնավոշիով և ընդհակառակն: Նա այդ արամախաչումից առաջին սերմում միշտ ստացավ գեղին սերմեր ունեցող վոլոոն:

Այդ զիտողությունը նրա փորձերի ամենից ակնառու կողմն է, վոր ցույց եւ տալիս, թե հիբրիդների ժառանգած գեղին և կանաչ գույներն իրար չեն խառնվում, ուրեմն և համազոր չեն,

գեղին գույնը գերակշռում ե—դոմինանտ ե, իսկ կանաչ գույնը
նահանջող—ուցիսիվ ե: Այդ փաստը՝ Մենդելի կանոնների սեց
ամենառաջագրավն ու կարևորն ե:

Ուրեմն, համաձայն Մենդելի այս առաջին կանոնի՝ հատկա-
նիշներն իրենց ժառանգման տեսակետից որինաչափորեն անհա-
մաղոր են, միատեսակ չեն: Հետեւարար տրամախաչման հետեւան-
քով ստացված առաջին սերնդի հիբրիդ բույսերի մոտ հանդիս են
գալու կամ զարդանալու յեն մեկ կամ մյուս՝ ծնողի հատկանիշները
—տվյալ գեպքում՝ հատիկի գեղին գույնի հատկանիշը, բայց և այն-
պես հիբրիդն ունի այնպիսի բնույթ, կառուցվածք և հնարավո-
րություն, վոր հետազայում կարող ե տալնակ կանաչ սերմեր ունե-
ցող վոլոռնի բույսեր, այսինքն՝ նրա բնույթը յերկողմանի յի:

Ծնողների գեղին գույնը նշանակենք ՚ տառով, իսկ կանաչը՝
կ տառով, այդ գեպքում հիբրիդը կունենա ՚կ կառուցվածք,
թեև արտաքինապես կլինի գեղին գույնի, քանի վոր վերջինը
դոմինանտ ե:

Բայց ՚կ բույսը, վորը արտաքինապես գեղին ե, տարբերվում է
՚ ԴԻ (իսկական մաքուր գեղին սերմի գույն ունեցող բույս) կառուց-
վածք ունեցող բույսից, դա փաստ ե, քանի վոր այդ բույսերը
հետազում իրար հետ բեղմնավորելիս (ինքնափոշումամբ ՚կ +
՚կ), յերկրորդ սերնդում կհայտաբերվին նաև կանաչ սերմեր տվող
բույսեր: Այն ինչ, յերբ ՚ ՚ կառուցվածք ունեցող բույսերը
բեղմնավորեն իրար հետ, թե առաջին և թե հետագա սերունդնե-
րում միշտ գեղին սերմ ունեցող վոլոռնի բույսեր կստացվեն:

Յեթև ՚կ և ՚կ կառուցվածք ունեցող հիբրիդ բույսերը
բեղմնավորենք իրար հետ, կստացվի վոչ միայն իրենց նման հիբ-
րիդներ, այլև ինչպես նոր, նույնպես և մոր նման բույսեր, այսինքն՝
՚ ՚ ՚ ՚ կ և կ բույսեր: ՚ ՚ կլինի մաքուր գեղին սերմեր ունեցող
բույս, վորից միշտ կստացվի ՚ ՚ կ կլինի մաքուր կանաչ բույս,
(մյուս ծնողի նման), վորից միշտ կստացվի կանաչ սերմ ունե-
ցող բույս. իսկ ՚ ՚ վորը նույնպես արտաքնապես գեղին ե (քա-
նի վոր ՚ ՚ հատկանիշը դոմինանտ ե), իրար հետ բեղմնավորելիս
իր հերթին կրկն կտա ՚ ՚ (մի ծնողի նման), ՚ կ մյուս ծնողի
նման և ՚ ՚ ՚ ՚ հիբրիդներ և այսպես շարունակ:

Սա Մենդելի յերկրորդ որենքն ե—այսինքն՝ ճեղքման ո-
բենքը:

Մենդելը դրանով չբավարարվեց և փորձ արեց գտնել գեղին
և կանաչ բույսերի թվական հարաբերությունները: Յեվ իսկապես

գտավ հետաքրքիր որինաչափություն, այն եւ 3 դեղին և 1 կանաչ բույս և ստացվում յերկրորդ սերնդում, Դկ Դկ բռւյսերը իրար հետ բեղմանափորելիս: Այդ չի նշանակում, թե յուրաքանչօր չորս բռւյսից անպայման 3-ը կլինի դեղին, իսկ մեկը կանաչ: Այդ կանոնը ստափափական և և գործ ունի խոշոր թվերի հետ, այդ դեպքում միայն հանդես կդա այսպիսի հարաբերություն:

Որինակ Մենդելի ուսումնասիրած 8023 սերմերից 6022 դեղին եյին, 2001՝ կանաչ, այսինքն՝ 3,01: 1,01 հարաբերությամբ: Առանձին գեղքերում (տարբեր բռւյսերի մոտ) այդ կանոնից շեղումները հասնում եյին մինչև 32:1 և 20:19:

Մենդելը չբավարարվեց նաև այդ հարաբերությունները տալով, այլ փորձեց բացատրել այդ յերեսույթի պատճառները: Այդ նրա գլխավոր ծառայությունն եւ:

Նա ցույց տվեց, վոր այդ յերեսույթն անխուսափելի հետեանքն է հավանականության տեսության:

Այսինքն արամախաչման հետեյալ սխեմայի համաձայն



Յեթե Դ և Դ կամ Կ և Կ-ի իրար հանդիպումն ընդունենք վորպիս միավոր, այդ դեպքերում Դկ կամ Կդ (դա միննույնն ե) կլինի յերկու: Վորպիս արդյունք նման հավանականության, կատացվի Դդ+2 Դկ+Կկ: բայց վորովհետեւ Դ դոմինանտ եւ, ուրեմն և Դդ, Դկ, Կդ ձեռքը բոլորն եւ լինելու յեն դեղին գույնի և միայն Կկ լինելու յե կանաչ գույնի:

Այս վերջին յերեսույթը հանդիսանում և Մենդելի յերրորդ կանոնը՝ սերունդների մոտ հատկանիշների իրարից անկախ կոմբինացիան:

Մենդելն իր յերկրորդ և յերրորդ կանոնները բացարում և այսպիս կոչված գամետների մաքրության հիպոթեզով: Համաձայն այդ հիպոթեզի, հիբրիդ որդանիզմի մոտ ծնողների հատկանիշները (դեղին և կանաչ) պահպանում են իրենց անկախությունը (չեն խառնվում) և անկախ կերպով, առանձին-առանձին միանում են գամետներ առաջանալիս կամ կազմվելիս:

Մենդելը նույն որինաչափություններն ստացավ, յերբ փոխանակ դեղին և կանաչ գույնի հատկանիշների՝ ուսումնասիրեց

ուրիշ հատկանիշներ, որինակ՝ յերկար և կարճ բույսերը տրամադրած են:

Այս և Մենդելի տեսությունը և նրա յերեք կանոնները:

Վոլոսների վրա կատարած փորձերից հետո նա փորձեր կատարեց նաև բազեխոտի վրա:

Այս դեպքում նա չկարողացավ հայտաբերել վոլոսնի մոտ դիտված որինաշափությունները: Այդ պատճառով ել բոլորովին պատահական չեն, վոր նրա հետագա յերկրագուները մոռացության են տալիս այդ արդյունքները:

Բազեխոտի փորձերի ժամանակ հիբրիդների մոտ հատկանիշները խառնվում են, դոմինանտ կամ ռեցիսիվ հանդես չեն գալիս, ճեղքումներ չեն ստացվում, ուրեմն և ծնողական ձեերը չեն կրկնվում, նույն թվական հարաբերությունները չեն ստացվում, ինչպես վոլոսնի դեպքում:

Մենդելը հիմնվելով այդ փորձերի վրա, ճիշտ հասկացավ իր կատարած դիտողությունների նշանակությունը և նրանց սահմանափակությունը: Նա յերբեք իր կանոնները չհամարեց ժառանգականության ընդհանուր ունիվերսալ որենք, նա տեսավ նրանց գականության ընդհանուր դիտությունը: Դրանից յենելով՝ մենք կարող ենք կիրառման սահմանները: Դրանից յենելով՝ մենք կարող ենք ասել, վոր Մենդելն ինքը մենդելիստ չի յեղել նա իր յեզրակացությունների մեջ յեղել ե համեստ, լայն ընդհանրացումներ չեն կատարել և իր կանոնները չի համարել կենսաբանության ունիւթյան մեջ առաջատար գործություններ, ինչպես այդ անում են մենդելիստ վերսալ որինաշափություններ, ինչպես այդ անգամ չի արել իր կանոնները: Դեռ ավելին, Մենդելը փորձ անգամ չի արել իր կանոնները հակադրելու դարվինիզմին և նրանցով փոխարինելու դարվինիզմը:

Անդիմայի, Գերմանիայի և ուրիշ յերկրների մենդելիստները վոլոսների վրա կատարած Մենդելի աշխատանքների մեջ տեսան բիոլոգիայի նոր դարագլուխի, իսկ մենդելիզմը համարեցին մի ուստունք, վորը փոխարինելու յեր դարվինիզմին: Հանձին մենդելիզմի՝ հակադրաբինիստները փորձ արեցին իրենց պայմանագիրը գործությունների դեմ իրը թե գիտական նորագործություն տվյալների հիման վրա, վոր Մենդելն եր հայտաբերել:

Արսուրդ կլիներ մենդելիզմը համեմատել դարվինիզմի հետ:

Մենդելի աշխատությունը հրատարակվելուց հետո վորեւ ուշադրության չարժանացավ, վոչ վոք նրանով չհետաքրքրվեց: Նա յերկար ժամանակ լուսւթյան մատնվեց: Հանկարծ 1900 թվի

ակղբում Գերմանիայում, ապա և Անգլիայում, Մենդելը նոր ծնունդ և առնում և ամենուրեք խոսում են Մենդելի մասին:

Մենդելը Բետոնին, Դե-Ֆրեիին, Կորրենսին, Զերմակին պետք յեկան Մենդելի աշխատությունները՝ դարվինիզմի դեմ պայքարելու իրենց ուեկցիոն նպատակների համար: Այդ ժամանակները դարվինիզմի դեմ ուժեղացել եր հոգեորականների և կրօնական հայացքներ ունեցող դիտնականների ուեակցիան:

Անգլիայում հայտնի հակառարվինիստ-մենդելիստ Բետոնին չի հաջողվել ժխտել դարվինիզմը և եվլուցիոն ուսմունքը: Այդ առթիվ նրա գրած գիրքն անուշադրության մատնվեց: Նա ամուր կառչեց մենդելիզմին և Անգլիայում ստեղծեց մենդելիստների մի ամբողջ շկոլա: Գերմանիայում վորոշ գեր խաղացնակ շովինիստական ելեմենտը՝ Գերմանացիներն ատում եցին այն ամենը, ինչ անգլիական ծագում ուներ, այդ թվում նաև դարվինիզմը:

Այժմ, ներկա գիտության տվյալների հիման վրա, ըստ եյության քնննենք Մենդելի կանոնները և նրանց նշանակությունը:

Դոմինանտության որենքը, ինչպես ինքը Մենդելը համոզվեց իր բաղեիսոտի վրա կատարած փորձերով, ունիվերսալ յերեւույթ չե:

Դոմինանտության յերեւույթը մեզ համար ընդունելի յեւ վորպես մասնակի դեկա զարգացման և ժառանգականության պրոցեներում: Իսկ մենդելիստները պնդում եյին, թե այն ունիվերսալ որենք և ամբողջ որդանական աշխարհում: Հետագա հազարավոր փորձերը ցույց տվեցին, վոր հաճախ ստացվում ե խառնուրդ և վոչ թե դոմինանտություն, յերբեմն ել միայն մասնակի դոմինանտություն: Շատ դեպքում հիբրիզը նման չե ծնողներին, այլ մի քանի անգամ գերազանցում ե նրանց: Բացի այդ՝ յեթե դոմինանտությունը ունիվերսալ յերեւույթ ընդունենք, այսինքն մի ծնողի նմանությունը կամ միատեսակությունը որենք համարենք, ինչպես մենդելիստները հետագայում ասացին, յերբ տեսան, վոր դոմինանտությունը միշտ բոլոր դեպքերում հանդես չի գալիս, բայց լինում ե միատեսակը, այդ կնշանակել ժխտել փոփոխականությունը, վորը իրոք բոլոր որդանիզմների յուրահատկությունն ե, ինչպես առաջին, նույնպես և հետագա սերունդներում մենք ստանում ենք փոփոխման վորոշ կորագիծ: Յեթե հիբրիզների մեծ մասը նման են ծնողներին (վորովհետեւ հաճախ

նրանց զարգացման պայմանները նույնն են, ինչ ծնողներինը), այդ դեռ չի նշանակում, թե այստեղ փոփոխականության որենքի հիման վրա ուրիշ շեղումներ, ծայրահեղ կողմեր չեն ստացվում:

Բացի զբանից՝ մի շաբթ փորձեր ցույց են տալիս, վոր տվյալ հատկանիշը մի դեպքում դոմինանտ և հանգես դալիս, մի ուրիշ դեպքում, ընդհակառակը, ուցեսիվ եւ Այդ դեպքը մենդելիստներն իրենց ստատիստիկական մեթոդով չկարողացան բացատրել:

Մեր լավագույն խորհրդայլն դարվինիստ գիտնականների՝ Միջուրինի, Լիսենկոյի և ուրիշների աշխատանքները ցույց տվյալն, վոր դոմինանտության յերևույթը հիմնականում կախված ե կոնկրետ միջավայրից, զարգացման պայմաններից: Յեթե այդ պայմանները նպաստավոր են (համապատասխանում են նրա եվլուցիայի ընթացքում ձեռք բերած հարմարողականությանը) տվյալ հատկանիշի զարգացման համար, ապա այդ հատկանիշն ուժեղ կերպով կզարդանա, այսինքն՝ կինի դոմինանտ, իսկ յեթե անպաստ են, ապա այդ հատկանիշը չի զարգանա (կինի ուցեսիվ): Վերևում տեսանք, վոր արհեստականորեն փոխելով զարգացման պայմանները՝ Միջուրինին և Լիսենկոյին հաջողվում եր տվյալ հատկանիշը զարգացնել վորպես դոմինանտ: Հետևարար դոմինանտության և ուցեսիվության յերևույթը պայմանավորված չէ ժառանգական կորպուսկուլներով—գեներով, այլ արդյունք կոնկրետ զարգացման որինաչափությունների, միջավայրի պայմանների:

Մենդելի փորձերում պայմաններն ավելի նպաստավոր եին գեղին գույնի, քան կանաչ գույնի զարգացման համար, իսկ զբանիմքը ֆիզիոլոգիական-քիմիական պատճառներն են, ինչպես ասում ե Տիմիրյազել:

Ողեսայի գենետիկական սելեկցիոն ինստիտուտում փորձեր կազմակերպվեցին հենց այն վորոնի սորտերի վրա, վորոնց վրա փորձ եր կատարել Մենդելը: Շնորհիվ այն բանի, վոր նրանք այդ տրամախաչումը կատարեցին և հիբրիդները զարգացրին, բոլորին այլ պայմաններում (ջերմոցային պայմաններում), ստացվեց ճիշտ հակառակ պատճեր, ինչ վոր ստացել եր Մենդելը՝ ստացվեց ճիշտ հակառակ պատճեր, ինչ վոր ստացել եր Մենդելը՝ նույնպես դոմինանտության նկատմամբ, նույնպես և մնացած կանոնների նկատմամբ:

Գալով Մենդելի մյուս յերկու որենքներին, պետք ե ասել, վոր նրանք վոչ միայն ժառանգականության ընդհանուր որենքը վոր նրանք վոչ միայն ժառանգականության ընդհանուրը, և թե գործնականուշն, այլ, ընդհակառակը, թե տեսականորեն, և թե գործնականու-

բեն վոչ մի նշանակություն չունեն: Նրանք վոչ ոգնում են լուծաբերու ժառանգականության բարդ պրոցեսը, վոչ եվլուցիան են այս կամ այն չափով բացատրում և վոչ ել ոգնում են բուսական և կենդանական նոր՝ ավելի ոգտակար ձևեր ստանալուն: Այդ որենքները ցույց են տալիս, վոր տրամախաչում կատարելիս հատկանիշները չեն խառնվում (գամետները մաքուր են մնում) և յերկրորդ սերնդում նրանք անջատվում են և հեշտությամբ ճեղքվում, այնինչ սելեկցիայի ամբողջ հիմքը և նպատակն այն է, վոր ստանանք այնպիսի ձևեր, վորոնք ունենան (խառնված) յերկու ծնողների որգանապիս միացված լավ հատկանիշները:

Որինակ, Միջուրինի փորձերում տրամախաչելով ցրտադիմացկունություն և պտուղի բարձր վորակ ունեցող սորտերը, մենք ստանում եյինք նոր ձևեր—հիբրիդներ, վորոնք թե ցրտագիմացելուն եյին և թե բարձր վորակի. սելեկցիայի ամբողջ նպատակն այս և Պրակտիկ սելեկցիայի համար սա ճշմարտություն է, իսկ մենդելիստոները պնդում են, թե հատկանիշները չեն խառնվում: Ի՞նչ արժեք կունենային Միջուրինի աշխատանքները, յեթե յերկրորդ սերնդում նրա մոտ ճեղքում ստացվեր և ցրտագիմացելունության հատկանիշները անջատվեյին լավ վորակական ցուցանիշներից:

Վորոշ դեպքում մենք ստանում ենք թե դոմինանտության և թե ճեղքման յերկույթը (մասնակի դեպքերում, վորոշ պայմաններում և վորոշ բույսերի նկատմամբ, ինչպես վորոնի դեպքում), սակայն մենդելիզմն այդ բացատրել չի կարող: Միայն հավանականության որենքը և ստատիստիկական մեթոդները անզորեն բացատրել զարգացման այդ բարդ յերկույթները: Միհացդեռ նրանք բացատրվում են Դարվինի, Տիմերյաղեկի, Միջուրինի և Լիսենկոյի կողմից, վորոնք այդ յերկույթներին մոտենում են զարգացման տեսանկյունից:

Մենդելիստական տեսակետները մեխանիստական-մետաֆիզիկական են: Նրանց մոտեցումը փորմալ գենետիկական և, ավտոպենետիկական և հակադրվում է դարվինիզմին ու զարգացման տեսությանը, պրակտիկ նշանակություն չունի, ուստի մեզ համար անընդունելի յե:

ՄՈՐԳԱՆԻ ՅԵՎ ՄՈՐԳԱՆԻՍՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԳԵՆԵՐԻ
ՄՈՒՏԱՑԻԱՆԵՐԻ, ԺԱՌԱՆԳԵԼԻ ՅԵՎ ՎՈԶ ԺԱՌԱՆԳԵԼԻ
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ, ԳԵՆՈՏԻՊԻ ՅԵՎ ՖԵՆՈՏԻՊԻ,
ՄԱՔՈՒՐ ԳԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Մորգանը և մորգանիստները, վորոնք միաժամանակ և մենդելիստ են, ավելի առաջ գնացին Մհնդելի համեստ փորձերի բացատրության աղավաղումների մեջ և մենդելիստների մետաֆիզիկական-մեխանիստական թեզիսների վրա մի շարք նոր իդեալիստական, ավտոգնենետիկական մեխանիստական թեզիսներ ավելացրին։ Այդ ուղղությունն անվանվեց մորգանիզմ։

Մորգանը ամերիկացի գենետիկ է, վոր 1910 թվից հայտնի յեւ դարձել դրոգոֆիլի ճանձների վրա կատարած իր փորձերով։

Մորգանը ավել է ժառանգականության քրոմոզոմային հիմունքները. ըստ այդ տեսակետի՝ ժառանգակիրները հանդիսանում են կորիզում գտնված քրոմոզոմները և նրանց մեջ գտնվող գենները, — ժառանգականության միավորները, — կորպուսկուլները, (մասնիկները), և վոչ թե ամբողջ բջիջը։ Գենները քրոմոզոմի մեջ դասավորված են ուղիղ շարքով, իրարից անկախ։ Ամեն մի քրոմոզում գտնվում են տարբեր տեսակի հազարավոր գեններ, վորոնք պայմանավորում են համապատասխան հատկանիշների առաջացումը։ Յեթե գենը կա, ուրեմն անպայման նրա համապատասխան հատկանիշը կզարդանա, կդրսեորվի, յեթե չկա, չի դրսեորվի։

Սեռական բջիջների հասունացման ժամանակը յերբ կատարվում է ուղղուկցիոն բաժանում, քրոմոզոմները միանում, փաթաթվում են իրար։ Այդ ժամանակի քրոմոզոմների գենների փոխանակում է կատարվում, այսինքն մի քրոմոզոմի գենը անցնում և մյուս քրոմոզոմին և լողինակառակը։ Այս յերկույթը Մորգանը անվանեց «կրոսինկովեր»։ Յեթե այդ յերկույթը տեղի յեւ ունենում, ապա բացի յերկու ծնորդների հատկանիշներից, հիբրիդի մոտ հանդես է գալիս նոր կոմբինացիա, նոր հատկանիշներ ունեցող սերումք։ Խնչպես քրոմոզոմներն են իրար փաթաթվում և ապա իրարից բաժանվում, այսպես ել գենները կարող են բաժանվել և տալ նույն վորակի դուստր գեններ։ Գեններն ըստ մորգանիստների անփոփոխելի յեն և յեթե փոփոխվում ել են, ապա այդ տեղի յեւ ունենում (բնական կամ նորմալ պայմաններում) 10,000 կամ նույնիսկ 100,000 տարին մեկ անգամ։ Այդ գեպքում տեղի յեւ

ունենում թոփչք՝ մուտացիա, վորն արդյունք և ներքին անձանա-
չելի ավտոգենետիկ պատճառների և վոչ մի կազ չունի արտա-
քին պայմանների կամ ընտրության հետ Յեթե այդ ճանապարհով
փոփոխություններ են առաջանում, ապա նրանք անպայման ժա-
ռանգելի յեն, իսկ յեթե փոփոխություններն առաջանում են ար-
տաքին միջավայրի պայմանների ազդեցության ներքո, նրանք
անժառանգելի յեն: Այսպիսի փոփոխությունները ժառանգելի
մուտացիոն փոփոխություններից տարբերելու համար անվանվե-
ցին մոդիֆիկացիաներ:

Մորգանիստները զարգացրին նաև այսպես կոչված հոմոզի-
գության և հետերոզիգությության հասկացողությունը, ըստ վորի
յեթե զույգ քրոմոզոմները (նրանք միշտ լինում են զույգ) իրենց
մեջ կրում են միատեսակ գեներ, ապա ստացվում ե հոմոզիգություն,
իսկ յեթե նրանք կրում են տարրեր գեներ, ապա ստաց-
վում ե հետերոզիգություն: Հոմոզիգությունը կարող է լինել
գոմինանտ, յերբ յերկու քրոմոզոմների նման գեները դոմինանտ
են, յեթե նման գեները ուղեսիմլիք են, այդ գեպօւմ հոմոզիգո-
տությունը կլինի ուղեսիվ:

Հոմոզիգության կառուցվածք ունեցող որգանիզմներն
ըստ մորգանիստների մաքուր գծեր են, ձեղքումներ չեն տալիս, և
ընտրությունն անզոր ե նրանց նկատմամբ:

Ըստ մորգանիստների՝ արտաքին ուժեղ, անսովոր պայման-
ները, որինակ ունտգենյան ճառագայթները, ուղղին, քիմիա-
կան մի շարք բաղադրություններ և այլն արհեստականորեն ներ-
գործելիս կարող են մուտացիա—ժառանգելի փոփոխություններ
առաջացնել: Այդ փակտորների ազդեցությունը վոչ թե մուտա-
ցիոն փոփոխություններ և առաջացնում, այլ արագացնում՝ և
ինքնուրույն կերպով ավտոգենետիկ (ներքին անձանաչելի ուժե-
րի) ճանապարհով առաջացող մուտացիոն պրոցեսը:

Ըստ այդ տեսության՝ հիբրիդիզացիայի ժամանակ նոր փո-
փոխությունն առաջ ե գալիս այն պատճառով, վոր գեների տար-
բեր կոմբինացիաներ են ստացվում, այսինքն՝ վոչ թե նոր փո-
րակ և ստացվում, այլ արգեն յեղած անփոփոխ գեների տարբեր
կոմբինացիաներ: Տրամախաչող որգանիզմները վորքան հարուստ
լինեն գեներով, այնքան շատ կոմբինացիաներ կստացվեն նոր
հատկանիշներով: Ուրեմն, եվոլուցիոն պրոցեսը տեղի յե ունենում
վոչ թե ընտրությամբ և միջավայրի զարգացման պայմանների
փոփոխմամբ, այլ մի կողմից նման կոմբինացիաներով նոր ձևեր

ստանալով, մյուս կողմից՝ պատահական հազվագյուտ մուտացիոն փոփոխությունների առաջնալով:

Մորգանիստների հասկացողությամբ ֆենոտիպը եր բազմաթիվ հատկանիշների կոմպլեքսով հասուն որդանիզմի վիճակն եւ: Այդ ֆենոտիպն ունի մոզաիկ ձև՝ այն իմաստով, վոր որդանիզմի հատկանիշների մի մասը ժառանգական ե, քանի վոր նրանք պայմանավորված են գեներով (կամ գեների տարբեր կոմբինացիաներով, կամ գենային մուտացիոն փոփոխությամբ), իսկ մի մասն եւ՝ անժառանգելի, քանի վոր այդ հատկանիշներն արդյունք են արտաքին միջավայրի ներգործության:

Մյուս կողմից գենոտիպ ասելով նրանք հասկանում են գեների գումարը, վորոնք կարող են լինել տարբեր քանակի ու վորակի և գտնվում են սեռական բջիջների քրոմոզոմներում:

Ցիտոլոգիան, վորն ուսումնակրում ե բջիջների կառուցվածքը, նրանց մեջ տեղի ունեցող կենսական պրոցեսները, նրանց ֆիզիոլոգիան, փաստորեն գենետիկների ձեռքում վերածվել ե քրոմոզոմոլոգիայի, վորը ծառայում ե գենետիկների հայտաբերած յերեւյթների բացատրմանը, քանի վոր իբր թե վորոշ գուգահեռություն ե նկատվում ցիտոլոգիական (փաստորեն՝ քրոմոզոմների մորֆոլոգիայի) յերեւյթների և գենետիկական յերեւյթների մեջ (ձեղքում, աննորմալություններ, դոմինանտություն, լետալություն և այլն):

Այսպիսով մորգանիզմը հանդիսանում ե իդեալիստական, մեխանիստական, մետաֆիզիկական տեսակետների մի հավաքածու:

ՄԵՆԴԵԼԻՍՏԱԿԱՆ-ՄՈՐԳԱՆԻՍՏԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ, ԱՅՍԻՆՔՆ ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ-ՖՈՐՄԱԼԻՍՏԱԿԱՆ (ԱՎՏՈԳԵՆԵՏԻԿԱ)

ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերեւում նկարագրված մենդելիստական - մորգանիստական գենետիկան փորձալիստական ե, վորովհետև կտրված ե պրակտիկայից: Այդ տեսությանը հարող գենետիկների աշխատանքները մեր սոցիալիստական գյուղատնտեսության պրակտիկ խճողների լուծման տեսակետից անարժեք են: Այդ հասկանալի յե, քանի վոր այդպիսի գենետիկան զարգանում ե իդեալիստական, մեխանիստական, հակադարվիլնիստական ձանապարհով, և նրա կողմանիցները ժխտում են բնական և արհեստական ընտրության ստեղծագործող դերը:

Յեթե գիտության ճշտության չափանիշը պրակտիկան ե, ապա ուրեմն տեսության անարդյունավետությունը պրակտիկայում միաժամանակ և այդ տեսության դատավճիռն ե:

Այդ հարցում մենք պետք ե անշեղորեն առաջնորդվենք ընկեր Ստալինի կլասիկ ցուցմունքներով. «Իհարկե, թեորիան առարկայազուրկ և դառնում, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այնպես, ինչպես պրակտիկան ել կույր և դառնում, յեթե նա չի լուսավորում իր ճանապարհը հեղափոխական թեորիայով. . .» :

«Գիտության տվյալները միշտ ստուգվել են պրակտիկայի, փորձի միջոցով: Մի գիտություն, վորը կտրել և կապերը պրակտիկայից, փորձից, — ել ի՞նչ գիտություն ե: Յեթե գիտությունն այնպես լիներ, ինչպես պատկերացնում են մեր մի քանի պահպանողական ընկերները, ապա այն վաղուց կորած կլիներ մարդկության համար: Գիտությունը հենց նրա համար ել գիտություն և կոչվում, վոր նա ֆետիշներ չի ընդունում, չի վախենում ձեռք բարձրացնելու իր դարն ապրածի, հնի վրա և ուշադիր ականջ և դնում փորձի, պրակտիկայի ձայնին» (ՍՏԱԼԻՆ):

Թորմալ գենետիկների մոտ տեսության և պրակտիկայի կտրվածությունն ե, վոր նրանց աշխատանքը դարձրել և պրակտիկայի համար անարդյունավետ:

Յերկրորդ՝ Փորմալ գենետիկները սխալ են ըմբռնում գենետիկայի հիմնական կատեգորիաները:

Գենետիկայի հիմնական կատեգորիաներն են՝ գեն, հատկանիշ, կարիոտիպ, ֆենոտիպ, գենոտիպ, փոփոխականություն, ժառանգականություն, մուտացիա և այլն:

Թորմալ գենետիկները հակադրում են ժառանգականությունը փոփոխականությանը, ինչպես նաև փենոտիպը գենոտիպին, ժառանգվող փոփոխությունը չժառանգվող փոփոխականությանը և այլն:

Այդ կատեգորիաների ճիշտ ըմբռնումից մեծ չափով կախված ե այդ գիտության հետագա զարգացումը: Բայց գենետիկների մեծագույն մասի կողմից դժբախտաբար սխալ են հասկացվում այդ կատեգորիաները:

Դա արդյունք և այդ գիտության յուրահատուկ զարգացման պատճենն է: Գենետիկան վորպես գիտություն զարգանալով կապիտալիստական հասարակության անկժաման՝ իմպերիալիստական և պոլիսայում, ընականաբար պիտի արտացոլեր ըուրժուական մե-

թողոլոգիայի սահմանափակվածությունը՝ իդեալիզմը և մեխանիզմը:

Գենետիկան վորպես ինքնուրույն գիտություն զարգացավ և ձևակերպվեց 20-րդ դարում, յերբ ծաղկում եյին մի շարք իդեալիստական միստիկական տեսակիւներ, վորոնց նպատակն եր Ժըխտել և փոխարինել Դարվինի տեսությունը։ Դրանց շարքին են պատկանում՝ Եյմերի «ըրտոգենեղը», Նիգելու «ըրտոգենեղի» և իդեալիզմայի տեսությունը, Բերգի «նոմոգենեղը», Ուբորնի «արիոտոգենեղը», Դե-Ֆրիզի «ուտացիոն տեսությունը, Վեյսմանի սաղմնային պլազմային տեսությունը և վերջապես մորգանիզմը ու մենդելիզմը՝ իրենց բոլոր գունավորումներով։

Գենետիկներից վոմանք (Դելոնի, Սապեգին, Պրոմպտով, և այլն) անհաջող կերպով փորձեցին վերանայել գենետիկայի հիմնական կատեգորիաների բովանդակությունը, նպատակ ունենալով դուրս բերել գենետիկան իր կրիպտային դրությունից։ Բայց այդ փորձերը կատարվեցին գենետիկայի նեղ սահմաններում՝ առանց զարգացման որինաչափությունները հաշվի առնելու։ Առանձին գենետիկական դրույթները, կատեգորիաները և հասկացողությունները արտահայտվեցին գիտական ֆրազներով, բայց դրանից նրա բովանդակությունը վրչնչով չփոխվեց։ Նրանց հաջողվեց գենետիկայի սխալների արժատները գտնել, վորպեսզի հնարավոր լիներ նրանց արմատախիլ անել:

Գենետիկներն որգանիզմը պատկերացնում են վորպես կըրկնակի մոզափիկ, գենոտիպը վորպես հատկանիշների հավաքույթ, իսկ գենոտիպը վորպես իրարից անկախ անփոփոխ գեների հավաքածու։ Ըստ այդ տեսակետի՝ որգանիզմները բաղկացած են հատկանիշներից, վորոնց մի մասը պայմանավորված ե գենոտիպով՝ գեներով, վորը ժառանգվում, պայմանավորված ե արտաքին միջավայրով։ Այդպիսով նրանք մոռանում են զարգացող որգանիզմի ամբողջականությունը, խողում են առաջ բերում ֆենոտիպի և գենոտիպի միջև՝ պնդելով, թե գենոտիպն ազդում է ֆենոտիպի վրա, բայց գենոտիպը եվոլուցիայում վոչ մի դեր չի խաղում։ Նրանք փաստորեն գենոտիպը համազոր են համարում քրոմոզոմային ապարատին, իսկ հատկանիշը համարում են ֆենոտիպի մի մասը։

Այդ հարցում գենետիկները չեն հասկանում մի կողմից՝ ամբողջի և մասի փոխհարաբերությունը, մյուս կողմից՝ եյության և յերևույթի միասնությունը։

Ամբողջի ճանաչումը կատարվում է նրա մասերի ճանաչման ճանապարհով, իսկ մասերի ճանաչումը տեղի յեւ ունենում ամբողջության ճանաչման միջոցով: Ամբողջի որինաչափությունը չի կարելի համարել մասերի որինաչափություն կամ նրանց գումարը: Որինակի համար՝ ջրածինը այրվում ե, իսկ թթվածինը նպաստում ե այրմանը, բայց յերկու առոմ ջրածնի և մի առոմ թթվածնի միացումը մեզ տալիս ե մի մոլեկուլ՝ ջուր, վորը վոչ վառվում ե և վոչ ել նպաստում ե այրմանը:

Մենք կարող ենք գենոտիպը համեմատել եյության հետ, իսկ ֆենոտիպը յերկույթի հետ:

Եյության և յերկույթի հակասություններն անհրաժեշտ ե ի հայտ բերել նրանց որյեկտիվ միասնության մեջ: Եյությունն երերի, յերկույթների մեջ ի հայտ չի գալիս իր ուղղակի ձևով: յերկույթն իր իրականացման պրոցեսում մոտավոր ձևով ե եյություն: Դիտական ըմբռնումը հնարավոր ե, յերբ իրար վրա փոխազդեցություն ունեցող զանազան յերկույթների արտաքին կապն ուսումնասիրելով, գալիս ենք դեպի նրանց ներքին կապի հիմքերի, այսինքն եյության ճանաչմանը: Ուրեմն, գենոտիպի ճանաչումը հնարավոր ե գառնում այն դեպքում, յերբ մենք զարգացման արքեր պայմաններում (յերկույթներում) բազմակողմանի կերպով ուսումնասիրում ենք ֆենոտիպը:

Ֆենոտիպից և նրա զարգացման պրոցեսից դուրս գենոտիպ դոյլություն չունի, դա արստրակցիա յեւ:

Մյուս կողմից՝ յեթե տվյալ ֆենոտիպում (յերկույթում) եյությունը (գենոտիպը) տվյալ կոնկրետ պայմաններում իր ամբողջությամբ հանդես չի գալիս, այդ դեռ չի նշանակում, վոր գենոտիպի և ֆենոտիպի մեջ առաջ ե գալիս անհամաձայնություն: Ամեն մի կոնկրետ անհատական զարգացման պայմաններում ֆենոտիպը լրիվ չափով արտացըլում ե գենոտիպի որինաչափությունները: Այստեղ հակասությունն ստեղծվում ե շնորհիվ զարգացման պայմանների փոփոխման:

Յեթե մենք վերցնենք ջրի վերոհիշյալ որինակը (լոկ համեմատության համար), կարող ենք հեշտությամբ ցույց տալ եյության և յերկույթի (գենոտիպի և ֆենոտիպի) փոխհարաբերությունը:

Ջրածնի յերկու առոմի և թթվածնի մի առոմի միացությունով մենք կստանանք մի քիմիական միացություն, այսինքն մի եյություն, վորը միջավայրի տարբեր պայմաններում ուսում-

Նասիրելով կստանանք տարբեր յերեւոյթներ (Փենոտիպեր) նույն քիմիական բաղադրությունից: Մթնոլորտի վորոշ ճնշման և ջերմության վորոշ աստիճանի տակ այդ քիմիական բաղադրությունը (H_2O) հանդես կգա վորպես հեղուկ ջուր, վոր ունի իր բնորոշ հատկությունները. ուրիշ պայմաններում, ասենք 100° ջերմության տակ, հանդես կգա վորպես գոլորշի—գազային վիճակում, իսկ 0° կամ 0°-ից ցածր ջերմաստիճանի դեպքում նա հանգես կգա վորպես սառույց՝ կարծր վիճակում:

Զուրը, սառույցը, գոլորշին տարբեր ֆենոտիպեր են, տարբեր յերեւոյթներ, վորոնք ստացվել են նույն եյությունից (գենոտիպից), այսինքն H_2O -ից: Բայց ինչու նույն եյությունը տարբեր յերեւոյթներում, վիճակներում (ֆենոտիպում) հանդես է գալիս տարբեր ձևերով: Շնորհիվ միջավայրի տարբեր պայմանների:

Որդանիզմի բոլոր հատկանիշները, վորոնք առաջացել են զարգացման պրոցեսում, այսպես թե այնպես պայմանավորված են գենոտիպով, քանի վոր նրանք գենոտիպի զարգացման արդյունք են՝ վորոշ միջավայրի պայմաններում: Որդանիզմը չի կարող ունինալ վորեւ հատկանիշ, վոր անկախ լինի գենոտիպից և արդյունք լինի միմիայն միջավայրի պայմանների:

Զրի բոլոր հատկությունները կախված են նրա ատոմամոլեկուլար ստրուկտորայից: Որինակ՝ այն հանգամանքը, վոր ջուրը սառչում ե $0^{\circ}C$ ջերմության տակ, պայմանավորվում է վոչ միայն ջերմության աստիճանով (միջավայրի պայմաններով), այլ նաև ջրի վորպես վորոշ քիմիական բաղադրության հատկությամբ (գենոտիպով): Սպիրուը, վոր նույնպես հեղուկ ե, այդ ջերմության տակ չի սառչում:

Որդանիզմը վոչ կավ եւ և վոչ ել խմոր, վոր մենք միջավայրի պայմանների փոփոխմամբ նրան մեր ցանկացած ձեզ տանք: Ճիշտ, որդանիզմը փոխվում և փոփոխվող պայմանների ազդեցության տակ, բայց այդ փոփոխումը կատարվում է վորոշ սահմաններում, վոր պայմանավորված ե գենոտիպով: Իսկ գենոտիպն իր հերթին արդյունք ե ելուրցիոն զարգացման, նա ունի զարգացման ուրույն որինաչափություններ:

Ինչպես վոր մենք ասում ենք՝ հասուն որդանիզմի ֆենոտիպ, այնպես ել կարող ենք ասել՝ սերմի, ձվի, թրթուրի, հարսնյակի, նոր ծլած ու ծնած որդանիզմների ֆենոտիպ: Զարգացման ամեն

մի աստիճան ունի իր ֆենոտիպը, վոր կարելի յե ուսումնաւորել:

Ուրեմն, ֆենոտիպը վիճակ չե, այլ պրոցես ե, նա փոխվում ե զարգացման ընթացքում, ուրեմն նա ոնտոգենեզի արտաքին կողմն ե, նա ինքը զարգացման պրոցեսն ե:

Ֆենոտիպերն իրար հետ համեմատելիս՝ կդանենք կոնկրետ տարբերությունները: Այդտեղից առաջ ե զալիս հատկանիշ հասակացողությունը: Ուրեմն, հատկանիշը ֆենոտիպի յուրահատկությունն ե, այսինքն՝ այն, ինչով մի ֆենոտիպ մյուսից տարբերվում ե: Հատկանիշի սպեցիֆիկան պայմանավորվում ե ֆենոտիպով:

Ֆենոտիպի այս կամ մասի վորիխման հետևանքով նոր հատկանիշ ե հանդես գալիս:

Ընտրությունը կատարվում ե ֆենոտիպերի նկատմամբ, հատկանիշների նկատմամբ: Ընտրությունը վոչնչացնում ե անբարենպաստ հատկանիշները՝ այդ հատկանիշները կրող որդանիզմների վոչնչացման միջոցով, վորով և ստեղծվում են նոր հատկանիշներ՝ ավելի հարմարվածների ընտրությամբ:

Որդանիզմներն ուսումնասիրելիս տեմնում ենք, վոր նրանց զարգացումը գնում ե տարբեր ձևերով ու ուղղություններով: Նրանցից ստացվում են տարբեր ֆենոտիպեր ու հատկանիշներ: Պարզ ե, վոր ֆենոտիպը, վորպես զարգացման արտահայտություն, վորևէ բանով պայմանավորված ե, վոր զարգացմանը տեղի յե ունենում տարբեր ձևերով: Զարգացման այդ հիմքը Յոհանս սոնը անվանեց գենոտիպ: Բայ նրա՝ գենոտիպը ուրեմն բան չե, յեթե վոչ սեռական բջիջների սպեցիֆիկ ստրուկտուրան: Ուրեմն, ըստ Յոհանսոնի դուրս ե գալիս, վոր գենոտիպը՝ եյությունը՝ նախորդում ե յերեսույթին՝ ֆենոտիպին: Այստեղ գենոտիպի և ֆենոտիպի կապը պատկերացվում ե ժամանակում միայն, վորը սխալ ե:

Ճիշտ ե, ամեն մի հաջորդական ետապ, զարգացման ստագիա, պայմանավորված ե նախորդով, բայց այդ բոլորովին չե նշանակում, թե ամեն մի նախորդ ետապ պետք ե համարենք եյություն (գենոտիպ) հաջորդի նկատմամբ:

Որդանիզմը զարգանում ե, և այդ պրոցեսում հսի տեղ առաջ են գալիս նոր բազմատեսակ յերեսույթներ (ֆենոտիպեր, հատկանիշներ): Այդ հատկանիշներն ուղղակի կերպով չեն կանխորոշված:

սեռական բջիջներից. Նրանք զարգացման հնարավորություններ են և կարող են դըսկորվել միայն զարգացման պրոցեսում:

Զարգացման պրոցեսից դուրս սեռական բջիջները վոչինչ չեն վորոշում կամ պայմանավորում: Սեռական բջիջները ևս զարգացման մի հտապն են. դիգոտան զարգացման պրոցեսի սկիզբն ե, ուրեմն նա ևս ֆենոտիպ ե: Բայց սեռական բջիջները, ինչպես և մյուս զարգացման հտապները, ունեն համապատասխան ստրուկտուրա, վորի սահմաններում կատարվում են վորոշ կենսական պրոցեսներ—նյութերի փոխանակում, գաղափոխանակում և այլն, վորի հետևանքով հին ստրուկտուրան (սեռական բջիջները) փոխարինվում ե մի ուրիշով, վորն ունի իր յուրահատուկ նյութերի փոխանակումը:

Զարգացման ամեն մի կոնկրետ ստադիայում որգանիզմի սպեցիֆիկ ստրուկտուրան, հորինվածքը, պայմանավորված ե վորոշու տիպի նյութերի փոխանակումով. այդ պրոցեսում նա ինքը փոխարինվում ե մի ուրիշով, և այդպիսով նոր հնարավորություններ են ստեղծվում նյութերի փոխանակման համար:

Այդ ստրուկտուրայի, հորինվածքի և նրա վորոշած նյութերի փոխանակման ձևի անհամաձայնության, հակասության մեջ և գտնվում որգանիզմի զարգացման գաղտնիքը:

Տվյալ կոնկրետ տիպի զարգացման եյությունը (գենոտիպը) այն որենքն ե, վորի միջոցով մի վիճակը փոխարինվում ե մյուսով, մի հորինվածք փոխարինվում ե մի ուրիշով, մի տիպի նյութերի փոխանակումը հաջորդում ե մյուսին: Այսինքն՝ գենոտիպը հանդիսանում է զարգացման պրոցեսի ռեալ հնարավորությունների փոխարինման որենքը: Այլ խոսքով՝ գենոտիպը զարգացման պրոցեսի ներքին հնարավորությունն ե, ներքին բնությունն ե:

Գենոտիպական հնարավորությունները (եվլուցիոն պրոցեսում ձեռք բերված հարմարվողականությունների խտացումը պրոտոպլազմում, իր սպեցիֆիկ նյութերի փոխանակումով, վորն իր ներթին պայմանավորում ե զարգացման տիպը, ուղղությունը) ռեալիզացիայի յեն յենթարկվում զարգացման պրոցեսում, իսկ զարգացման պրոցեսի բնույթից, զարգացման պայմանից (միջավայրից) ե կախված, թե արդյոք այդ հնարավորությունները ահալիզացիայի յենթարկելու յեն, թե վոչ, կամ ինչ չափով են դրսկորվելու: Այդ անհատական զարգացման ձևը պայմանավո-

ըող Փակտորը—ընտրությունն ե: Հետեաբար տվյալ կոնկրետ զարգացման տիպը որգանիզմի և միջավայրի փոխհարաբերության յերկար շղթայի արտադրանքն ե:

Վորաբեսօփի փոփոխենք գենոտիպը և նրան ծնունդ տվյալ ընտրության ուղղությունը, բավական ե փոխել որգանիզմի զարգացման կյանքի պայմանները:

Զիգոռի ետապում որգանիզմի գենոտիպի փոփոխությունը կարող ե սեալիզացիայի յենթարկվել նրա այս կամ այն ստրուկտուրայի կամ մասերի (որինակ քրոմոզոմների) փոփոխման ձևով: Ահա այդ ե պատճառը, վոր Փորմալ գենետիկները քրոմոզոմները համարում են կազմված կորպորատուներից, փոքրիկ մասնիկներից—գեներից, վորոնք այս կամ այն ձևով, իրք թե, պայմանավորում են զարգացումը, առանձին հատկանիշները: Գենի նման պատկերացումը հիմնավորապես սխալ ե: Քրոմոզոմը, իհարկե, իր յերկայնքով ու լայնքով միապաղադ չե, այլ մորֆոլոգիապես տարրեր ե: Բայց այդ չի նշանակում, թե այդ տարրերությունները գեներ են: Գենը այսպես, ինչպես մորգանիստներն են հասկանում, գոյություն չունի: Ի՞նչպես մենք կարող ենք հավատալ, թե այդպիսի բարդ հատկանիշ, ինչպիսին ե՝ ասենք կաթնատվությունը, պայմանավորված ե մեկ կամ մի քանի գեներով, յերբ մենք շատ լավ գիտենք, վոր այդ հատկանիշներն արգյունքն ամբողջ զարգացման պրոցեսի՝ հիմներու միջավայրի պայմաններում: Նրա առաջացման մեջ դեր ունեն բոլոր կենսական փունկցիաները—մարսողական, շրջանառություն, ջղային, հորմոնալ և այլ սիսեմները:

Այդ հարցում Փորմալ գենետիկները բոլորովին անտեսում են զարգացումը, վորի վրա մի կողմից ներդործում և ամենակարող գենը, մյուս կողմից՝ արտաքին միջավայրը, և, վորպես հետեանք այդ ներգործության, զարգացման այդ պրոցեսը ձեռք է բերում վորոշ հատկանիշներ, մասեր, որպաններ:

Այդ վոչնչով չի տարրերվում վիտալիստների տեսակետից, ըստ վորի, զարգացումից դուրս կա մի գերբնական ուժ, կենսուժ, վորը զեկավարում, ուղղություն ե տալիս զարգացման պրոցեսին, պայմանավորում ե նրա բնույթը և այլն:

Ֆորմալ գենետիկների յերրորդ հիմնական սխալն այն ե, վոր նրանք չեն հասկանում ինչպես գենը և նրա դերը, նույնպես և մուտացիան, փոփոխականությունը և նրա դերը եվլուցիայում:

Մուտացիոն տեսության հեղինակը Դեմքրիզն եր, վորը փաստարեն ժխտեց վոչ մայն ընտրությունը, այլ նաև եվոլուցիան։ Հստ նրան՝ դարեր շարունակ տեսակը չի փոխվում, քնած գրության մեջ ե գտնվում (նրա նախամուտացիոն շըջանը), հանկարծ կատարվում ե թուչք և առաջ ե գալիս նոր մուտացիա, նոր ձև։

Մորգանիստների կարծիքով ել մուտացիան առաջանում է քնության մեջ 10000, 100000 տարին մի անգամ։ Բայ նրանց՝ մուտացիան առաջանում ե գեների—քրոմոզոմների փոփոխման շնորհիվ, այսինքն՝ սեռական բջիջներում, անկախ արտաքին միջավայրից, զարգացման պայմաններից, և անզայման ժառանգաբար անցնելու յի սեռունդներին։

Սա հակադարվինիստական տեսակետ ե։ Դուքս ե գալիս, վոր նոր ձեռքը—սորտերը, ցեղերը առաջանում են մուտացիաների միջոցով և վոչ թե ընտրությամբ։ Համաձայն նրանց՝ այստեղ ընտրության դերն այն ե, վոր նա մեխանիկորեն ջոկելու յի վատերը լավերից, վոչնչացնելու յի վատ մուտացիաները և թողնելու յի լավ մուտացիաները։ Այսինքն ընտրությունը հանդես ե գալիս պասսիվ գերում և վոչ թե ստեղծագործող գերում։

Դեմքրիզը ծանոթանալով ինքը աշխատանքներին՝ ստիպված եր հրաժարվել իր մուտացիոն տեսությունից, բայց նրա յերկրպագու ֆորմալ վենետիկները համառորեն չեն հրաժարվում այդ տեսությունից։

Այդ տեսության ֆետիշացումն ե պատճառը, վոր Փորմալ դենետիկները մողի ֆիկացիոն փոփոխություններն անջատում են և համարում են մի առանձին փոփոխման կատեգորիա, վորն առաջանում ե միայն արտաքին պայմանների ազդեցության տակ, վոչ մի կատ չունի գենոտիպի հետ, ուստի և անժառանգելի յի։

Համաձայն այդ տեսության՝ յեթե կովը տալիս ե 5000 լիտր կաթ, ապա գրանից 3000 լիտրը պայմանավորված ե գեներով, գենոտիպով, ուրեմն ժառանգելի յի, իսկ մնացած 2000 լիտրը՝ մողի ֆիկացիոն փոփոխության (արտաքին պայմանների) արդյունք ե, ուրեմն չի ժառանգվելու։ Սա բացարձակ անհեթություն ե։

Յոհաննի մաքուր գծերի տեսությունը, ինչպես վերևում տեսանք, նույնական արտաքի ե, քանի վոր հիմնված ե նույն գենային տեսության, հոմոգիգոտության և վերջապես ընտրության ժխտման տեսակետի վրա։

Այդ կատեգորիային պատկանում են նաև Վավիլովի՝ բույսերի ծագման, կենտրոնների և հոմոլոգիական շարքերի տեսությունները:

Նկատի ունենալով այս բոլորը, ինչպես և այն, վոր մեր խորհրդային դարվինիստների — Միջուլինի, Լիսենկոյի, Ցիցինի, Իվանովի աշխատանքները, վորոնք այնքան արդյունավետ են և հսկայական ոգուտներ են տալիս մեր ժողովրդական տնտեսությանը, հիմնված են Դարվինի դարդացման տեսության վրա և ժխտում են ֆորմալգենետիկների վկրոճիշյալ զրույթները. ակադեմիկ Լիսենկոյի կողմից հարց բարձրացվեց վերակառուցելու գենետիկայի գիտությունը՝ նոր հիմունքներով՝ դարվինիստական հիմունքներով: Մեր սոցիալիստական պրակտիկան այդ անհրաժեշտությունն ակներև է դարձնում:

Ներկայումս փաստորեն այդ կատարվում է ինչպես մեր խորհրդային դարվինիստ գիտնականների, նույնպես և հազարավոր պրակտիկ աշխատողների կողմից:




ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0010532

352

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲԼԻ 204.



Տհան